ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 4 ՍԳՐԻԼ

ԹԻՖԼԻՍ — 1906

ԳՐԻԳՈՐ ԼՈՒԾԱՒՈՐՉԻ
(Նկար Եղիշէ Թադէոսեանի)
իւղաներկ մեծադիր պատկերը (96×66 սանտ.)
տպուած Լայպցիգի Էմիլ Պինկաու նշանաւոր
գործարանում 14 գոյնով։
Գինն է առանց ճանապարհի ծախքի 3 ռ.

Միևնոյն պատկերը, տպուած միևնոյն գիրքով **ԿՏԱՒԻ** վերայ, վաճառւում է իւրաքանչիւր օրինակը **15** ռուբլիով։ Ցանկացողները կարող են դիմել մեզ, ուղարկելով պատկերի արժէքը։ ԳԻՒՏ Ա. ՔՈՀ ԸՂԱՆԵԱՆՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը ոչ մի չը ցպուելու յօդուած չէ վերադարձնում. ցանկացողները յեռ ստանալ՝ կամ պէտք է իւրեանք դիմեն յեռ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախքը։

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ հրամայել ցպագրուելի յօդուածները։

3 Խմբագրութեան ուղարկած յօդուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վերայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անուններն ու օտարազգի բառերը։

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յօդուածները ենթարկել իւր ուղղագրութեան։

5. Թարգմանական յօդուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող ցպուել։

6 Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամակատրոշմ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպեկ դրամով կամ նամակատրոշմով։

8. «Լուսոյի» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեանս առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պատշաճաւոր դիմում անել փոստային վարչութեան։



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 4 ՍԳՐԻԼ

ԹԻՖԼԻՍ — 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

I Ապրել գործել դեռ կուզեմ. ԽՈՍՏՈՒԿ . . 5

II Նոր կեանքի շէմքին. Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ. . 6

III Ցիշողութիւններ. ԵՂԻՇԷ Ա. Ք. ԳԵՂԱՄԵԱՆ . 17

IV Ընկերիս. Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆՑ . . . 28

V Ի՞նչ է բարոյագիտութիւնը. ըստ Մենգերի. ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ 29

VI Աւետարանի եղբայրները. ԼԵՒՈՆ ԽԱՆՋԱՂԷ . 35

VII Ապագայ մարդկութիւն. պրոֆ. Պաօլո Մանտէգացցայի. սօցիալական ֆանտազիա. թարգմ. Մ. ՊՈՊՈՎԵԱՆ 45

VIII Կամպօ-Սանտոյի շունը. Roland Brevannes-ի. Տ. Վ. 62

IX Այս մեր շարատանջ. Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆՑ . 69

X Հայաստան եւ հայերը Ե. եւ Դ. դարերում Քրիստոսից առաջ. ԿԵՍԱՐ 70

XI Ճգնաժամ. Ա. ՁՕՊԱՆԵԱՆ 78

XII ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պետական Դումայի բացումը։ Գանական ճառ։ Նորա պատասխան ուղերձը։ Ներման խնդիր։ Ուղերձի մերժուիլը։ Պետական խորհուրդ։— Գեն. նահանգապետի հրաման։— Ցենզուրայի վերացում։ — Նամակներ խմբագրութեան (չորս)։—Ներքին լուրեր։ —Ստացուած գրքեր 94

XIII ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Փարիզի «Հայկական միութիւն»։ —Կ. Պօլսից։— Հենրիկ Իբսէն. Յ. ԲՈՋԻԵԱՆ . . . 110

XIV ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ . . . 116

XV ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 117

XVI ՅԱՒԵԼՈՒԱԾ

1. Փրեդերի Միսթրալ. Միրէյօ. Պրովանսական քերթուած քնն. ուսումնասիրութեամբ թարգմ. ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆ . . . 49—64

ԱՊՐԵԼ ԳՈՐԾԵԼ ԴԵՌ ԿՈՒԶԵՄ

Մոայլ է հոգիս ինչպէս սեւ գիշեր.
Փոթորկում են ներսս անցեալի յուշեր.
Անցնում են օրերս իբր պղտոր վտակ.
Ու ես չեմ տեսնում նորա խոր յատակ։
Սեւ թուխ ալիքներն միմեանց յետեւից
Օձի ֆշշոցով ժայթքում են խորքից.
Միայար ծայնի այդ անմիտ խառնուրդ
Կազմում է խեղճիս կեանքն անխորհուրդ։
Հոսում է պղտոր վտակն ու ֆշշում.
Նորա յորձանքից առաջ եմ մղուում.
Թէ ո՞ւր է տանում ես այդ չգիտեմ.
Զլինի՞ վաղճանիս խիստ շատ մօտիկ եմ։
Էյ՜ ալիքներ քիչ մը կացէք,
Հարցեր ունեմ Ձեզ տալու.
Վա՜խ ալիքներ մտիկ արէք,
Դարդիս դարման անելու։
Էս ափերից ժեռ ափերից
Ո՞ւր էք փախչում դուք հեռու.
Ո՞ր լեռներից սէգ լեռներից
Ժայթքել էք դուրս ահարկու։
Արդեօք ինձի ճամբի՞ն գտաք,
Մի ժեռ քարի դէմ առաջ.
Ո՞ւր էք տանում այդպէս արագ
Իմ կեանքը խեղճ ու սառած
Էյ՜ ալիքներ քիչ մը կացէք,
Դիրուն աշխարհս վայելեմ.
Կանաչ արեւս դեռ մի՜ մարէք.
Ապրիլ գործել դեռ կուզեմ։

ԽՈՍՏՈՒԿ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔԻՆ[1]

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Բեմը ինչպէս Ա. գործողութեան ժամանակ)

I ՏԵՍԱՐԱՆ

ԼԵՒՈՆ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ

Լեւոն (նստած). Այդ թողնենք, օրիորդ։ Ինչ կասէք Աշոտի ամուսնութեան մասին։

Արուսեակ. Պէտք է ասել որ անժամանակ էր։

Լեւոն. Խօսքս ձեւի և հանգամանքների մասին է։

Արուսեակ. Ախ, դուք ուզում էք իմ կարծիքը իմանալ, թէ արդեօք լաւ կամ վատ է արել եղբայրս առանց մեզ ամուսնանալով և այն էլ հրէուհու հետ։

Լեւոն. Չեմ թագցնում, հէնց այդ է ուզածս։

Արուսեակ. Ես էլ չեմ ուզում թագցնել։ Լսածս առաջին րոպէին իսկ սրտանց շնորհաւորել եմ նրան ու քաջալերել նրա ինքնուրոյն քայլը։

Լեւոն. Իսկ ձերոնք։

Արուսեակ. Մերոնք սգում են, պ. Մենակեան, իւրաքանչիւրը իւր տեսակի. մայրս՝ որովհետև որդին համարձակուել է առանց նրա խորհրդի որև է քայլ անել, քոյրս՝ Աստղիկը՝ որովհետև զրկուել է հարսանիք վայելելու, նոր ընկերուհիներ գտնելու և երբեմն հարսի հետ թեանցուկ ճեմելու զուարճութիւնից. եղբայրս աւելի գործնական և ժամանակի մարդ է, նա կուզէր մի հարուստ հայ խնամի ունենալ, որից սակայն չարաչար կերպով զրկուել է։

---

[1]) *Լուսայ 1906, № 3.*

Լեւոն (ծիծաղելով). Հաւատացէք, օրիորդ, լաւ էք ուսումնասիրել մեր ժամանակի այդ երեք տիպերը ու լաւ բնորոշել։ Բայց հարցը սրանումն է. չփորձեցիք պաշտպանել Աշոտի անհատական իրաւունքը ձերոնց առաջ։

Արուսեակ (տատանւում է). Ես անկարող էի։

Լեւոն. Անկարողութեան մասին խօսք լինել չէ կարող։

Արուսեակ. Ինձ թւում է որ դուք սխալւում էք, պ. Մենակեան։ Դուք պէտք է լաւ իմանաք, որ մեր ընտանիքներում աղջկանը ոչ միայն չեն լսում, այլ և շատ բաների մասին ոչինչ չեն հարցնում։ Մեր աչքից դեռ շատ բան ծածկում են, շատ իրաւունքներից մենք զուրկ ենք և դժբաղդաբար այդ զրկանքները սրբագործել են աւանդութիւնը, սովորութիւնները և եթէ կուզէք նաև օրէնքը։

Լեւոն. Բայց դուք մոռանում էք, օրիորդ, որ զրկանքների առաջ ձեռքերը չեն ծալում նստում, որ իրաւունքների համար կռկորդ են պատռում և բողոքի ձայնը մինչև երկինք հասցնում։ Ամեն մի չնչին աղատութիւն, ամեն մի թեթև իրաւունք ձեռք բերելու համար մարդկութիւնը որքան արիւն է թափել, որքան տնքոցներ, հառաչանքներ են խլացել. որքան առոյգ դէմքեր դեղնել, արիւններ ցամաքել կուռ շղթաների ծանրութեան տակ չորս հատ պատերի խոնաւ գաղջութեան մէջ։ Եւ կանացի սեռը, ամենայն գոհունակութեամբ պիտի ասեմ, անմասն չէ մնացել այդ լարուած պայքարի մէջ։

Արուսեակ. Բայց մեր մթնոլորտը... այլ է այս մթնոլորտը, ուր տեղն ու տեղը թառամում է ամեն մի ծաղիկ, ուր ոտնատակ է դրւում ամեն մի ազնիւ պատուաստ, խաղ հանւում անհատի ամեն մի ինքնուրոյն արտադրութիւն, միտք, արարք։

Լեւոն. Այդ այդպէս է և ոչ ոք չի ժխտում։ Եւ սակայն, օրիորդ, կեանքը կռիւ է և մարդիկ զինուորներ են։ Այդ կեանքի համար Պրոմեթէոսը ժայռերին գամուեցաւ, պատանի Հավլէտը կռուեց, թէև անզօր ու ընկաւ։ Կուլտուրական ազգերի մէջ կինը զինուոր լինելուն արդէն ժամ է, նոյն իսկ արդէն զինուոր է դարձել, իսկ մեզանում դեռ պատրաստւում են այդ կոչման համար և մարտից առաջ թշնամու լոկ տեսքից ընկճւում են, թառամում։ Ես աւելին կասեմ. մինչև զինուոր լինելը մենք անպէտք ենք որպէս քաղաքացի, որպէս հասարակութեան անդամ, որպէս մի ազգութեան զաւակ։ Մենք սովորել ենք իւրաքանչիւր երևոյթի վրայ ժամանակի արանքից նայելով բաւականանալ։ Մենք դեռ անհատական, զուտ եսական կեանքով

ենք ապրում, հասարակական կեանքը մեզ համար խորթ է. մենք ընդհանուր, ազգային շահեր չունենք նոյն իսկ (յանկարծ խօսքը կտրում) բայց գուցէ ձեզ ձանձրացնում եմ, օրիորդ։

Արուսեակ։ (Աւելի խրելով ուշադրութիւնը) Շարունակեցէք, շարունակեցէք խնդրեմ։ Ձեր խօսքերը շատ հետաքրքրում են ինձ։ Խնդրեմ։

Լեւոն. Այո, մենք պահանջել չգիտենք, մենք մեր իրաւունքի տերը չենք, մենք բողոք չունենք, նոյն իսկ տրտունջ։ Մեզ դեռ շատ բան է պակաս, շատ, օրիորդ։

II ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԼԵՒՈՆ, ՆԱԶԻԿ.

Նազիկ (յանկարծակի ներս մտնելով, աշխոյժ) Այո, ճշմարիտ է, շատ բան է պակաս մեզ և ձեզ, ինչպէս և մի մի տոմսակ մի հիանալի երեկոյթի համար, ճոխ բովանդակութեամբ, ուր ներկայ պիտի լինի հասարակութեան այսպէս կոչուած սերը։ Այս առաջինը. իսկ երկրորդը՝ յարգանքներս (սեղմում է Արուսեակի ձեռքը)։

Արուսեակ. Երևի ծանօթ էք արդէն պարոնի հետ չէ՞. Նազիկ (Այդ միևնոյն է)։

Նազիկ. Այդ միևնոյն է։ Սա այնպիսի մի գործ է, որի համար ծանօթութիւնը անհրաժեշտ չ'համարեցի և ուղղակի դիմում եմ երկուսիդ էլ։

Արուսեակ. Ապա ուրեմն խնդրեմ նախ ծանօթանաք. օր. Բիւրապետեան, պարոն Մենակեան (իրար ներկայացնում է։)

Լեւոն (Վեր է կենում և քաղաքավարի կերպով Նազիկի ձեռքը սեղմում) Պատիւ. ունիմ։

Նազիկ. Պարոն Մենակեա՜ն... Ես ձեր մասին վաղուց է որ լսել եմ։ Մեր յաջորդ երեկոյթին դուք անպատճառ պիտի մասնակցէք։ Շատերին եմ խնդրում, որոնք խոյս են տալիս, իսկ ձեզ բաց չեմ թողնիլ։ Ես արդէն յոգնել եմ։ Այս քանիերորդ անգամն է... չի լինում, ձեռք չեն քաշում։ Եւ ոչ միայն այդ, այլ և ուրիշներին խնդրելն էլ ինձ վրայ են ձգում, ասելով որ իրենց ծանօթների շրջանը փոքր է։

Լեւոն (հումորով). Խեղճ օրիորդ։ Մեզանում միշտ այդպիսի վերաբերմունք են ցոյց տալիս գործիչներին։ Եւ ուրեմն, միայնակ լինելով հանդերձ այդքան շատ բան էք շինում։

Նազիկ. Պէտք է երևակայել միայն. այնքան շատ, որ ատանց ինձ չեն կարողանում կազմակերպել և ոչ մի երեկոյթ։

Լեւոն. Բայց թոյլ տուէք իմանալ, յարգելի օրիորդ, ինչ նպատակով են տրւում ձեր երեկոյթները (կամաց Արուսեակին). խնդրեմ լաւ լսէք։

Նազիկ. (տատանուելով) Իսկապէս, պ. Մենակեան, ինքս էլ չգիտեմ. ասում են աղքատ աշակերտի համար, որբի համար, չքաւոր աղջկանց մարդու տալու համար, աղքատ ընտանիքի համար և այլն։ Բայց ինձ այդ չէ հետաքրքրում, այլ լոկ գործը։ Բացի դորանից ինձ խնդրում են և ինձ համար մեծ բաւարարութիւն է լինում, երբ համոզւում եմ, որ գործովս օգնել եմ խնդրողին։

Լեւոն (սառն). Այդ նշանակում է գործին թեթև աչքով նայել, այդ նշանակում է քաղաքացիական պարտքի զգացումը մի կողմը նետել, որ, օրինակ, գերմանացու համար առ նուազն անբարեխղճութիւն է։ Մենք անհաշիւ ազգ ենք և մինչև որ ճիշտ գաղափար չկազմենք քաղաքացիական տարրական պարտականութեան և իրաւունքի մասին ու չսովորենք մեր կեանքի ուղն ու ծուծը դարձնել այն, չենք կարող աւելի բարձր բաների ձգտել։

Արուսեակ. Շատ ճշմարիտ է. Օ՜, պ. Մենակեան, որքան ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալու համար։

(Դրսում իրարանցում, բոլորը վազում են դէպի պատուհանները)։

Նազիկ (սարսափած). Այս ի՞նչ է Տէր Աստուած։

Արուսեակ. Կնոջ հեծկլտանք ու անզօր սպառնալիք։

Նազիկ (յետ է դառնում պատուհանից). Լսո՞ւմ ես, Արուսեակ, պոլիցիականի աղաղակ ու բարկութիւն. (դարձեալ նայում է պատուհանից)։

Արուսեակ. Ոստիկանների մարակներ։ Օ՜, Աստուած, երբեմ դարձեալ խեղճութիւնն է աղաղակում։

Լեւոն (Պատուհանից դառնալով. վճռականօրէն)։ Պէտք է գնալ։ (վերցնում է գլխարկը)։ Ներեցէք, ես ստիպուած եմ գնալ։ Ցտեսութիւն։

Արուսեակ (նրա ետեւից). Պ. Մենակեան, խնդրեմ մեզ լուր տուէք։

Լեւոն. Մեծ ուրախութեամբ, օրիորդ։

Նազիկ. Ես էլ գնամ։ Քո տոմսակը ես Աստղիկին կտամ, իսկ այս պարոնին ես անպատճառ պիտի հանդիպեմ և տոմսակ տամ, ձեռքիցս ոչ ոք չ ուզում փախչել։ Ցտեսութիւն (գնում է)։

III ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ (մենակ).

(Երկար լռութիւնից յետոյ)։ Աչքերս բացւում են, Աստուածս։ Աշխարհս, մարդիկ, այլ կերպ են երևում ինձ այժմ։ Ո՞րտեղ էի ես մինչև այժմ։ Կեանքը կռիւ է, ասաց։ Այո, կեանքը կռիւ է և եղբայրս՝ Համբարձումը և քեռիս՝ այդ ծաղրածու ալևորը զինուորներ են և կռւում են իրենց համար ինձ դէմ, մօրս դէմ, իրար դէմ, ամեն մէկը իւր շահի, իւր իրաւունքի համար։ Իսկ ես։ Այո, ես էլ կռւում եմ, կռւում սեպհական մտքիս հետ, մարտնչում հոգուս հետ։ Ինձ համար ես գայլ եմ դարձել։ Իսկ ուրիշների՞ դէմ։ Կռւում եմ, կռւում եմ լացով, հեկեկանքներով, սեղմած հառաչանքներով։ Ուրիշների առաջ ես գառն եմ։ Բայց ես նոր եմ հասկանում այս բոլորը. ներեցէք ինձ, մարդկային անհատական իրաւունքների համար պայքարող ու ընկնող զոհեր։ Ես նոր պիտի ապրեմ, սրանից յետոյ, որովհետև ես վերածնուեցայ. ինձ վերածնեց այս հանդիպումը, որպէս մի փարոս միապաղաղ անփառունակ կեանքիս ովկիանում։ Շնորհաւոր նոր կեանք։

IV ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ԵՒ ԱԹԱՆԷՍ

Աթանէս. (Ներս մտնելով լսում է Արուսեակի վերջին խօսքերը)։ Այո, ծիծեռնակս, շնորհաւոր նոր կեանք։ Վաղուց է որ քեռիդ իւր ծիծեռնակից այդպիսի լաւ խօսք չէ լսել։ Ճշմարիտ է, կեանքս դեռ չէ հնացել, որովհետև ես թոյլ չեմ տուել այդ, սակայն միշտ ուրախութեամբ եմ լսել ուրիշներից այնպիսի խօսքեր, որոնք նոյն այդ կեանքն են փառաբանում։ (Նստում) Սակայն ցաւօք սրտի պիտի ասեմ, ծիծեռնակս (կուրծքը օրօրելով) որ այդպիսի խօսքերը և նրանց ասողները հետզհետէ փչանում են։ Ով գիտէ, գուցէ քեռուդ մէջն էլ կնուազեն նրանք ու կհանգչեն, բայց ես, քանի ուշքս վրաս է, (բռունցքներ անելով), լաւ կը պահեմ ազատ ձգտումները։

Արուսեակ. (ծիծաղում է) Բայց, սիրելի քեռի, (փաղաքշում է) ինչ հասկացար իմ խօսքերից, ես ինչ նոր կեանք եմ շնորհաւորում և ուզը։

Արուսեակ. Մեր հոգիները ծիծեռնակս, երևի խօսել են-

իրար հետ։ Ես եմ բերել քեզ այդ նոր կեանքը և երևի դու զգացել ես այդ։

Արուսեակ. Գեղեցիկ. բայց կուզէի իմանալ թէ այդ ի՞նչ կեանք է քեռուս բերածը։

Աթանէս. Առաջ դու ասա, յետոյ ես։

Արուսեակ. Չէ, առաջ թող քեռիս ասէ։

Աթանէս. Ամուսնութիւնն է այդ նոր կեանքը, ծիծեռնակ։

Արուսեակ. (գետնին նայելով) Միանգամայն սխալ էք։ Ես չէի կարծում, որ քեռիս այդպիսի կարծիք կունենայ իմ մասին։

Աթանէս. Դուցէ ես սխալ եմ։ Բայց ժամանակն է, որ քեռիդ այդ ցանկանայ քեզ համար։ Ժամանակն է, որ ծիծեռնակս իւր սեպհական բոյնն ունենայ, որի մէջ նստի անկախ և մի այլ ծիծեռնակի աշխատանքի ուղարկէ։

Արուսեակ. Այդպիսի ծիծեռնակ ես արդէն ունիմ, որ իմ եղբայրն է։ Իսկ ուրիշի կարօտութիւնը առ այժմ չեմ զգում։

Աթանէս. Նա մի ուրիշի ծիծեռնակը պիտի լինի, իսկ քեզ համար արդէն գտել եմ մէկը, մի սիրուն, աշխոյժ, թռչող և որ գլխաւորն է հարուստ ծիծեռնակ (ներս է մտնում տիկին Աննան)։

V ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԱԹԱՆԷՍ ԵՒ ԱՆՆԱ

Աթանէս (ծաղրով)։ Ա՜, յարգանքներս Տիկին Թաթոսեանին։

Աննա. Ախ, Աթանէս, Աթանէս, ոչ մի անգամ չուզեցիր դարդս իմանալ։ Աշոտն էլ մի կողմից թունաւորեց կեանքս։ Այլ ևս ես չեմ տեսնիլ նրան...

Աթանէս. Աշխարհիս երեսին եթէ մի լաւ կին-արժատ կայ դա հրէուհին է։ Ես նրանց լաւ եմ ճանաչում։

Աննա. Մարդու սրտի հետ գնա, Աստուած սիրես։

Արուսեակ... Բայց դու որտեղից գիտես այդ, քեռի։

Աթանէս. Ի՞նչը։

Արուսեակ. Որ հրէուհին աշխարհիս ամենալաւ կին-արժատն է և որ կողմով է լաւ։

Աթանէս. Այդ քո իմանալու բանը չէ։ Դու դեռ քո նոր կեանքի մասին խօսիր։

Աննա. Մէկի քեռին որ դու լինիս, ի՞նչ կլինի։

Աթանէս. Եւ սակայն կինս ինձ սիրում է և շատ է սիրում։

(Արուսեակին) Այնպէս չէ՞, ծիծեռնակս։ Իսկ ես ուզում եմ իմանալ քո նոր կեանքը, որ շնորհաւորեմ։

Աննա (աշխոյժ) Աստուած իմ... Աթանէս։ խէր լինի։ Ուրախ լուր կա՞յ, ինչ է։

Աթանէս. Կայ, Աննա, կայ։ Դու դեռ յանդիմանիր ինձ։ Բայց Արուսեակը մի նոր կեանք է գտել, թող տեսնենք ինչ բան է։

Արուսեակ. (մի կողմ) Այլ ևս չեմ քաշուիլ... ուղղակի պիտի պահանջեմ... (բարձր) Մայրիկ, քեռի, ամուսնութեան մասին խնդրում եմ... միանգամայն լռենք։

Աննա. (դողդոջուն) Բայց ինչո՞ւ ես տանջուում ձեր ցաւով, քո ցաւով, Աշոտի ցաւով, Համբարձումի ցաւով։ Ո՞ր հարցնողի բերանը ցաքեմ։ Ո՞ւմ դէմ եմ յանցանք գործել։

Արուսեակ. Եռ ցաւ չունեմ, մայրիկ։ Ցաւ կստանամ, եթէ շարունակէք ձեր ասածը պնդել։ Դու միայն աշխատիր, խնդրիր, եղբօրս, որ միջոց տայ ինձ շարունակելու ուսումս, որից ահա մէկ տարուց աւելի է զրկուած եմ։ Ես դեռ սովորել եմ ուզում, ահա ցաւս։

Աննա. Եւ ի՞նչ կասեն մեզ։

Աթանէս (խորամանկ երկդիմի) Մատով ցոյց կտան տիկին Թաթոսեանին, կասեն աղջկանը զագրանիցա ուղարկեց։

Աննա (լսելը դնելով) Զե՞ն ասիլ, որ պառաւեց տանը մնաց ու նոր ուսում առնելու գնաց։

Արուսեակ. Ոչ ոք իրաւունք չունի խօսք անգամ ասելու։ Իսկ դուք պէտք է արհամարհէք ամեն մի յիմար բարբանջանք։ Ես այս ամբողջ տարուայ ընթացքում խլացրել եմ ձեր ականջները իմ թոյլ բողոքով և միշտ ընկճուել ձեր սառն, սիրտ մաշեցնող մերժումով։ Այժմ ինձ մնում է ուղղակի պահանջել և այն քո միջոցով, քեռի։ Խնդրում եմ, խօսիր Համբարձումի հետ, համոզիր նրան։ (Ներս է մտնում Մենակեանը)։

VI ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԱՆՆԱ, ԱԹԱՆԷՍ ԵՒ ԼԵՒՈՆ։

Լեւոն. Յարգանքներս բոլորիդ։ (Ձեռք է տալիս Արուսեակին և Աննային)։

Արուսեակ. Օ՜, բարև Ձեզ, պ. Մենակեան։ Ես ձեզ բաւական ժամանակ սպասեցի։

Լեւոն. Բանն այնպէս եղաւ, որ երէկ գալ անկարող էի։

Արուսեակ. Ախ, քեռուս հետ ծանօթ չէ՞ք։ Խնդրեմ ուրեմն ծանօթանաք։ Գ. Մենակեան (իրար ներկայացնում) Քեռիս։

Լեւոն. Գատիւ ունիմ։

Աթանէս. Աթանէս Մարկոսեան։ Շատ ուրախ եմ։ (Իրար ձեռք սեղմում են)

Աննա (վեր է կենում) Միք գնալ, Աթանէս, քեզ հետ խօսելիք ունեմ։ (կամաց) Տէր դու յաջողեցնես (յետ է նայում ու դուրս գալիս)։

Աթանէս. Ցտեսութիւն պարոն։ (գնում է)

Լեւոն. Ցտեսութիւն. (նստում է)

VII ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԼԵՒՈՆ

Լեւոն. Ցարգելի, օրիորդ, ես եկայ խոստումս կատարելու։

Արուսեակ. Որքան ճշտապահութիւն, որքան բարեսրտութիւն։

Լեւոն. Դրանով ես յարգել եմ ինքս ինձ, կատարելով պարտքս, որը յանձն էի առել կամաւ։

Արուսեակ. Երանի թէ ամէն ոք պարտականութեան մասին այդպիսի ճշգրիտ հասկացողութիւն ունենար։

Լեւոն. Խնդրեմ։ Նախքան իսկական խնդրին անցնելը պիտի ասեմ, օրիորդ, որ մարդիկ գաղանանում են։ Սովորաբար ասում են, որ քաղաքակրթութիւնը մարդկանց ազնուացնում է, բարձրացնում։ Գուցէ իսկական քաղաքակրթութիւնը, որ դեռ չէ եկել ըստ իս, այդ կանէ, իսկ մեր քաղաքակրթութիւնը ուղղակի փչացնում է նախկին միամիտ ժամանակից մնացած բարեսրտութիւնը, սէրը, հաւատը, կարեկցութիւնը և այլ այսօրինակ առաքինութիւնները։

Ես հեռացայ խնդրից։ Գնում ներս եմ մտնում այնտեղ, աղմուկի վայրը-մի ներքնայարկ, նա այստեղից կարծեմ հեռու չէ։ Եւ ի՞նչ։ Դատական ոստիկանը ամենայն սառնասրտութեամբ կրում է տան գոյքը առանց ուշադրութիւն դարձնելու խեղճ կնոջ աղիողորմ արտասուքներին, փոքրիկ մանուկների սարսափահար ճչերին, որոնք անշուշտ, թէև մութ կերպով-գիտակցում էին, թէ ինչ սև պատուհաս է բերում իրենց գլխին։

Արուսեակ. (նուաղում է) Ա՜խ։

Հեւոն. Գուցէ վատ է ազդում ձեզ վրայ և կուզէիք որ դադարեցնեմ։

Արուսեակ (ուղղուելով) Խնդրեմ, խնդրեմ շարունակէք։

Հեւոն. Գէտք է պնդուել, օրիորդ, ոչ միայն լսելու այլ և տեսնելու համար այդ բոլորը-մութ, մոռացուած աշխարհի այդ պատմութիւնները։ (նախկին տօնով) Մի ուրիշը, երևի պարտատէրը, արձակում էր տոնտիրոջ արծաթեայ գօտին, իսկ ոստիկանական պաշտօնեան հանում էր նրա չուխան։ Սիրտս սկսեց կարատուիլ մանաւանդ այն ժամանակ, երբ գրուած իրերը դուրս տանելիս խեղճ կինը կախ ընկաւ մի կապերտից ու սնդուկից։ Նա աղաղակում էր, նա բաց չէր թողնում. որովհետև նա իւրն էր և ոչ ամուսնունը, իւր օժիտն էր։ Դատական ոստիկանը հարցական հայեացք ձգեց պարտատիրոջ վրայ, երևի իմանալու համար թէ կկամենայ խնայել, բայց սա ձեռքի մի նշանով վճռեց չխնայել։ (բարկացած)։ Ի՞նչ կանէիք դուք այս դէպքում, օրիորդ, ի՞նչպէս կվարուէիք։

Արուսեակ. Սիրտս ճմլւում է, պ. Մենակեան։ Ես ոչ միայն ներկայ չեմ եղել այդպիսի տեսարանների, այլ նոյն իսկ չեմ կարդացել այնպիսի նկարագրութիւն, ինչպիսին ձերն է։

Հեւոն. Փորփրեցէք կեանքը և շատ նոր բան կտեսնէք ու կզգաք։ Չէք կարող, անշուշտ, ենթադրել, թէ ինչ արի ինքնաբերաբար։ Արիւնս եռում էր, ու սիրտս կարծես թրպրտում թռչունի նման կրծքիս տակ, մի կերպով այնտեղից դուրս ցատկելու համար։ Ես գազան դարձայ։ Ձեռքս ակամայ բարձրացաւ ու մի սոսկալի ոյժով ցած իջաւ պարտատիրոջ գլխին։ Եւ թէև նա ինձնից աւելի ուժեղ գտնուեց և յարձակուեց վրաս ու ոստիկանները հազիւ կարողացան մեզ բաժանել, սակայն դրա հետևանքն այն եղաւ, որ կապերտը ու սնդուկը ազատուեցան անսիրտ վաշխառուի ճանկերից։

Արուսեակ. Օ՜, պարոն Մենակեան, ինչպէս սիրտ արիք ոստիկանի ներկայութեամբ... Եւ Ձեզ չբռնեցին։

Հեւոն. Եթէ այդ տարօրինակ վարմունքները չլինեն, օրիորդ, որոնց զգոյշ սագերը յանդգնութիւն կկոչեն, երբէք չի լսուիլ արդարութեան ձայնը և չարութիւնն ու ոճրագործութիւնը լուռ կյաղթանակեն միշտ։ Այժմ ես հսկողութեան տակ եմ, գուցէ ինձ շատ խստօրէն կդատեն, բայց հոգս չէ, միայն հանգիստ լինեմ, որ արդար գործ կատարեցի, իրաւաբան եմ կըպաշտպանեմ ինձ և կամ...

Արուսեակ. (կենտրոնացած լռութիւնից յետոյ յանկարծ ոտքի է կանգնում եւ սրտով). Պ. Մենակեան, ես էլ վճռել եմ այդպիսի

դիմումներ անել ինքս ինձ. «պաշտպանիր քեզ կամ»..., «եղիր կամ»... թէև դժուար է, դժուար, պ. Մենակեան (ընկնում է աթոռի վրայ կարծես նուաղած)։

Լեւոն. Ինձ համար էլ դժուար էր, օրիորդ, սակայն ես սովորեցի և սովորեցնողը, չէք կարող երևակայել, ձեր եղբայրն էր Աշոտը։ Ես նրան շատ բան եմ պարտական։ Օ՜, նա որքան անողոք է։

Արուսեակ. Աշոտը, եղբայրս։ Իսկ ես... Ինչո՞ւ այսպէս։ Մեր տունը... Եւ սակայն Համբարձումն էլ ունի այդ ոյժը թէև... (լուռիւն) Օ՜, սիրելի Աշոտ, անշուշտ ինձ էլ կսովորեցնես անողոք լինել։ Ես էլ գամ, չեմ մնալ։ Կը յաղթեմ և կամ... (անցնում նստում է աթոռի վրայ մի անկիւնում)

VIII ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ. ԼԵՒՈՆ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՒ ԱԹԱՆԷՍ։

Աթանէս. (ներս է մտնում Համբարձումի հետ)։ Ես քեզ ասում եմ, քրոջ տղայ, որ չենք սխալուիլ։

Համբարձում։ Ես նրա ապագայ պահանջներից եմ վախենում։ Իսկ ինքդ լաւ գիտես, որ ես պահանջ լսելու և մանաւանդ կատարելու կարողութիւն ու ցանկութիւն չեմ ունենում երբէք։

Աթանէս. Այդ բոլորը դու ինձ թող։ Քեռիդ այնպիսի հին գայլ է, որից ոչ միայն սատանաները, այլ և դժողքի նախագահը՝ Սադայէլն էլ կվախենայ։ (Զորս կողմը նայելով) Ա՜, այստեղ մարդ է եղել։

Համբարձում։ Տեսնում է Լեւոնին, զունատւում է ու սեւեռում աչքերը նրա վրայ։ Լեւոնը կանգնում է եւ այդպէս մնում անշարժ) դուք սրա մասին էիք ասում, քեռի (բարկացած)։

Աթանէս. (Կամաց) Դէ լաւ, կամաց։

Համբարձում (իրեն կորցնելով)։ Արդեօք դուք գիտէ՞ք, պարոն, որ ես ճրագով էի մեր գալիս ձեր ետևից և այդ բոլորից յետոյ դուք համարձակուեցաք ոտք կոխել մեր տունը։

Արուսեակ. (զունատ, երկիւղով) Ի՞նչ է պատահել, եղբայր։

Համբարձում. Լռիր դու։

Լեւոն. Սա ձեր եղբայրն է, օրիորդ։ (լուռիւն) Ցաւում եմ, որ այդ խօսքերը այստեղ եմ լսում, ձեր յարկի տակ և... ձեր ներկայութեամբ. (ուղղւում է դէպի դուռը)։

Համբարձում (առաջը կտրում է) (գոռալով) Ո՞ւր։

Լեւոն. (կանգ է առնում). Ասացէք, խնդրեմ, շուտով, ինչ ասելու էք։

Աթանէս. (Մէջ է ընկնում ու բռնում Համբարձումին) Թող հեռանայ, քրոջ տղայ, յատկապէս խնդրում եմ։ (Լեւոնը գնում է)

Արուսեակ. (յուզուած) Բայց ասացէք, թէ ինչով է մեղաւոր նա։

Համբարձում. Լռի՛ր, ասացի։ Դու երևի կսկսես նոյն իսկ պաշտպանել նրան, եթէ ասեն քեզ, որ նա ձեռք է բարձրացրել եղբօրդ վրայ, այն եղբօր, որի միտքն ու աշխատանքը օրն ի բուն դէպի Ձեզ են ուղղած։

Արուսեակ. (գլուխը երկու ձեռքով բռնելով) Ա՜, հասկացայ, ուրեմն այն սոսկալի տեսարանի հերոսը...

Համբարձում. Ա՜, հասկացի՛ր... Հասկացիր, որ այն սրիկային դու չպիտի տեսնես այլեւ։ (Դուրս է գալիս քեռու հետ)

Արուսեակ. (Նրանց ետեւից) Նա սրիկա՞յ... չարութեան դէմ կռուողը, արդարութեան զինուորը... Ոչ, նա սրիկայ չէ։

Աթանէս. (քեռի ետեւից) Այդպիսիներին տուն չպէտք է թողնել, ահա թէ ինչ։

IX ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ (մենակ)

Ախ, Աստուած իմ, ինչո՞ւ այդչափ թոյլ ես ստեղծել ինձ. Ինչո՞ւ ես տանջուիմ ողորմելի ստուերս ետեւիցս քաշ տալով այս չորս հատ պատերի մէջ, այս ճնշող, գետնին սեղմող առաստաղի տակ, իսկ միւսները՝ Քնարիկը, Նաղիկը, նոյն իսկ միւնոյն պատերի մէջ ապրող քոյրս՝ Աստղիկը թռչկոտեն որպէս ազատ թիթեռներ։ Ինչո՞ւ չկարողանամ ապրել ազատ ու ինքնուրոյն, սեպհական պահանջներով և իրաւունքներով։ Ինչո՞ւ չպիտի կարողանամ երևան հանել զգացմունքներս և ասել ճշմարտութիւնը-կանգնել եղբօրս առաջ ու որոտալ. «Դու անխիղճ ես, դու անիրաւ ես, դու բռնաւոր ես»։Օ՜, Լեւոնը.. Լեւոնը այդ արել է և կանէ։ Նրան Աշոտն է սովորցրել։ Իսկ, ես, չեմ կարողանամ սեպհական կեանքիս համար կռուել, իրաւունքներս պաշտպանել։ Ես վաղուց խօսք եմ տուել նրան, բայց դարձեալ հառաչանք, դարձեալ համբ տանջանք։ (ցնցումով) Բայց սա իւր վերջը պիտի ունենայ։ Ես չեմ կարող աչք փակել և անիրաւութեան զոհ լինել։ Ես ասպարէզ կ'ելնեմ և իմը կպահանջեմ։

Վարագոյր։

(Կշարունակուի) Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա

Վերջին Ռուս-Տաճկական պատերազմը նոր էր վերջացել։— Ռուս յաղթական բանակի մի մասը՝ փոքր Ասիայից հետզհետէ վերադառնում էր հայրենիք, անցնելով Ախալցխայի միջից։ ուր ես, իբրև քաղաքի ներկայացուցիչ աղ ու հացով ընդունում էի նրանց և հիւրասիրում՝ հասարակ զինուորներին դաշտում, իսկ սպաներին՝ քաղաքային ժողովարանում։

Ուրախութիւնն ու ցնծութիւնը ընդհանուր էր։ Հայ ժողովրդինը՝ ևս առաւել։ Եւ այդ՝ ոչ միայն այն պատճառաւ, որ պատերազմը վերջացել էր, այլ և նրանով, որ Սան Ստեֆանոյի դաշնագրի մէջ 16-րդ յօդուածն էր մտցրած օգուտ մեր տաճկահայ եղբայրց։

Բ

Ակնյայտնի, պատմական ճշմարտութիւն է, որ Ռուսահայերս մեր տէրութեանը հաւատարիմ, աննենգ հպատակներ ենք եղել, մեր ձեռքից եկած ծառայութիւնները մատուցել ենք նրան թէ անցեալում և թէ մօտ ներկայում։ Տէրութիւնը, իւր կողմից, առաջ քաշել, հովանաւորել է մեզ։ Եւ այս փոխադարձ յարաբերութեան երեսից՝ օգտուել է ինքը՝ տէրութիւնը և մենք՝ հայերս։—Բացի մայրենի լեզուից և կրօնից, որոնց համար մենք ազատութիւն ենք վայելել, հայերս ուրիշ ոչինչ բանով՝ մեզ ռուս ժողովրդից օտար և հեռու չենք համարել։ Երբէք մեր և տէրութեան շահերի մէջ՝ խտրութիւն չենք դրել։ Տէրութեան պարծանքը՝ մեր պարծանքն ենք համարել և տէրութեան դժբաղդութիւնը՝ մեր դժբաղդութիւնը։—

Այն ժամանակ, երբ կառավարութեան ներկայացուցիչները մտքովն անգամ չէր անցել, օրինակի համար, պետական լեզուն հայ մանուկների համար պարտադիր անելու հայոց ծխական և հոգևոր դպրոցներում ռուս լեզուն լաւ աւանդելու

հաժար՝ հոգաբարձութիւնները պետական դպրոցների տեսուչ և տեսչուհիներին էին յանձնում այդ առարկան։ Եւ նրանց աւելի էին վարձատրում քան հայ լեզուի ուսուցիչներին։

Ինքնաբերաբար, առանց ստիպման, ռուս լեզուն սովորելու ցանկութիւնը և կարիքը՝ այնքան մեծ է եղել հայ ժողովրդի մէջ ամեն տեղ, մինչև իսկ սինոդի անդամ, ծերունի եպիսկոպոսներն ևս, ռուերէնի դասեր էին վերցնում պրոկուրորից։—

Երեք քառորդ դար՝ այս ոգւով, այս զգացումներով և այս ուղղութեամբ է կրթուել և մեծացել հայ ժողովուրդը Ռուսաստանում, առաւելապէս Կովկասեան աշխարհում։ Անէկդոտ չէ, այլ առօրեայ երևոյթ՝ որ հայ գիւղերում՝ ամեն մի ընտանեկան և հասարակական ճաշկերոյթների, հարսանիքների ժամանակ՝ գիւղացին, յոտնկոյս և գլխաբաց, առաջին բաժակը խմում էր թագաւոր կայսեր արևշատութեան, բարօրութեան համար։ Ես ինքս իմ ականջովս՝ շատ անգամ լսել եմ, որ բաժակ առաջարկող գիւղացին՝ կայսեր անունը արտասանելիս՝ աւելացնում էր «մեր հայ քրիստոնեայ թագաւոր»...։

Այսպիսի ոգւով և ուղղութեամբ կրթուել և մեծացել է այս «յիշողութիւնների» գրողը։

Գ

Սան Ստեփանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը՝ մի նոր և առաւել բարձր, մի անգնահատելի առաւատչեայ էր Ռուս կառավարութեան բարեացակամութեանը դէպի հայ ազգը, որ իւր ստուար խաւերով, իհարկէ անչափ գոհ և երախտապարտ էր դէպի տէրութիւնը։ Երախտագիտական այս զգացմունքը մեր մէջ աւելի արծարծում էր «Մշակ» լրագիրը իւր խմբագրի կրակոտ յօդուածներով։ Նոյն լրագիրն էր, որ, միւս կողմից, ատելութեան զգացմունքներ էր զարթեցնում դէպի Տաճիկ տէրութիւնը, որի ձեռքից, պարբերաբար, փախել էին մեր պապերն ու հայրերը ռուսազգի և հայազգի գործիչների առաջնորդութեամբ։ Եւ ահա Ռուս կառավարութիւնը պաշտօնական դաշնագրով՝ օգնութեան ձեռք էր կարկառում մեր դժբախտ նախնիքների ծննդավայրում ապրող և տառապող մեր Տաճկահայ եղբայրներին։—Ի՞նչպէս չուրախանալ, ի՞նչպէս չզմայլել և չյափշտակուել մեր տէրութեան այս վեհանձն մարդասիրութեամբ։

Այս իսկ պատճառով, պատերազմի դաշտից վերադարձող զինուորներին՝ մեր քաղաքը այնպիսի յարգանք և պատիւ ու

հիւրասիրութիւն էր ցոյց տալիս, որ որդին հօրը՝ և եղբայրը՝ եղբօրը կարող է տալ։

Դ

Սան Ստեփանոյի դաշնագրի հետևանքներից մինն էլ այն եղաւ, որ Տաճկահայերի և Ռուսահայերի մէջ կանոնաւոր յարաբերութիւն սկսուեցաւ։ Նրանցից մեզ մօտ էին գալիս, մենք նրանց մօտն էինք գնում, տեսնւում, շփւում, մտքի և զգացմունքների փոխանակութիւն անում։

Մեր մամուլի մէջ՝ Տաճկահայ թղթակիցներ երևան եկան, նրանց մամուլում՝ Ռուսահայ թղթակիցներ։

Տաճկահայ դերասանների և դերասանուհիների շնորհիւ՝ մեր թատրոնական բեմը՝ որոշ դիրք ու փայլ ստացաւ։ Տաճկաստանում կազմուած նախ առանձին և ապա միացեալ դպրոցական ընկերութեանը՝ բարոյական և դրամական նպաստներ էին գնում շարունակ Ռուսահայերի կողմից։ Էլ չեմ յիշում սովեալներին հասցրած մեծաքանակ նպաստը, որի մեծ մասը «Մշակն» էր հանգանակել։ Եւ որը («Մշակ») առաջինն եղաւ, որ սովի գոյութիւնը հրապարակի վրայ դրեց և այնքան յաջող կերպով արծարծեց և այն՝ յատկապէս ի շնորհս իւր աշխատակից Գրիգոր Նիկողոսեանի՝ խիստ աշխոյժ, խիստ սրտաշարժ և ոգևորուած թղթակցութիւնների։ Իսկ այս վերջիններիս նիւթ և ներշնչումն տալիս էր Վանից Կամսարականը,— այն ժամանակուայ ռուսաց հիւպատոսը։

Ես, որ առիթ եմ ունեցել կարդալ Կամսարականի նամակներն և Նիկողոսեանի թղթակցութիւնները, նրանց մէջ ոչինչ չեմ նկատել, բացի աղգայնական հոծ զգացմունք, սրտացաւանք։ Սակայն հետզհետէ գլխի ընկայ, որ Կամսարականը որոշ տեն դենցիա ունի։ Եւ Նիկողոսեանը, գիտութեամբ թէ անգիտութեամբ, չգիտեմ, Կամսարականի տենդենցիան արծարծում է «Մշակի» ընթերցողների մէջ։

Ե

Մի օր Իզմիրից մի նամակ եմ ստանում 3 անձանց ստորագրութեամբ։ Դրանցից մինը՝ Դաւիթ Քալանթարեանն է միմիայն ծանօթ ինձ։ Ես և նա Խալիբեան դպրոցում դասընկեր էինք։—Նամակից երևում է, որ տաճիկները չարաչար կոտորում էին այնտեղ մեր եղբայրներին. որ Կովկասի զանազան քաղաքներից հայ կամաւորներ խումբ խումբ օգնութեան են գնում, որ նամակի տակ ստորագրող անձինքը կազմում

են այն կոմիտէտը, որի պաշտօնն է հայ կամաւորներին սահմանն անցկենալու դիւրութիւններ տալ և միևնոյն ժամանակ, սահմանից այս կողմն անցնող հայ վիրաւորեալներին դարմանել, խնամել։

Ցայտնելով ինձ որ ազգային այս շարժմանը Ախալցխա հայաշատ քաղաքը դեռ ոչ մի մասնակցութիւն ցոյց չէ տուել ոչ կամաւորներով և ոչ գոնէ դրամով, կոմիտեատը իմ աջակցութեանն է դիմում։

Ըստ «Մշակ» լրագրի՝ հայ կամաւորները իրանց գործունէութիւնը սկսել էին տակաւին պատերազմի շարունակութեան միջոցին։ Գիտէինք, որ հայ կամաւորները Վանի բերդը պաշարել են, բերդապահ զօրքի և նրանց մէջ մեծ ընդհարում է տեղի ունեցել, երբ և 70 հայ կորիճներ զոհ են գնացել։ Այդ ամէնը «Մշակից» գիտէինք, սակայն կարծում էինք, որ պատերազմի վերջանալով՝ հայ կամաւորների գործունէութիւնն ևս վերջացած է։ Սակայն՝ ահա գալիս է Իգդիրի կոմիտէտի հրաւէրը, կոչը։

Կոմիտէտի առաջարկութիւնը Ախալցխայի մէջ արծարծեցի։ Համակրողներ շատ և շատ դուրս եկան։

Տեղական մի կոմիտէտ էլ մենք կազմեցինք և դեռ ամիսը չլրացած մօտ 40 կամաւորներ ճարեցինք և զինեցինք։

2

Ի նկատի առնելով իմ պաշտօնը՝ ես հարկաւոր համարեցի գաւառապետից իմանալ թէ՝ իմ գործունէութիւնը արդեօք հակառակ չէ՞ տէրութեանը և թէ կամաւորներ ուղարկելուց՝ արդեօք որևէ վնաս չի հասնիլ, կամ ինձ կամ հասարակութեանը և կամ կամաւորներին։

Գաւառապետը, Նիկոլայ Մէսխիեվ, պատասխանեց որ նախ քան իմ ծանուցանելն՝ իրան արդէն յայտնի է ամէն ինչ։ Սակայն ինքը արգելք չի հանել և չէ հանում, որովհետև դրանում տէրութեան հակառակ ոչինչ բան չկայ։

Գաւառապետի հաւաստիացումներովը միամտուելով և ընկերներիս էլ միամտեցնելով՝ կամաւորների խմբին ես մի ճոխ ընթրիք տուի, ուր կային և նրանց ծնողները կամ ազգականները։ Շատ լաւ ժամանակ անցկացրինք, ճաշեցինք, երգեցինք, պարեցինք մինչև գիշերուայ ժամը 2-ը, երբ զինուորական երաժշտական թափօրով քաղաքից դուրս ելանք և «Ճալա» կոչուած դաշտավայրում՝ վերջին անգամ գրկախառնուեցանք մեր կամաւորների հետ և... միմեանցից բաժանուեցանք։

Է

Սակայն... մի քանի օրից յետոյ՝ յանկարծ ինձ մօտ են գալիս մեր կամաւորները և Իգդիրի կոմիտէտին ուղղած նամակը վերադարձնելով՝ պատմում են, որ «Շիշ թափա» կոչուած կայարանից՝ Ալէքսանդրոպոլի ոստիկանութիւնը նրանց յետ է դարձրել։ Իմ հարցմունքներին՝ տղերքը ազնիւ խօսքով և երդումով՝ հաւատացնում են, որ իրանք ճանապարհին ոչ մի անկարգութիւն չեն արել, ոչ մի գիւղի կամ գիւղացու հետ որ և է ընդհարում չեն ունեցել։ Ախալքալաք քաղաքում նմանապէս՝ իրանց շատ լաւ են պահել. այնքան լաւ, որ երբ գաւառապետը եկել է և իրանց լազէրը դաշտում տեսել, շատ գոհ է մնացել իրանց կարգապահութիւնից։

Ը

Նոյն օր ևեթ, իրիգնապահին, ոստիկանութեան պաշտօնեան ինձ հրաւիրում է այն հիւրանոցը, որտեղ իջևանած է եղել հէնց այդ օրը Թիֆլիզից Ախալցխա ժամանած մի պաշտօնեայ,—Փոխարքայի գլխաւոր կառավարութեան առանձին յանձնարարութեան աստիճանաւորը՝ ազգանունը Ամբարդանով, ազգաւ հայ։—Պարոնը ինձ նկատում է, որ կամաւորների խումբ կազմելով և երաժշտական թափօրով նրանց ճանապարհ ձգելով՝ ես ի չարն եմ գործադրել իմ պաշտօնը և առիթ տուել միջազգային բանակցութեան տաճկաց և մեր (ռուսաց) հիւպատոսների ու դեսպանների մէջ։

Ես ինձ արդարացնող փաստերն եմ առաջ բերում և, ըստ երևոյթին, Ամբարդանովին դիւր եմ գալիս իմ ժրաջան գործունէութեամբ։ Միմեանց հրաժեշտ տալիս՝ պարոնը ինձ առաջարկեց, որ, հետևեալ օրը, վերադարձած կամաւորներին ժողովեմ քաղաքային խորհրդարանի դահլիճը, ուր կուգայ և ինքը։

Այդպէս էլ եղաւ։ Ամբարդանովը յայտնեց, որ թէ ես և թէ կամաւորները՝ չարաչար սխալուած ենք և իզուր գլխացաւանք պատճառել Կովկասեան իշխանութեանը, որ, ինչպէս մինչև հիմայ, նմանապէս և այսուհետև, ոչ մի արգելք չի հանիլ, նոյն իսկ իրաւունք էլ չի համարում հանել, երբ որ հայ մարդիկ, առանձին առանձին, կամ փոքրիկ խմբերով, ինչպէս որ ձեր սովորութիւնն է, ուխտ և երկրպագութիւն գնաք ս. Կարապետին, ս. Յովհաննէսին և սեր միւս ազգային սուրբերին (այստեղ Ամբարդանովը հայի նման խաչակնքեց

երեսը՝, իսկ այս ձևով, ինչ որ դուք էք արել...

«Աղա Ջան, Սիմ Սիմ Սիմաւոն, մեզի շիտակն ըսէ, թէ որ մեր ըրածը տէրութեան հակառակ է, չենք անիլ, իսկ թէ որ տէրութեան կամքովն է, կանենք. էլ ինչ հրամանդ մէկ նալին կխփես, մէկ մխին»։

Այս ծիծաղաշարժ առակներով Ամբարդանովի խօսքերն ընդհատեց Մխո (Միքայէլ) անունով մեր կամաւորներից մէկը, որ, ընդհանրապէս, մի վստահ. ճշմարտախօս և աներկիւղ երիտասարդ էր։

Մխոյի առակներն ու ձևերը՝ մի փոթիկոց առաջ բերին կամաւորների մէջ և պաշտօնէին կարծես շփոթեցրին, սակայն ես հասկացրի նրան, որ Մխոյի խօսքերում ոչինչ վիրաւորական բան չկայ. թէ՝ կամաւորները իրանք էլ հիմայ ընդունում են, որ սխալուած են եղել և այլն։

Ամբարդանովի մեկնելուց յետոյ՝ մենք մի քանի ժողովներ ունեցանք, ուր թեր և դէմ շատ կարծիքներ յայտնելուց և խորհրդածութիւններ անելուց յետոյ՝ որոշեցինք Տաճկահայերին օգնութիւն գնալը թողնել իւրաքանչիւր անհատի կամքին և ըիսկին։

Թ

Մի քանի օրից յետոյ էլ Ախալցխա եկաւ Արսէն Թոխմախեանը և ինձ հետ առաջին անգամ ծանօթանալով՝ յայտնեց որ Թիֆլիզում մի ընկերութիւն է կազմուել, որ նպատակ ունի Տաճկահայաստանի ազատութիւնը։ Ընկերութիւնը գաւառներում ունենալու է իւր ճիւղերը. որպիսիներ արդէն մի քանի քաղաքներում հաստատուած են։ Ախալցխայում ճիւղ կազմելու և նրան ղեկավարելու համար՝ կենդրոնը ինձ է ի նկատի ունեցել և հէնց դրա համար էլ՝ Թոխմախեանին ուղարկել է ինձ հետ բանակցելու։

Իմ հարցմանը թէ ովքե՞ր են կենդրոնի անդամները՝ Թոխմախեանը յայտնեց, որ սկզբունքով որոշուած է, որ ընկերութեան անդամները անձամբ կամ անուամբ միմեանց չպիտի ճանաչեն, այլ նրանց միմեանց հետ ծանօթ՝ և յայտնի ուղղութեամբ գործիչ լինելը՝ պաշտօնական, ծածկագիր, նամակներով, որոնցով նրանք, հարկաւոր դէպքում, փոխանակելու են միմեանց հետ։ Գալով ծածկագրերի այբուբենին,—Թոխմախեանը սովորեցրեց ինձ։

Իմ հարցմանը՝ Թոխմախեանը յայտնեց, որ Իդդիրի կոմիտէտը, արդարև, գոյութիւն ունի կենդրոնի թոյլտու-

ութեամբ։ Եւ թէ՝ ծածկագրերով նամակներ գրելը վերջերումս է միմիայն ընդունուած։ Ամբարդանովի Ախալցխա գալու և մեր կամաւորների «Շիշ թափայից» յետ դառնալու մասին՝ Թոխմախեանը լի ու լի տեղեկութիւններ ունէր։—Եւ Ամբարդանովի նման, այդ ամէնը իմ անխոհեմութեանն էր վերագրում։

Խնդրած դրամական համեստ գումարը, իբրև ճանապարհածախս, ինձանից ստանալով՝ Թոխմախեանը մեկնեց Կովկասի այլ քաղաքները։ Իսկ ես, արդէն ընդունած լինելով ինձ առաջարկուած պաշտօնը, սպասում էի այն հրահանգին, որ առ առաւելն մի ամսից յետոյ՝ Թիֆլիզից ուղարկուելու էր ինձ ի գործադրութիւն։

Ժ

Սակայն ամիսը լրացաւ և հրահանգութիւն չկայ ու չկայ։ Պատճառը՝ ես վերագրում եմ Թոխմախեանի տակաւին Թիֆլիզ չվերադարձած լինելուն։ Սակայն մի օր Թիֆլիզից եկող մի անձն ինձ հաւատացնում է, որ Թոխմախեանը սահմանն անցել է կրկին (Թոխմախեանը ինքն ինձ ասել էր, որ նա մի քանի անգամ անցուդարձ է արել սահմանը) և Թիֆլիզում սպասում է ոչ շուտ, քան երկու ամիս յետոյ։ Իրանց կամքով ու բիսկով սահմանն անցնել ցանկացող երիտասարդների համբերութիւնը հատնում էր։ Նրանց մէջ կային ոմանք, որոնք կարծում էին թէ ես՝ իբր թէ յակամայից իրանց հետ միացած լինելով՝ դիտմամբ ձգձգում եմ ձհոնարկութիւնը, մինչև իրանք սառչեն, իրանց մտադրութիւններից յետ կանգնեն։ Ոմանք աւելի հեռուն էին գնում և ուղղակի ինձ էին մեղադրում, որ իբր թէ Շիշ թափայից իրանց վերադարձնել տուողը՝ ինքս եմ եղել։

Անորոշութեան վերջ դնելու և անախորժութեանց տեղիք չտալու համար՝ ես վճռեցի Թիֆլիզ գնալ և անձամբ անձին իմանալ և ստուգել, և ըստ այնմ գործել։

ԺԱ

Պաշտօնիս պատճառով՝ ես մերձաւոր ծանօթութիւն ունէի Ախալցխայում ապրող զօրքերի սպաների հետ։ Ոմանց հետ՝ մինչև իսկ բարեկամութիւն և երթևեկութիւն։ Վերջին-հերիս թուիցն էր՝ Թնդանօթաձիգ զօրքերի գնդապետ Բուլգիևը։

Այս գնդապետին ստորադրեալ սպաներից մէկը՝ մի

յանցանքի համար՝ ընկերական դատաստանով պատժուած էր նախ՝ բանտարգելութեան և ապա պաշտօնից հեռացուցման։

Ցարգելով իմ միջնորդութիւնը՝ Բուշկիևը յօժարած էր, որ սպան բանտարգելութեան պատիժը կրէ իմ տանը, իսկ ընկերական դատաստանի խստութիւնը մեղմացնելու եղանակը՝ Բուշկիևը խոստացած էր ինձ ցոյց տալ, երբ սպան բանտարգելութեան պատիժը կը կրէ, կը վերջացնէ։

Բարեբաղդաբար պատժի ժամանակը լրանում էր արդէն երբ ես որոշել էի Թիֆլիզ գնալ։ Մեկնելու նախընթաց երեկոյին Բուշկիևվի տունը գնացի՝ խնդրելով իւր խոստման կատարումը։ Բարեսիրտ գնդապետը ինձ հասկացրեց, որ յօգուտ իմ պաշտպանեալ սպային՝ Թիֆլիսում ես ոչինչ չեմ կարող անել։ Սպայի վիճակը,—ասաց Բուշկիևվը,—կախուած է Պետերբուրգից։ Եւ հասկացրեց թէ ում և ինչ եղանակով պէտք է դիմել, որպէսզի կարելի լինի նպատակի հասնել։ (Բուշկիևվի խորհրդի համաձայն էլ՝ այս գործը ցանկալի վախճան ունեցաւ)։

Մեր այս մասնաւոր խօսակցութիւնը նոր էինք վերջացրել՝ երբ ներս մտան երկու սպաներ, քիչ յետոյ մինը՝ յետոյ մի երկուսը,—բոլորն էլ ծանօթ մարդիկ։ Պրոֆերանս խաղալու էին եկել։ Ձեռքներիցը չպրծայ։ Ընկերացայ հետները։ Ժամը 11-ին ընթրիքի նստեցանք։ Ի միջի այլ և այլ խօսակցութիւնների, հայ կամաւորների գնալու ու վերադառնալու հարցը մէջ ընկաւ։ Ամբարդանովի մասին խօսք բաց եկաւ։ Ես ամենայն պարզութեամբ պատմեցի այն ամենը, ինչ որ եղել էր։

—Եւ այս ամենից յետոյ՝ արի ու պնդիր թէ հայը խորագէտ է, խորամանկ է, հեռատես է, թափանցող է և այլն,—ասաց գնդապետ Իսահակ Մելիք-Հայկազեանցը, որ եկել էր Բուշկիևվի մօտ մասնաւոր գործով և որին տանուտէրը ընթրիքի պահեց։ Ես մի փոքր ինձ վիրաւորուած զգացի Մելիք-Հայկազեանի խօսքերից, որի հետ խիստ լաւ յարաբերութեան մէջ էի առ հասարակ։

—Բայց գաւառապետի վարմունքը շատ անազնիւ է,—վրայ բերեց մի երիտասարդ—Պարոնի (իմ) ուղղամտութիւնը, անկեղծութիւնը, Իսահակ Օսեպովիչ,—դարձաւ սպան Մելիք Հայկազեանին,—ընդհակառակը ես գովում և համակրում եմ։

—Միւս սպաները նոյնպէս միջամտեցան։

—Ի՞նչ խելքներիդ զօռ էք տալիս, — վրայ բերեց տանուտէրը, — սա մի քաղաքական հարց է։ Իսկ այդպիսի հարցերի մէջ ուղղամտութիւն, ճշմարտութիւն և ուրիշ շատ ութիւններ ոչինչ նշանակութիւն չունեն։

Ես բոլորովին համաձայն եմ իմ ընկերի այն կարծիքին, որ հայերը, առհասարակ, չունեն այն յատկութիւնները, ինչ որ նրանց վերագրում են։ Նրանք, խօսք չունիմ, հաւատարիմ են, գործունեայ, ժիր, սակայն, դիւրախաբ, ոգևորուող։—Ահա դրա կենդանի օրինակը,—մեր ամենքի բարեկամ քաղաքագլուխը։

ԺԲ

Կարճ ասած՝ խօսք խօսքի վրայ գալով՝ մի կարևոր յայտնութիւն դուրս եկաւ զինուորականների խօսակցութիւնից ինձ համար։—Բանից դուրս եկաւ, որ երբ Կովկասեան հայ կամաւորները Տաճկահայաստան անցնելով՝ փոքր ինչ խլրտիւն առաջ բերեն՝ Ռուսաց բանակը՝ անմիջապէս սահմանն անցնելու է նորից։ Բանից դուրս եկաւ նմանապէս, որ գաւառապետ Մէսխիէվը մի հրահանգ է ունեցել, ուր ասած է եղել «Слѣдить за движеніями армянъ, но не преслѣдовать»։—Երևեցաւ՝ որ Կովկասեան բարձր իշխանութիւնը՝ գեներալ Ֆրանքինի զեկուցագրի զօրութեամբ, հրահանգներ է ուղարկել, որ Տաճկահայերի գաղթականութեան առաջն առնեն և այլ ևս չթոյլ տան։ Թէ՝ այդ հրահանգի հետևանքն էր գեներալ Լազարեվի յայտնի պրոկլամացիան Էրզուրումում, որ հայազգի ականաւոր գեներալը շատ զգայուն լեզուով նկարագրել էր գաղթականութեան վնասները և Տաճկահայերին յորդորում էր չթողնել իրանց ծննդավայրը, իրանց նախնեաց շիրիմները, իրանց տաճարները և այլն և այլն,—մի յայտնի պրոկլամացիա որ կարծեմ տպուած էր «Մշակում»։

Ֆրանքինի համոզմունքով՝ երբ Ռուսաստանը Ս. Ստեփանոյի 16-րդ յոդուածով իրաւունք ստացաւ Տաճկահայաստանում մտցնուելիք բարենորոգութեանց վրայ հսկել, ապա ուրեմն հայերը չպէտք է հեռանան, որպէս զի Ռուսաստանը առիթ ունենայ խլրտում առաջ բերել և հնարաւորութիւն ու իրաւունք՝ նորից իւր զօրքը սահմանն անցկացնելու։

ԺԳ

Մի քանի օրից ես ուղևորուեցայ Թիֆլիզ և տեսնուեցայ պ. պ. Պետրոս Սիմէօնեանցի, Արգար Յովհաննիսեանցի և Գրիգոր Արծրունու հետ, որոնց թերթերին, ժամանակ առ ժամանակ, թղթակցում էի։

Սիմէօնեանցը այն կարծիքի էր, որ հայ ժողովուրդը պարտաւոր է հաւատարիմ լինել այն տէրութիւններին, որոնց որ

հպատակ է, առանց երբէք միջամտելու քաղաքական որ և է հարցում։ Եւ առանց դործիք լինելու տիրող ազգերութիւնների քաղաքական նպատակներին։ Հայերի գոյութեան միակ նպատակը պիտի լինի ամեն տեղ իւր ազգային ինքնուրոյնութեան գործոնները պահել, պահպանել, այն է՝ եկեղեցին, լեզուն, ազգային լաւ բարքերն ու սովորութիւնները։— Հէնց որ քաղաքական հարցերի մէջ մտան հայերը՝ առաւել կամ նուազ չափով կը տուժեն, կարող են բոլորովին էլ վտանգուել։

Սան Ստեփանոյի դաշնագրի 16 և Բերլինի վեհաժողովի 61 յօդուածները՝ հայերի համար մի մի ծուղակներ են, որ սարքել են՝ բացառապէս իրանց օգտի համար թէ Ռուսաստանը և թէ Անգլիան։

Արքար Յովհաննիսեանցը համամիտ էր Սիմէօնեանցի հետ այն կէտում, որ հայերը մայրենի եկեղեցին և լեզուն պինդ պիտի պահեն։ Բայց, միևնոյն ժամանակ, մեծ ճիգ ու ջանք պիտի թափեն աւելի կուլտուրական, քան քաղաքական ճանապարհով, անուն և համբաւ հանեն Եւրոպայի աչքում. նրա ուշադրութիւնը իրանց վրայ դարձնեն։—Եւ եթէ դրա համար անհրաժեշտ եղաւ, մինչև իսկ զէնքի դիմեն՝ միայն իրանց խելքով՝ և ոչ ուրիշների։

Յովհաննիսեանցը նոյնպէս գտնում էր, որ Ս. Ստեփանոյի 16 յօդուածը մի ծուղակ է։ Սակայն Լէյարդը (Կ. Պոլսի այն ժամանակուայ անգլիական դեսպանը) այդ ծուղակի դռները կոտրեց, բաց արաւ Բերլինի վեհաժողովի 61 յօդուածով։— Տաճկահայաստանի հարցը՝ առաջ ռուսական հարց էր, այժմ միջազգային հարց է դարձել։ Արքարը գտնում էր, որ Անգլիան հայերի վրայ այն աչքով չի նայում, որ նրանց կուլ տայ, այլ որ նրանք Փոքր Ասիայում զարդանան և ծաղկեն ու ծաղկեցնեն առևտուրը. տարածեն լուսաւորութիւն և այլն։

Գրիգոր Արծրունին համոզուած էր, որ հայերը պէտք է կրթուեն, լուսաւորուեն՝ բայց ոչ նեղ ազգայնական ոգւով, այլ հանրամարդկային։ Կրօնին առհասարակ նա ոչ մի նշանակութիւն չէր տալիս։ Ազգայնութեան միակ ֆակտոր՝ նա լեզուն էր համարում։ Ռուսահայերի վիճակը՝ համեմատութեամբ Տաճկահայերին, նա գտնում էր գերազանց և անկեղծօրէն ցանկանում էր, որ Ռուսաստանը Տաճկահայաստանին ևս տէր դառնայ, որպէս զի այնտեղի հայերն ևս աճեն, կրթուեն՝ ռուսահայերի նման։

Հայ կամաւորների խմբեր կազմակերպելու և Տաճկահայաստան ուղարկելու մտքին՝ թէ խօսքով և թէ գործքով՝ ջերմ

ջատագով և պաշտպան էր «Մշակի» խմբագիրը։ Արծրունու խորին համոզմամբ՝ Տաճկաստանում հայերը ոչ մի տպագայ չունեն և չեն էլ կարող ունենալ, մինչդեռ Ռուսաստանում անշուշտ կունենան։

Եւրոպայի համակրութեանը կամ անհամակրութեանը՝ Արծրունին ոչ մի արժէք և նշանակութիւն չէր տալիս։

ԺԴ.

Արսէն Թոխմախեանը դեռ Թիֆլիզ չէր վերադարձած, ուստի ես նրան չտեսայ։ Սակայն ճիշտ դուրս եկաւ, որ նա կամաւոր խմբեր կազմակերպողների և յայտնի ուղղութեամբ գործիչներ գտնելու գործերում եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս։ Եւ նրա գործունէութիւնը՝ թէև ակնյայտնի՝ բայց Թոխմախեանը ոչ մի խափանարար արգելքի չէր հանդիպում։ Ասում էին, որ նրա գործունէութիւնը մինչև իսկ խրախուսում, քաջալերում է իշխանութիւնը։

Վերադառնալով Ախալցխա՝ ես վերջ տուի կամաւորներ կազմակերպելու գործին։

ԵՂԻՇԷ Ա. ՔԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

ԸՆԿԵՐԻՍ

Սիրելի ընկեր, ա՜խ սրտիս հատոր
Ինչո՞ւ է տանջում քո սիրտը անդորր
Ինչո՞ւ դառն արցունք հեղեցի նման
Ողոգում են քո աչքերդ անընման:

Քո զուարթ դէմքը այսօր տեսնում եմ
Մռայլով պատած, սեւ թախիծ տիրած.
Քո վառ հայեացքում ես նկատում եմ
Յուսահատութիւն, հառաչանք ու լաց։

Միթէ հենց կեանքի առաջի՞ն քայլից
Յուսահատութիւնը տիրեց քո սրտին.
Միթէ չի՞ սպասում այս լայն աշխարհից
Դուք, կարեկցութիւն քո անմեղ հոգին:

Երբէ ամենքը այս փշոտ կեանքից
Կտրեն յոյսերը, սառչեն իդեալից.
Էլ ո՛վ կը մնայ ընդդէմ չարութեան
Ընդմիշտ կռուելով դառնալ ախոյեան։

Ո՛չ, իմ սիրելիս, դու մի վհատիր,
Եռանդուն կերպով քո գործին դիմիր.
Ընդմիշտ ունեցիր սուրբ նշանաբան
Կռուել, մաքառել ընդդէմ չարութեան:

Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆՑ

ԻՆՉ Է ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

(Ըստ Մենգէրի)

Վիէննայի համալսարանի հանգուցեալ պրոֆէսսոր Մենգէրը, որ պետութեան մասին էլ մի հետաքրքրական գիրք ունի գրած, թողել է և մի գիրք վերոյիշեալ վերնագրով բարոյագիտութեան մասին։ Բոլոր ժամանակների փիլիսոփաները միշտ փորձել են իրենց կարծիքը յայտնելու բարոյականութեան էութեան մասին և այս շատ հին խնդիրը սակայն միշտ թարմ է մնացել բոլոր մտածողների համար։ Մենգէրի վարդապետութիւնն էլ մի փորձ է նոր տեսակէտով պարզաբանելու հարցը, որի բովանդակութեան կամենում ենք ծանօթացնել հայ ընթերցողներին։

I

Ով և լինի բարոյականութեան իրագործողը-պետութիւնը, եկեղեցին, հասարակական կարծիքը կամ ուժի այլ տեսակ գործոններ, միշտ ենթադրւում է, որ մարդս կամքի և գործողութեան ազատութիւն ունի։ Մարդուն իրաւաբանորէն կամ հասարակական ու կրօնական տեսակէտով իւր վարմունքների համար պատասխանատու ճանաչելու համար պէտք է ընդունել, որ նա յայտնի գործողութիւն կատարել է իւր ազատ ընտրութեամբ։ Երկրաշարժները, մետերօլոգիական ցնցումները և տարերային այլ փոփոխութիւնները աւելի խոր ազդեցութիւն ունին մարդկային բաղտի վրայ, քան թէ անբարոյական գործողութիւնները, բայց սակայն այս երևոյթները երբէք բարոյականութեան տեսակէտից քննութեան չեն առնւում. բայց մարդկային կամքի այս ազատութիւնը, որի վրայ յենւում են շատ բազմաթիւ իրաւական, կրօնական և հասարակական հաստատութիւններ, իսկապէս և ամենուրեք հակառակ բան է դառնում հասարակական ուժերի տիրա-

պետող ազդեցութեան շնորհիւ։ Զարգացման բնական պայմանները մարդուն տեղաւորում են և փակում ընտանիքում և ուստի հպատակեցնում ծնողների և խնամակալների ղեկավարութեան։

Յետագայում մարդու վերայ իշխանութիւն է ունենում դպրոցը, իսկ ուսումնարանական շրջանն անցնելուց յետոյ մարդկանց մեծամասնութիւնը սկսում է պատրաստուել մի որև է մասնագիտութեան համար։ Յետոյ տղամարդկանց համար գալիս է զինուորական ծառայութեան շրջանը, իսկ աղջիկների համար մարդու գնալու ժամանակ, իսկ այս վերջին շրջաններում երիտասարդական հասակի անազատութիւնը ոչ միայն չէ վերջանում, այլ և շատ անգամ սաստկանում է։ Եւ երբ որ մարդը հասնում է այն բանին, որ սովորական կեանքում անկախութիւն է ասում, այն ժամանակ նրա գործողութիւնների վերայ տիրապետում են անհերևոյթ կապերով նրա արհեստը և կեանքը, պետութիւնը, եկեղեցին և այլն։

Այսպիսով ամեն երկիրների ժողովրդի ահագին մեծամասնութիւնը ոչ իրաւաբանօրէն և ոչ բարոյապէս ազատ չէ և շատ քիչ մարդիկ են լինում, որոնց վարմունքների առիթով կարելի է խօսել կամքի ազատութեան մասին։

Եթէ այսպէս է խնդիրը և եթէ իրը ինքնակառավար մարդուն իսկապէս ղեկավարում են արտաքին սոցիալական երևոյթները, եթէ նա ոչ այլ ինչ է եթէ ոչ марiонетка изъ кукольнаго театра, ուրեմն կեանքի ազատութիւնը բոլորովին չունի այն նշանակութիւնը, որ նրան տալիս են։ Եւ իրօք ինչ մեծ նշանակութիւն ունի կամքի ազատութիւնը, երբ որ ամեն մի մարդու ամենաէական գործողութիւնները կախում ունին նրա շրջապատող պայմաններից։ Որպէս ապացուցուած է բազմաթիւ վիճակագրական դիտողութիւններով՝ ամենագործնական հարցերում մարդս սոցիալական հանգամանքների գերի է, ուրեմն ոչ մի նշանակութիւն չունի այն խնդիրը թէ նրան մենք տեսականապէս ընդունում ենք իբրև ազատ թէ ոչ ազատ էակ։ Մարդկային կամքի ազատութեան ապացոյց են բերում մի քանի աննշան գործողութիւններ, որոնք մարդկային կեանքի լայն շահերի շրջանակից դուրս են կատարւում արտաքին ազդեցութիւններից անկախ։ Այսպէս ասում են թէ մարդ իւր տանից դուրս գալիս կարող է իւր քայլերը մեկնել աջ կամ ձախ ըստ իւր հայեցողութեան։ Բայց ոչքան ուղիղ է այս տեսակ դատողութիւնը։ Թւում է թէ մինչև անգամ այսպիսի չնչին հանգամանքներում էլ մարդս ոչ բոլորովին

անկախ է գործում, որովհետև լի օրերը երևի նա իւր քայլերը կուղղի իւր սովորական գործի տեղը, իւր արհեստանոցը, իսկ կիւրակի օրերը այն կողմը, ուր կարող կլինի զբօսնել կամ հանգստանալ։ Եթէ մարդկային կամքի ազատութեան կողմնակիցը չկամենայ էլ այսպիսի չնչին գործողութիւնները անհրաժեշտական ճանաչելու՝ դարձեալ անկասկածելի է որ մարդու կեանքում գործնական նշանակութիւն ունեցող վարմունքները բղխում են ուժերի սոցիալական յարաբերութիւններից։

Այսպիսով բարոյագիտութեան առարկան ոչ թէ այն է, ինչ որ մարդ պարտական է գործելու, այլ այն, ինչ որ իրօք է նա անում կամ ինչ որ անհրաժեշտօրէն պիտի անի հասարակական յարաբերութիւնների շնորհիւ։ Այս գրքի էջերում ես նախ պիտի պատկերացնեմ մարդկային յարաբերութիւնների իսկական բարոյական նկարագիրը մի կողմ թողնելով բարոյական իդէալները և օրէնքները։ Բայց որովհետև բարոյականութեան իրական նկարագիրը պիտի յանգի այն եզրակացութեան, որ հասարակական ուժերի յարաբերութիւնները և ներկայի բարոյական հասկացողութիւնները դեռ ժողովրդի փոքրամասնութեան և սահմանափակ շրջանների բաղաւորութեան են միայն ծառայում, ուստի և յետագայում մենք պիտի պարզենք այն միջոցը, որոնցով կարելի կլինի ստեղծել մի այնպիսի դրութիւն, որ ուժը և բարոյականութիւնը նպաստաւոր լինեն ամենքի շահերի համար։ Այստեղ պատշաճաւոր տեղ պիտի բռնեն և բարոյական իդէալներն ու օրէնքները։

II

Բարոյականութեան էութիւնը։

Բարոյական մարդ է նա, որ յարմարւում է գոյութիւն ունեցող սոցիալական յարաբերութիւններին, անբարոյական է նա, որ չի ընտելանում դիմադրում է նրանց, բայց որովհետև ժամանակի ընթացքում կամ հասարակական յարաբերութիւնները փոփոխւում են, ուստի և շատ անձինք և գործողութիւններ այսօր հիացմունքի և գովասանութեան են արժանանում, իսկ վաղը զզուելի և պախարակելի են դառնում։

Բարոյական գնահատութեան կողմից բոլորովին առանձին տեղ են բռնում պատմական անձնաւորութիւնները։ Սոցիալական յարաբերութիւնների շատ փոփոխութիւններն ան-

գամ չեն նսեմացնում նրանց յիշատակը, որ դարերի ընթացքում ապրում, որովհետև շատ անգամ հասարակական կեանքում կատարուած փոփոխութիւնները հէնց այս տեսակ անձինքների ազդեցութեան ներքոյ է տեղի ունենում։ Այս է պատճառը, որ զանազան ժամանակներում և զանազան ազգերի կողմից շատ տարբեր են լինում պատմական անձնաւորութիւնների մասին բարոյական գնահատումը։

Այսպէս՝ յայտնի է, որ Քրիստոսը մեր թուականի առաջին շրջանում յուն-հռովմէական կռապաշտութեան կողմից շատ աննպաստ գնահատում տեսաւ և մինչև անգամ Տակիտոսի և Պլինիոս կրտսերի նման հոգեկան կողմից աչքի ընկնող մարդիկ նրա վարդապետութեան մասին խօսում էին ակնյայտնի արհամարհանքով։ Բայց երբ որ քրիստոնէութիւնը յաղթեց կռապաշտական աշխարհայեցութեանը և ինքը դարձաւ հասարակական յարաբերութիւնների հիմք՝ նրա անձնաւորութիւնը ոչ միայն յարգանքի արժանացաւ, այլ և աստուածացրին նրան և պաշտեցին։ Այսօր էլ մինչև անգամ, երբ որ փորձնական գիտութիւնները թէև գաղտնի, բայց յամառ կռիւ են մղում քրիստոնէական կրօնի գերբնական հաւատալիքների դէմ, քրիստոնէութեան ամենահետևողական հակառակորդները Քրիստոսի անձնաւորութեան բարձր բարոյականութիւնը հերքել չեն վստահանում, որովհետև այս բանին դէմ են հազարաւոր ընթացքում արմատացած ուժի գործոններ։ Աւելի սակաւ յաջողութիւն ունեցաւ Լիւտէրը, որ Արևմտեան քրիստոնէութեան մի փոքր մասը յաջողեցաւ իւր կողմը քաշելու։ Այս է պատճառը, որ պաշտօնական կաթոլիկութիւնը այսօր էլ դրոշմում է նրան ուխտադրուժ և անբարոյական վարդապետի անունով, թէև միևնոյն ժամանակ պրոտեստանտները նրան բարենորոգիչ են համարում, որ վերածնեց քրիստոնէութիւնը։

Այսպիսով եթէ պատմական խոշոր անձնաւորութիւնները իրենց ժամանակակիցների կողմից արժանաւորապէս չգնահատուած ժամանակ դեռ կարող են բողոքել գալիք սերնդոց դատաստանին, բայց միշտ տեսակի մարդիկ, որ իրենց մահից յետոյ երկարատև հետք չեն թողնում, ամբողջապէս կախուած են իրենց ժամանակից և տիրապետող հասարակական յարաբերութիւններից։

Այս տեսակ մարդիկ, եթէ կամենում են բարոյական մարդու հռչակ ունենալ, պարտաւոր են հպատակիլ ուժի իշխող գործոններին, այսինքն պետութեան, եկեղեցուց սեփա-

կանութեան և ընտանիքի օրէնքներին և միայն այս դէպքում նրանք համարւում են օրինաւոր քաղաքացիք, բարեպաշտ քրիստոնեաներ, ազնիւ մարդիկ և ընտանեսէր ամուսիններ ու որդեսէր ծնողներ։

Ճիշտ է, որ ամեն մի ժամանակ կարող են լինել մարդիկ և կուսակցութիւններ, որոնք տիրապետող հասարակական յարաբերութիւններին յարմարուիլը փոքրոգութեան նշան կհամարեն. բայց ամենուրեք ժողովրդի լայն խաւերը այսպիսիներին բարոյական և գովասանքի արժանի են ճանաչում։ Խօսք չկայ, որ այդ տեսակ կարծիքները իրենց իրենց կանայատանան, եթէ այսպիսի բարոյական գնահատութեան հիմք ծառայող սոցիալական յարաբերութիւնները խախտուին։ Բաւական է ենթադրել, որ ժամանակաւորապէս անիշխանութիւնը յաղթող է հանդիսացել և այն ժամանակ վերոյիշեալ բոլոր օրինաւոր, առաքինի, ազնիւ և քնքոյշ մարդիկ վախկոտների և յիմարների անուն կստանան։ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ և իսկապէս բարոյական հասկացողութիւնների մի այսպիսի վերաքննութիւն և փոփոխութիւն տեղի ունեցաւ, թէև իրօք ոչ լայն չափերով։ Բաստիլիան պաշարելուց յետոյ (14 յուլիսի 1789 թ.) ֆրանսիացիների մեծամասնութիւնը միմիայն նրանց էր առաքինի համարում, որոնք յեղափոխական ամենածայրահեղ կարծիքներ էին յայտնում։ Բայց արդէն Բօրբիէսպերի անկումից յետոյ և նամանաւանդ Նապոլէօնի կատարած պետական յեղափոխութիւնից յետոյ (9 նոյեմբերի 1799 թ.) որ ապացուցեցին գերազանց ուժը ժողովրդական անկազմակերպուած ամբոխի վերայ՝ այս բոլորը փոխուեց, և ամեն մէկը ամաչում էր յեղափոխական լինելու և մարդիկ իրենց նախկին յեղափոխական տրամադրութեան մասին աշխատում էին լռելու։ Այս տրամադրութիւնը տևեց մինչև յուլիսեան նոր յեղափոխութիւնը (1830), որ գահ բարձրացրեց բարբիկադային թագաւորին և նորից Ֆրանսիայում յեղափոխական տրամադրութիւնների բարոյական արժէքը մեծացաւ։ Ֆրանսիական մեծ շարժումները թեթև արձագանք գտան և եւրոպական միւս պետութիւններում ուր նոյնպէս յեղափոխական գաղափարների արժէքը տարբեր ժամանակներում տարբեր գնահատութեան էին արժանանում։ Կրիտիկական րոպէներում իշխանութիւն ձեռք բերելը և պահելը շատ աննշան հանգամանքներից է շատ անգամ կախուած լինում, ուստի և այսպիսի ժամանակներում շատ նշանաւոր գործողութիւնների բարոյական գնահատութիւնն էլ

կախումն ունի բոլորովին պատահական դէպքերից (օրին. իւր ժամանակ ամբոցի դուռը կոտրելը կամ մի քանի բոպէ ուշանալը)։ Եթէ Սերբիայի թագաւորը և թագուհին 1903 թուի յունիսի 10-ից 11-ի գիշերը փախած լինէին հիւրատնից քաղաք՝ նրանք հեշտութեամբ յաղթած կլինէին դաւադիր օֆիցէրներին և սրանք անկասկած կգլխատուէին, իսկ նրանց գործողութեան եղանակը բոլոր Սերբիական եկեղեցիներում, հրապարակներում, դպրոցներում և լրագիրներում և նոյն իսկ և ամբողջ աշխարհում դատապարտութեան կենթարկուէին։ Բայց որովհետև զանազան բարեյաջող պատահականութիւնների շնորհիւ օֆիցէրներն իրենց գործը արագութեամբ և հիմնաւոր կերպով կատարեցին, ուստի ժողովրդական ներկայացուցիչները նրանց յայտարարեցին հայրենիքի փրկիչներ, իսկ նրանց արածը հերոսական սքրագործութիւն։ Թագաւորական նոր դինաստիան էլ, որի իշխանութեան հիմք այս սոսկալի գիշերը դրուեց, ուրիշ չարից բացի այն, որ ընդունեց թէ ապագայում էլ երկրի թագաւորի հետ արիւնալից հաշիւ տեսնելը բարոյական է և զարմանքի, գովասանքի ու քաջալերութեան արժանի գործ է և այն էլ ոչ միայն Սերբիայում, այլ և ուրիշ երկիրներում։ Թէև ճիշտ է, որ քաղաքակիրթ շրջաններում գտնուեցան պետանդ մարդիկ, որոնք չկամեցան հաշտուելու այն մտքի հետ, թէ և ուժը և բարոյականութիւնը միևնոյն բանն է, բայց սրանց խիստ դատավճիռը կատարուած յանցանքի մասին ոչ մի նշանակութիւն չունեցաւ, որովհետև թագաւորական տան ոչնչացումը ընդհանուր համակրութեան էր արժանացել։

ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)

ԱՒԵՏԱՐԱՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ [1]

VII

Ոչ մի երկիր այնքան պարզ, այնքան ինքնուրոյն գոյներով չէ կրում իր վրայ իր դաժան անցեալի աղեխարշ հետքերը, որչափ Արաքսի աւազանը։ Այստեղ նրա իւրաքանչիւր քար ու թուփը իրանց գունաթափ դէմքերով քիչ շատ բան են շշնջում, քիչ շատ ցնցող ողբեր են փսփսում. և նրանց լեզուն աւելի քան ողբերգական է, քան հոգետանջ բանաստեղծի ցաւոտ գրչի վշտահիւս օրօրները։

Եւ ինչեր ասես դրանք չեն պատմում քեզ. և՛ ամբարտաւանութեան զարհուրանքով լի գազանութիւններ, և՛ խեղճութեան, դառնութեան բովի մէջ այրուած, խորովուած կենցաղավարական բիւրաւոր արկածներ, և անթիւ ու անհամար քստմնելի խռովութիւնների արիւնոտ հետքեր, և՛ անսիրտ ձեռքերի հոգեմաշ աւերածութիւններ.... և՛ արտասուք, և՛ հոգս, և՛ տառապանք, և սուք ու շիւան, ողբ ու հաւածանք.... Եւ ծով վշտեր... Եւ այդ բոլորին անսասան և անխորտակելի վկայ մնացել միայն այդ երկրի վաղանցուկ փառք ու պճրանքի ակնատեսը՝ ծերուկ Մասիսը իր անթիւ ու անհամար աւերակներով։

Հենց այդպիսի աւերակներից մէկից ոչ հեռու, Մասիսի անդնդախոր ստորոտներից մէկում, Արաքսի մշտալուռ ափերի վրայ այդ ժամանակներում ընկած էր

---

[1]) Լումայ № 3.

Ինչևանիկ աւանը։ Դա մէկն էր այդ երկրի այն բիւրաւոր աւաններից, որոնք իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում են քեզ իրանց թախծալի, իրանց խղճուկ արտաքինով։

Այդ աւանի ծայրին մի չքեղազարդ վեհութեամբ ցցել էր իր գլուխը Պետոենց Սեփանիկի հոյակապ ապարանքը, որն այդ հսկայական բարձրութիւնից մի յանդուգն հայեացքով օր ու գիշեր հանդարտ դիտում էր իր շուրջը, ուր հարիւրաւոր տափարակ և աղքատիկ խրճիթներ իրանց հլու սպասաւորութիւնն էին պատրաստ նրան չինայելու։ Ամբողջ այդ աւանի մէջ դա միակ բարեկարգ շէնքն էր։

Եւ Սեփանիկը ամեն ինչով համապատասխան տէր էր այդ շէնքին։ Հազուագիւտ պարագաներում է այս ապերախտ աշխարհը վարձահատոյց լինում մարդկանց առաքինի գործերի համար։ Եւ Սեփանիկը ճակատագրի ու աշխարհի այդ երջանիկ ու բացառիկ ընթացքի շրջանի մէջն էր, որն իր առաքինութեան համար վարձատրուել էր և ոչ մի բանի կարօտութիւն չէր զգում։ Նրա տունը ծփում էր հարստութեան այն առատ ալիքներով, որոնք որքան ծփում են, այնքան աճում ու զարգանում են։

Այսպէս և Սեփանիկի հարստութիւնը օրէցօր աճում էր, այնքան նրա դռները բացւում էին տնանկների, խեղճերի համար, որոնք միշտ և ամեն ժամ ազատ ել ու մուտ ունէին նրա մէջ։ Դա կատարեալ մի հիւրատուն էր, ուր ամեն ինչ իրաւունք ունէիր ստանալու, և՛ տաք ապաստան, և՛ փափլիկ անկողին, և սննդատու տաք խորոտիկ, և հոգացող ձեռքեր, և՛ քաղցր լեզու, և ամոքիչ սպեղանի սրտիդ խոցերի համար, և՛ ամեն բան....

Բազմանդամ չէր Սեփանիկի գերդաստանը։ Չնայած քսան ից աւել տարի էր, ինչ նա իր կեանքը կապել էր իր Սաթիկի հետ, սակայն ամուսնական այդքան երկար

—Ձիդ ժամանակուայ ընթացքում նա միայն մի հատիկ որդի ունէր և չորս փոքրահասակ աղջիկներ, որոնք ամեն երեկոյ մի զուարթագին իրարանցումով դիմաւորում էին իրանց հօրը, որը այդ ժամանակներում տուն էր վերադառնում իր վաճառականական գործերից։ Մնացած ժամանակներում այդ հսկայական տան գործերի վերադիրը ընկած էր լինում Սաթիկի պարանոցին, որը լուռ ու մունջ կերպով առաջ էր տանում իր տընտեսութիւնը։ Այդ կինը այնքան ահռելի չափերով որոշւում էր միւս այն հարուստ կանանցից, որոնք մի փոքրուն գոռոզութեամբ գիտեն նայել իրանցից ստորների վրայ և միշտ ու միշտ արհամարհանքով ու նազանքով են խօսում նրանց մասին և զուգուած ու զարդարուած մի կատարեալ պատուհաս են դառնում իրենց ամուսինների գլխին։

Նրա խոհական դէմքի վրայ դուք միշտ նշմարում էիք այն վաղեմի նահապետական հայ կնոջ ինքնուրոյն արտայայտութիւնը, ուր իր հարազատ երանգներով երևում էր ձեղ սիրող մօր ու ամուսնու անսասան կերպարանքը։

Այդպէս էր միշտ Սաթիկը։ Սակայն նա մի բան չէր կարողանում անփոյթ աչքերով տանել. դա այն էր, որ ամուսնու անագան գիշերների վերադարձը նրան խորունկ վիշտ, հոգս ու տառապանք էր պատճառում։ Եւ այս դէպքերում նա միշտ դառնութեամբ լցուած՝ առանց հանուելու լուսամուտին դէմ առած՝ այրող անհամբերութեամբ ամուսնու ճանապարհն էր սպասում, որը մերթ—մերթ ուշ էր վերադառնում իր վաճառականական գործերից։

—Ա՜յ մարդ, դու քո այդ անզգուշութեամբ մի օր մի փորձանք ես բերելու մեր գլխին. ինչ կ'լինի, որ փոքր ինչ շուտ վերադառնաս։

—Դէ՜հ, չի լինում, Սաթիկ ջան։

—Լինում է թէ չի լինում, դու պիտի լաւ ըմբռնես,

որ ամեն տեղ արիւն է հոսում. ամեն տեղ այս սեւաւոր երկրում մարդի գլուխը սոխի գլխի գնի է հասել. իսկ դու երեխաների տէր ես, դու պիտի խնայես մեզ։

—Մի վրդովուիր, Սաթիկ ջան։

—Ա՜խ, Սեփանիկ, ամեն անգամ հենց այդ ես ասում. մէ մտիր սրտումս, տես ինչ կայ այնտեղ։

—Գիտեմ, գիտեմ, սիրելիս, դէհ դու էլ ինձ պիտի հասկանաս։

—«Գիտեմ, գիտեմ» բաւական չի. խօսք տուր, որ այլևս չո՛ւշանաս։

—Տալիս եմ. տալիս...

Եւ այդ միևնոյն խօսակցութիւնը տեղի էր ունենում միշտ, երբ ինչ—ինչ պատճառներով Սեփանիկը ուշ էր վերադառնում տուն։ Երկար, շատ երկար պիտի շարունակուէր այս ընտանեկան կռիւը երկու ամուսինների մէջ և ո՛վ գիտէ ինչով վերջանար, եթէ Սաթիկը չ՛իմանար ամուսնու ուշանալու պատճառը, որից յետոյ նա այլևս ուշադրութեան չէր առնում ամուսնու անագան վերադարձը։

Որտեղից որ է յանկարծ նրանց մօտ յայտնուեց մի ջահել աբեղայ, որը իրան ներկայացնում էր Նախավկայի Սրբավայրի միաբան։ Ամուսնու և այդ աբեղայի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնից Սաթիկը հասկացաւ, որ վաճառականական գործերը չէին Սեփանիկի անագան երեկոների վերադարձի պատճառը, այլ բոլորովին այլ բան՝ կապուած ընկածի, անարգուածի, թոյլի օգնութեան վեհ գաղափարներով։ Եւ այդ կարեկցող սիրտը լռեց. միայն պահանջեց, որ Սեփանիկը դարձեալ ձեռքից բաց չ՛թողնի զգուշութեան բոլոր միջոցները։

Տարիներ անցան, և Սեփանիկը անշեղ շարունակում էր իր ծրագրած վեհ գործի բեղմնաւոր ընթացքը։

Եւ այսպէս օրից օր նրա այցելուների թիւը աճեց։ Այդ այցելուներից շատերը միայն մթաշաղ գիշերներով

էին մուտք գործում նրա մօտ, ապա դարձեալ մթնով էլ հրաժեշտ էին տալիս նրան։

Մի օր, երբ մութը նոր էր կոխել և երբ անցուդարձը դադարել էր փողոցներում, նրա մօտից դուրս եկաւ Նախավկայի աբեղան և իր արագընթաց, բայց և խրոխտագին քայլերը ուղղեց դէպի մերձակայ բարձրադագաթ լեռները։ Երբ նա հասաւ Իշխանիկ աւանի շրջակայքում գտնուող կիսախարխուլ Մատուռին, կանգ առաւ, ուշի-ուշով զննեց մատուռի մօտերքը, խորին ուշադրութեամբ ականջ դրեց. ապա փութապէս հանեց վրայից վարդապետական վերարկուն, վեղարը, կօլօլեց ու դրեց մատուռի պատի մօտին, որտեղից դուրս բերեց մի փոքրիկ արկղ։ Այդ արկղի միջից դարձեալ ուշադրութեամբ հանեց դէնքերի մի քանի տեսակներ և մի չուխայ։

Մի քանի րոպէից յետոյ նա սպառազինուած ամեհի մի լեռնականի տեսք ունէր։

Նա վերարկուն և վեղարը դրեց արկղի մէջ և իր նախկին տեղը թաղեց։ Երբ ամեն բան վերջացրեց, դարձեալ շարունակեց ճանապարհը։ Նրա անվեհեր ոգին ամենաթեթև ուշադրութիւն անգամ չէր դարձնում ճանապարհի այս ու այն անդնդախոր ձորերում և սիղաւէտ հովիտներում բուն դրած քրդական «եայլայ» եկած վրանների վրայ։ Ըստ երևութին, նա վաղուց, շատ վաղուց ծանօթ էր լեռնական այդ մարդ գազանների հետ և գիտէր հատուցում տալ նրանց այսուայն անարդար պահանջներին։

Նա լցուած վաղեմի անցեալի ծանրատաղտուկ խոհերով, խորին զգուշութեամբ մտել էր Տղմուտի բազմերանգ հովիտը և նրա մերթ անտառախիտ, մերթ քերրի և մերթ չոր ու ցամաք ափերով շարունակում էր իր ուղին։

Նա անցել էր Փշրաքար, Սղնախ, Ղզըլ—Գայա, Ղուշփոխլի լեռները և այժմ մօտենում էր Գօդայ-Սա-

րին, որի հովասուն և կանաչազարդ ափերին սփռուած էին բազմաթիւ քրդական վրաններ։ Դրանք «եայլաղ» եկող քրդերն էին, որոնք իւրաքանչիւր տարի գարունը բացուելուն պէս աճապարում են այդտեղ, բնութեան ծոցում վայելելու նրա կենսատու վայելքները։ Ամբողջ այդ ճանապարհում նա խուսափում էր հանդիպելու որևէ էր իր նման մէկին։ Միայն սև ու կարմիր տղմուտն էր նրա անբաժան ընկերը, որ ասես ամբողջ այդ ճանապարհին ինչ-ինչ մթին պատմութիւններ էր փսփսում նրան և առաւել ևս բարդում, խորացնում առանց այն էլ նրա վիրաւոր սիրտը։ Եւ այդ գիւրազգեաց ճանապարհորդը անկարող էր անտարբերութեամբ անցնել այդ վայրերը, որոնց իւրաքանչիւր քար ու թուփը կապուած էր մի-մի նուիրական անուան հետ։ Նրա յիշողութեան մէջ զարթնեց Աւարայրի հերոսը՝ Վարդանը, իր աւանդապահ համախոհներով. նրա առաջին ցցուեց Ղևոնդը իր տարաբախտ երկրի փրկարար խաչով, շրջապատուած մի քանի հայազգի նոյնպէս անձնուրաց լուսատու աստղերով, որոնցից ամեն մէկն իր ինքնուրոյն ոգևորութեամբ լցուած արձանացաւ նրա առաջ։ Ճանապարհորդը մի դառնագին «ախ» հառաչեց, մի քանի րոպէ կանգ առաւ, մտայոյզ լռութեամբ դիտեց իր շուրջը, ապա երկու կաթիլ խոշոր արցունքներ գլորուեցին նրա աչքերից և նոյնպէս լռութեամբ ընկան այդ նուիրական հողի վրայ, որից յետոյ նա վերստին շարունակեց իր ուղին։ Ահա նա մօտեցաւ մի անդնդախոր ձորակի, ուր հազիւ-հազ դիշերային մթութեան մէջ նշմարւում էին մի քանի տասնեակ քրդական վրաններ։ Անծանօթի սիրտը մի զգալի արագութեամբ սկսեց բաբախել, և նստեց լեռնական արահետի կողքին ընկած մի քարի վրայ և, երկու ցուցամատները դողդոջուն շրթունքներին մօտեցնելով, մի քանի անգամ կրկնեց. «մեաու մեաու»...

Այդ խորհրդակիր կոչից շատ չանցած՝ վրաններից

դուրս եկաւ մի կանացի կերպարանք, որը այդ սեռին յատուկ զգուշութեամբ ընթացաւ դէպի անծանօթը։ Մի քանի րոպէից յետոյ նա անծանօթի մօտին էր, որը լռութեամբ մի հոգեվառ տենչանքով նրան իր գիրկն առաւ և այդպէս երկար, շատ երկար նրանք մնացին անշարժ։ Միայն ստէպ-ստէպ նրանց այրուող կրծքից լսւում էր խեղդուող շնչառութեան բոցակէզ ելևէջը, որը ընդխառնւում էր այն հրաբորբոք համբոյրների ձայների հետ, որ նրանք մի անասելի փափագով տալիս էին միմեանց։

Վերջապէս, անծանօթը ուղղուեց, երկու ձեռքով ամուր սղմեց նրա գլուխը իր կրծքին ասես հասկացնելու այնտեղ անդադար թրփրտացող առարկային, որ իր պաշտածը այժմ հեռու չէ իրանից և հազիւ լսելի ձայնով հարցրեց.

—Խաղալէ՞ ջանէ, ի՞նչ նորութիւն ունես ինձ հաղորդելու։

—Ես, Սահրատ, բան չունիմ քեզ ասելու, ինչ էլ գիտէի, մոռացայ, վրաս կորաւ, երբ քեզ տեսայ։

—Սլօ աղան այցելում է հօրդ, և ի՞նչ խօսակցութիւններ են տեղի ունենում։

—Սլօ աղան, այո՛ այցելում է։ Երբեմն գալիս է և չէ՞ յիս-Ասլանը, որոնք միշտ քո լաւն են խօսում հօրս հետ։

—Օրինա՞կ։

—Նրանք համոզում են հօրս, որ նա էլ հետևի իրանց օրինակին. քո տուած թերթերը նրանք հանում են իրանց մօտից, կարդում, բացադրում են հօրս։ Հայրս սկզբում յօրանջում էր, երբ նրանք կարդում էին, բայց յետոյ հայրս շատ ուշադրութեամբ էր լսում նրանց։

—Եւ յետո՞յ։

—Յետոյ դեռ հայրս ոչինչ չի ասել իր «էլին», դեռ տատանւում է։

—Նրանք պատմեցին հօրդ, որ իրանք ընդհանուր

կոչ են արել իրանց «էլերին» իրանց «պչմանեերին» (աղ-գականներին) եղբայրաբար վարուել ֆլանների հետ և կոյր գործիք չդառնալ բարբարոս բռնակալի ձեռքում։

—Ինչպէս չէ, պատմեցին։

—Ի՞նչ ասաց հայրդ։

—Խոստացաւ, որ ինքն էլ կհետևէ նրանց օրի-նակին։

—Խոստացաւ և մինչև օրս չի կատարել։

Չի կատարել նրա համար, որ կասես հոտ է առել իմ և քո յարաբերութեան մասին։

—Միթէ՞։

—Այո՛։

—Այդ լաւ բան չէ, Խաղալէ-ջանէ։

—Լաւ բան չէ, իհարկէ, բայց հօրս փոխարէն ես եմ ասել մեր «էլին»։ Ի՞նչ կայ որ. հայրս «էլի» գլխա-ւորն է, իսկ ես՝ նրա զաւակը։ Միթէ ես իրաւունք չունիմ հրամաններ արձակելու մերոնցը։

—Որքան քաղցր ես դու,—և Սահրատը բարձ-բացրեց նրա գեղանի գլուխը, մի փոքր նայեց նրա աչքերին. մութն էր, ոչինչ չնկատեց այնտեղ, ապա խորին երախտագիտութեամբ համբուրեց նրա շրթունք-ները։

—Շատ մեծ բան հօ չեմ արել, որ շիւարած մնա-ցիր։

—Ինչպէս չէ, Խաղալէ—ջանէ, շատ մեծ գործ. և ձեր «էլի» մարդիկ լսում էին քեզ։

—Այո, լսում էին և խոստացան։ Դեռ դու երևի չդիտես, որ Խաղալէն սովորել է քո բացակայութեան ժամանակ ձեր ֆլանների լեզուն, դրելը և կարդալը, և այդ բոլորը քո սիրուն։

—Այդ ինչեր ես խօսում, Խաղալէ—ջանէ, ուր, ինչպէս։

—Ո՞ւր, նախավկայի վանքում, չդիտես, որ ջահիլ քրդուհին իրաւունք ունի ցերեկն օրերով թափառել իր

թէշու հետ. ես դրա փոխարէն իջնում էի քեռուս մօտ, վանքից ոչ հեռու։ Հայրս կարծում էր, որ ես քեռուս տանն եմ, բայց խաղալէն վանքումն էր լինում ցերեկ-ները, իսկ գիշերները գալիս էր քնելու իր քեռու տանը, եւ այդպէս միշտ։ Ցերեկները Աբրահամ հայր-սուրբը ինձ գրել-կարդալ էր սովորեցնում։ Նա պատմեց, որ դու էլ նրա մօտն ես գրել-կարդալ սովորել, որ մեր քրդերին քարոզել, խելքի բերել կարողանաս, ես էլ սովորեցի, որ քեզ օգտակար լինեմ։

Սահրատը, որին, անշուշտ, կյիշէ ընթերցողը, մեաց զարմացած։ Նա տեսաւ այդ լեռնցու մէջ անձնուիրու-թեան կատարեալ տիպար։ Նա տեսաւ, թէ որքան հզօր ոյժ ունի սէրը կանանց սրտում և ի՞նչեր չեն զո-հիլ նրանք իրանց սիրած էակին հաճոյանալու համար։ Նա ծունկ չոքեց և արտասուալից աչքերով փառք տուեց Արարչին, որ, վերջապէս, իր տանջալից կեանքը վարձա-տրւում է, և իր տարածած գաղափարը արդասաւոր հող է գտնում իր համար։ Հեռանալով հայրենի երկրից, տուն ու տեղից, նա անցաւ Նախավկայի վանքը, ուր մի քանի տարուայ ընթացքում անխոնջ ջանասիրութեամբ սովորեց գրել-կարդալ, ապա իր ընկերների հետ սկսեց թափառել քրդական աշխարհում, տարածելով այնտեղ եղբայրսիրութեան վեհ գաղափարը։

Նրա շնորհիւ մի քանի քրդական բէգեր, աղաներ նոյնպէս սովորեցին գրել կարդալ և սկսեցին թէ իրանց և թէ հարևան «էլերի» մէջ տարածել եղբայրսիրութեան գաղափարը։ Հետզհետէ քրդական «էլերից» շատերի աչքերը բացուեցին, որ իրանք կոյր գործիք են եղել արիւնոտ մարդկանց ձեռքերին և ի զնաս իրանց անխնայ գռփել են և աւերել իրանց թշուառ և անպաշտպան հարևանների տները։ Ոգևորուած այդ-պիսի յաջողութեամբ Սահրատն անցել էր Սիփան, Բոլանխ, Բլի-ջան, Սարի-Սու, Քօսադաղ և Սինակա լեռները, որտեղից այժմ վերադառնում էր դէպի

իր սիրած արարածը, որը Գոգա-Սարի Աւդռաման աղի աղջիկն էր և որ իր սիրտն ու հոգին իրանց անհուն էութեամբ նուիրել էր նրան։

Եւ Սահրատը սիրում էր գեղեցիկ Խազալէին։

Այո՛, գեղեցիկ էր Խազալէն, որպէս ընդունակ են գեղեցիկ լինելու լեռնային արարածները։ Բնութեան անարատ կենքը իր ստեղծագործող ոյժը իրան յատուկ պարզութեամբ միայն լեռներումն է ինքնուրոյն կերպով երևան բերում։ Եւ այդ դէպքում այդ արարածները դիցուհու տպաւորութիւն են թողնում մարդու վրայ։ Այդպիսիներից էր և Խազալէն։ Նրա փարթամ հասակը, վարդագոյն երեսը, լեռնցու կրակոտ և խոշորակ սևորակ աչքերը, կարապային պարանոցի և հոլանի բազուկների հետ պարզ վկայում էին լեռնային ստեղծող ուժի հզօրութեան մասին։

Եւ այդ հրեշտականման արարածի սիրտը պատկանում էր Սահրատին։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱՏԷ

(Կշարունակուի)

ԱՊԱԳԱՅ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ

(3000 թուական)

Պրոֆէսոր Պաօլօ Մանտեգացցայի սոցիալական ֆանտազիա

Ա. Պաօլօն եւ Մարիան գնում են Անդրօպօլ.—Երեկոյ Սպեցիայի ծովածոցում։

Պաօլօն և Մարիան մեկնեցին Եւրոպայի Միացեալ Նահանգների մայրաքաղաք Հռօմից, բարձրանալով մի մեծ օդապարիկով, որ նշանակուած էր հեռաւոր ուղևորութիւնների համար։

Սա մի էլէքտրական օդապարիկ էր, մէջը երկու հատ հանգիստ նստելու բազկաթոռներով, որոնք զսպանակի օգնութեամբ յարմար մահճակալների էին փոխուում։ Այստեղ կար նոյնպէս պատից կախած մի կողմնացոյց, մի սեղան և մի քառանկիւնեակ, վրան երեք բառ գրուած՝ շարժում, տաքութիւն, լոյս։ Օդապարիկը մի ժամում 150 վերստ ճանապարհ էր կըտրում։ Ճանապարհորդները մի կամ միւս կոճակը սեղմելով ստանում էին լոյս և իրանց ուզած տաքութիւնը։ Մի փոքրիկ էլէքտրական գործիք լուսաւորում էր օդապարիկի ներսը և նրան շարժում պատճառում։ Նրա մէջ տասն օրուայ ուտեստի պաշար էր պահուած։ Պաշարը կայանում էր ապիտակուցային և ածխածնային իրերի չորացրած հիւթերից, որոնք համապատասխանում էին մի քանի ֆունտ մսի և բանջարի. մրգերի փոխարէն ծառայում էին ամենալաւ պտուղների համ և ծաղիկների հոտ ունեցող եթերներ։ Փոքրիկ նկուղում կար երեք էլէքսիր—ուղեղի գործունէութիւն, սիրոյ զգացում և ֆիզիքական եռանդ զարթեցնելու համար։ Մեքենավարների և ծառաների ոչ մի պէտք չէր զգացում, որովհետև ամէն գործ ճա-

նապարհորդներն իրանք կարող էին հեշտութեամբ կատարել։ Կողմնացոյցով և ուրիշ գործիքներով կարող էին դիտել օդապարիկի շարժումը, անցած վերստերի քանակութիւնը և նոյնպէս քամու ուղղութիւնը։ Պաւլոն և Մարիան վերցրին հետները ճանապարհի համար մի քանի գիրք, որոնց թուում կար մէկը՝ «3000 թուական» անունով, գրուած մի բժշկի ձեռքով, որ ջանադիր էր եղել գուշակել, թէ ինչ կը պատահի մարդկութեանը տասը դարից յետոյ։

—Մեր երկարատև ճանապարհորդութեան միջոցին,—ասաց Պաւլոն Մարիային,—ես կը զբաղեցնեմ քեզ՝ իտալերէնից թարգմանելով այդ հին գրող-մարգարէի տարօրինակ ֆանտազիան։ Հետաքրքիր է իմանալ, թէ մինչև որ աստիճան ճիշտ է գուշակել նա ապագան։ Երևի, մենք սրտանց կը ծիծաղենք նրա գիրքը կարդալով։ Դու, իհարկէ, գիտես, որ իտալական լեզուն մէկն էր եւրոպական լեզուներից և միւսների հետ միասին անհետացաւ, երբ լոյս աշխարհ եկաւ ամենի համար մի լեզու—համաշխարհայինը։

Պաւլոի և Մարիայի ձեռնարկած ճանապարհորդութիւնը խիստ հեռաւոր էր. նրանք վճռել էին այցելել համաշխարհային մայրաքաղաք Անդրոպոլը և այնտեղ պսակուելով, իրանց վաղուց ցանկացած հարսանիքը կատարել։ Արդէն հինգ տարի էր, որ սիրային կապով կապուած էին նրանք. այժմ կամենում էին այդ կապն ամրացնել ամուսնութիւնով։ Դրա համար նրանք նախ և առաջ պիտի ներկայանային կենսաբանական սենատին, որի, իբրև բարձրաստիճան ատեանի, պարտաւորութիւնն էր վճռել հարցը՝ իրաւունք ունեն արդեօք Պաւլոն և Մարիան կեանք տալու ուրիշներին։

Նախ քան, Եւրոպան և Ասիան անցնելով, Անդրոպոլ հասնելը, Պաւլոն ուզեց Սպեցիա այցելել և ցոյց տալ իր հարսնացուին այնտեղի նշանաւոր թանգարանը, որի մէջ 3000 թուականի իտալիացիները ժողովել էին բոլորը, ինչով որ կարող էին ընորոշուել վաղուց անցած ժամանակները։

Հռոմից մինչև Սպեցիա թռիչքը կատարուեց մի քանի ժամում առանց որ աէ արկածի։ Երեկոյեան մօտ հասան Սպեցիա և քաղաքի հիւրանոցներից մէկում մի քիչ հանգստանալուց յետոյ օդապարիկից դուրս հանեցին կաուչուկեայ վերարկուները, այսպէս կոչուած indrocato-ները և նստան էլէքտրական նաւակ։ Այդ նաւակում թիավարներին փոխարինում էր, սենեկային ժամացոյցից ոչ մեծ, մի մեքենայ և նստողներին ուզածին պէս շարժում էր նրան։

Սպեցիայի ծովածոցն այդ գիշեր խիստ գրաւիչ էր։ Լուսինն իր գունատ լուսով հեղեղել էր շրջակայքը, և շինուածքները, լեռները, կղզիները նրա ճառագայթներից այնպէս փայլուն էին երևում, որ, կարծես, բրօնզից ձուլուած լինէին։ Մեր սիրահարները, իրար ձեռքից բռնած, զմայլմամբ նայում էին այդ տեսարանին։

—Այստեղ, մեր շուրջը,—ընդհատեց լռութիւնը Պաօլօն,—խաղաղ ննջում է մարդկութեան քանդարեան պատմութիւնը։ Ո՞րքան արիւն-արտասուք է հոսել, մինչև որ հասել են խաղաղութեան և արդարութեան, որ մենք այժմ վայելում ենք։ Բայց որքան մենք դեռ հեռու ենք մեր իդէալից։ Բարեբախտաբար մարդկային մանկութեան այն դարերից հասել են մեզ լոկ քարեր և տխուր յիշողութիւններ։ Բարեբախտաբար եմ ասում, որովհետև որքան աւելի ենք մենք խորասուզւում հնադարեան պատմութեան մէջ, այնքան աւելի կոպիտ ենք դրսևորում մարդուն։

Այդ միջոցին մօտեցան նրանք պատմական թանգարանին։

—Ահա այստեղ, Մարիա,—շարունակեց Պաօլօն,—այս քարանձաւում քսան դար առաջ ապրում էին գազանների մորթու մէջ փաթաթուած մարդիկ, որոնք անծանօթ էին մետալների գործածութեանը։ XIX դարի վերջում մի պարմացի մարդաբան, Ռիգալիա անունով, վերականգնեց այս քարանձաւն իր բնակիչներով՝ նրա մէջ գտնուած մարդկանց և կենդանիների մնացորդների օրինակով։ Այդ իսկ ժամանակ, այսինքն XIX դարի վերջին, այդ ամբողջ կղզին ծածկուեց փառաւոր մարտկոցներով և թնդանօթներով, որոնք իսկական հրաշալիքներ էին մարդաջինջ արուեստի։ Ափերում թնդանօթներ, նաւերի վրայ թնդանօթներ և միտրալիոզներ—աւերման գործիքների մի ամբողջ զինարան։ Բոլոր ամրութիւններն ու զէնքերը պիտի պաշտպանէին ծովածոցը թշնամու յարձակման դէպքում։ Մի քանի դար առաջ ծովածոցը մի սարսափելի ողբերգութեան հանդիսարան դարձաւ։ Ահա այնտեղ դէպի արևելք Լերիչիի վրայ մի հին ամրոց է երևում։ Այնտեղ իբրև գերի բանտարկուեց Ֆրանսիայի թագաւոր Ֆրանցիսկ առաջինը, Պավիայի մօտ եղած պատերազմում յաղթուելուց յետոյ։ Իսկ այստեղ, ծովածոցում, XIX դարի սկզբում ծովային ահռելի պատերազմ տեղի ունեցաւ, որին մասնակից էին բոլոր եւրոպական նաւատորմիղները. նոյն միջոցին Ֆրանսիայում եղաւ ցամաքային պատերազմ։ Կուում էին և խաղաղութեան և պատերազմի համար։ Եւրոպան երկու բանակի էր բաժանուած՝ մի կողմը

խաղաղութիւն էր ուզում, միւս կողմը—կռիւ։ Խաղաղութիւն ձեռք բերելու համար էլ էին կռուում, արեան իսկական ծով էր թէ ջրի և թէ ցամաքի վրայ։ Մի օրուայ մէջ Սպեցիայի և Պարիզի մօտ մինչև մի միլիոն մարդ ջարդուեց։ Այստեղ, ուր մենք այս բոպէիս սքանչելի երեկոյ ենք վայելում, մի ժամուայ մէջ պայթելով օդը ցնդեցին 20 նաւեր։ Այդ վերջին կռիւներն այն աստիճան սարսափելի էին, որ վերջապէս Եւրոպան ահաբեկ եղաւ։ Պատերազմը սպանեց պատերազմը, այդ օրը Եւրոպայի Միացեալ նահանգների առաջի հիմնաքարը դրուեց։ Այդ սև հսկաները, որոնց դու տեսնում ես այնտեղ, սրանք հին նաւեր են մնացած այն սարսափելի օրից։ Այստեղ կարելի է ամեն ազգերի ներկայացուցիչներին գտնել—իտալացոց, ֆրանսիացոց, անգլիացոց, գերմանացոց... Այո, մենք հետաքրքրութեամբ ենք նայում այդ հրէշներին, իսկ վաղը կը տեսնենք, թէ ինչպէս այդ բարբարոս դարում և գիտութիւնը և մարդկային մտածմունքը մի նպատակ ունէին՝ կոտորել և աւերել։ Եւ ներկայացրու քեզ, խմբովին կոտորումը սխրագործութիւն էր համարւում, փառք ու պատիւ էր բերում...Յաղթող զօրապետներն ու ծովապետները դափնիներ էին հնձում, յաղթանակով դիմաւորւում... խղճալի ժամանակներ. թշուառ մարդկութիւն։

—Բայց պատերազմը ոչնչացնելուց յետոյ էլ մարդկութիւնը խաղաղութիւն չի վայելում։ Անթիւ անհամար սովածներ և դժբախտներ են երևան եկել... Ոչ թէ դատողութիւնն, այլ մարդասէր զգացմունքները բերին հասցրին Եւրոպան սոցիալականութեան... Վերջին պապի (կարծեմ Լևոն XX-ի) թագաւորութեան օրերում իտալացոց թագաւորը յօժարակամ վայր իջաւ գահից, ասելով, թէ առաջինն ինքն է ուզում փորձել վճռելու սոցիալականութեան խնդիրը։ Նա մեռաւ փառքով օրհնուելով ամբողջ ազգի բերանից։ Նրա ընկերները բոլորն ընկան բողոքելով։ Գրչի և խօսքի պատերազմ ծագեց հանրապետականների, պահպանողականների և սոցիալականների միջև։ Վերջիվերջոյ սոցիալականները յաղթող հանդիսացան։ Վահանձն թագաւորի սկսած փորձը չորս սերունդներ մի ամբողջ դար շարունակեցին։ Բայց մարդիկ ուղիղ ճանապարհից շեղուեցին։ Նրանք խեղդեցին անհատականութիւնը, և ազատութիւնը հէնց նոյն ձեռքով սպանուեց, որն ուզում էր սերմանել նրան։ Թագաւորի և պարլամենտի բռնապետութեանը մի ուրիշ աւելի ծանր բռնապետութիւն փոխարինեց—դա այն արուեստական մեքանիզմն է, որ մացնելով և պաշտպանելով հաւաքականութիւնը, իր սաղմի մէջ խեղդեց նախաձեռնութիւնը, և նրա

սուրբ իրաւունքները։ Սօցիօլօգները և կենսաբանները վերջնականապէս թաղեցին սօցիալականութիւնը հիմնելով համաշխարհային միացեալ նահանգներ, որոնք կրկնակի ընտրութեան ենթարկուող լաւագոյն մարդկանց ձեռքով են կառավարուում։ Մեծամասնութեան անհեթեթ կառավարութեան տեղը լուսաւոր և ազնիւ փոքրամասնութիւնը գրաւեց։ Այսպիսով մարդկային հասարակութեան իբրև հիմք դրուեց մտաւոր ազնուապետութիւնը։ Բայց աւաղ, մենք դեռևս կէս ճանապարհին ենք, դեռ ևս անպայման լաւ մարդիկ գտնելու հնարքը չէ գտնուած։ Մտածողները և մտածողուհիները, մտածութեան քրմերը և զգացման քրմուհիները մինչև այժմ ոչնչ են անում գտնել լաւագոյն մէթոդը, որով կարելի լինի որոշել, թէ ինչ տեղ է բնութիւնից նախորոշուած ամեն մի երեխայի նրա ծննդեան ժամանակ։

—Պատերազմը ոչնչացուած է, բարբարոս ժամանակների հարկերը, մաքսային հասոյթները և միւս սոյնանման կարգադրութիւնները վաղուց մոռացուած են։ Ֆիզիքական տանջանքները նուազեցնուել են. կեանքը միջին թուով մինչև 60 տարի է տևում։ Բայց հիւանդութիւնները մինչև հիմա էլ ծնւում են սապատողներ, խելացնորներ, իծնէ յանցաւորներ, և այն իղձը, որ մարդուս մահը տեղի ունենայ առանց տանջանքի, բնական կերպով, դեռևս հեռու է իրականանալուց։

Մարիան լուռ լսում էր Պաօլոին, որը ծանր խոհերի ազդեցութեան տակ ինքն էլ վերջապէս մտածման մէջ ընկաւ։ Այն քայլը, որ արել էր մարդկութիւնը քսան դար շարունակ առաջդիմութեան ասպարիզում, նրան շատ չնչին էր թւում։

Մարիան ուզեց ընդհատել լռութիւնը և փարատել այդ տխուր տրամադրութիւնը, ուստի կանանց յատուկ տակտով վճռեց իր փեսացուի մտքերը դէպի այլ կողմ գրաւել։

—Ասա ինձ, Պաօլո,—հարցրեց նա,—ինչու դու բոլոր մեռած լեզուներից ընտրեցիր իտալերէնը միայն այնպէս սիրով ուսումնասիրելու համար։ Դու երբէք այդ հետաքրքրական հանգամանքն ինձ չես բացատրել։ Կարծում եմ, ոչ նրա համար, որ բնագրում կարդաս «3000 թուականը»։

—Ո՛չ, սիրելիս, այլ որովհետև իտալական գրականութիւնը թողել է մեզ համար երկու ամենամեծ բանաստեղծների, Դանթէի և Կարլ Պօրտի «La divina Comedia» և «Giovani Bonge»։ Մենք նրանց միասին կը կարդանք, և դու ինքդ կը տեսնես, որ ես շատ պատճառներ եմ ունեցել ուրիշ լեզուների միջից իտալականն ընտրելու։ Ոչ ոքի չյաջողեց այնպէս շարժել մարդկային սրտի բոլոր նրբաթելերը, ինչպէս այդ արեց

Ալիգիերին, և ոչ ոք չգիտէ այնպէս ստիպել մարդկանց ծիծաղել, ինչպէս Պօրտը։ Բայց Պօրտին հասկանալու համար բաւական չէ միայն իտալերէն իմանալ, պէտք է նաև ուսումնասիրել milense, այն բարբառը, որով խօսում էր լոմբարդացիների մեծ մասը տասը դար առաջ, երբ Իտալիան քսան բարբառից աւելի ունէր։

- Նաև մի կողմ թողնելով Դանթէին և Պօրտին, ես միւս մեռած լեզուներից իտալերէնը նախապատիւ համարեցի այն պատճառով, որ նա դասական աշխարհի և վերածնութեան դարի լեզուն էր, և նոր, աւելի փայլուն քաղաքակրթութեան լեզուի համար իբրև հիմք ծառայեց։ Իտալերէն լեզուն իմանալով կը ծանօթանաս Փիւդիասի, Արիստոտէլի, Կեսարի, Տակիտոսի, Հօրացիոսի, Միքէլ-Անջէլօի, Գալիլէի, Լէօնարդօ Վինչիի և Ռաֆայէլի հետ։ Բնաւ ոչ մի լեզու իր մէջ չի ամփոփել այնքան փառաւոր և ազնիւ անուններ, որքան իտալերէնը։ Ահա պատճառը, որ երբ հարց ծագեց Եւրոպայի Միացեալ նահանգների մայրաքաղաքի մասին, յատկապէս Հռոմը ընտրուեց։

—Ո՜հ, սիրելի Պաօլո,—բացագանչեց Մարիան ժպտալով,—դու դրանով ստիպում ես ինձ պարծենալ հռոմուհի լինելովս։

Այն ինչ մեր ճանապարհորդների նաւակը ճեղքելով ծովածոցի արծաթափայլ ալիքները, մօտեցաւ Սպեցիայի հին զինարանին։ Այդ միջոցին նրանց ականջին լսուեցին ինչ որ ճըռճռոցի նման միակերպ հնչիւններ, որ գալիս էին նաւակայանի կողմից։ Պաօլոի և Մարիայի աչքերն ակամայ այդ կէտի վրայ դարձան, ուր, կարծես, մի ինչ որ կլոր հրէշ կուում էր ալիքների հետ։ Նաւակը մօտ գնաց,—հնչիւնները աւելի պարզ, աւելի միակերպ դարձան։

—Այդ ի՞նչ է, հարցրեց Մարիան, երբ նաւակն ափից մի քանի սաժէն հեռու կանգ առաւ։

—Դա փայտէ լաստի նման մի բան է, որից XIX դարի բարբարոսները իրանց նաւերն էին կապում։ Այն օրերից ի վեր դարեր շարունակ այդ լաստը մնացել է այստեղ իբրև յիշատակ այն ժամանակների, որոնք, մարդկանց բարի բախտից, այլևս վերադառնալու չեն։

Այն ինչ լաստից տարածուող տխուր և միակերպ հնչիւններն աւելի և աւելի էին լսելի դառնում։ Սուր և կրկնակի ձայնը երկու տարբեր հնչիւններից էր կազմուած՝ դանդատաւոր և ցածր։ Սկիզբը լսուում էր բարձրահնչուն և տևողական «ի-ի-ի-ի», ապա, ոչ-երկար լռութիւնից յետոյ, կարճ և խուլ «թրըխկ» և դարձեալ նոր լռութիւն, որին հետևում էին անընդհատ մերթ դանդատաւոր, մերթ խուլ ձայները։

Մարդկային սիրտս իր կեանքի ճանապարհը նոյնպէս երկու հնչիւնով է չափում՝ «թի՛ք-թա՛ք», բայց դրանք աւելի ուրախ և համարեա հանդիսաւոր կելլով են հնչում։ Իսկ այդ «ի—ի—ի—ի»-ն և «թրը՛խկ»-ն կարծես, պայթող հսկայական սրտի զարկեր լինէին, սրտի, որ մեր ժամանակ զարկում էր երկրային մոլորակի վրայ։

—Աստուած իմ, ասա՛ ինձ, Պաօլո, ի՞նչու է այդ փայտէ հրէշը այսպէս տանջւում, լալիս և գանգատւում,—հարցրեց Մարիան։

—Երևի, նա ցնորուել է,—պատասխանեց Պաօլոն, ակամայ ժպտալով,— կամ գանգատում է, որ նրան սեղմել են երկաթէ օղակով և հարկադրել են զարկուել դատարկ տարածութեան մէջ։

Բայց երևում էր, որ այն կատակախառն բացատրութիւնը չէր համապատասխանում երիտասարդի տխուր խոհերին, որոնք զբաղուած էին հեռու անցեալով։

—Երթանք այստեղից,—ասաց Մարիան,—այդ տնքոցները սարսափ են բերում վրաս, ով գիտէ, այդպիսի դէպքում մարդ լաց էլ կարող է լինել։

—Ճշմարիտ ես ասում, երթանք։ Այդ ձայներն ինձ վրայ էլ թախիծ են ազդում։ Ինձ թւում է, թէ այստեղ տեսնում եմ մարդկութեան ամբողջ կեանքի տխուր պատկերը։ Ինձ լսում են գանգատներ՝ նոր ծնած մանուկների, սիրոյ մէջ անաջողութիւն կրած երիտասարդների, մահից վախեցող ծերերի, բոլոր դժբախտների, բոլոր ղրկուածների, մի խօսքով նրանց, որոնք փափագում են հաց, հարստութիւն, փառք, սէր... Այդ գանգատները երկրի ամէն ծայրերից լսում են, և նրանց հետ դէպի երկինք են վերուղղւում հարցեր՝ ի՞նչի համար է կեանքը, ի՞նչի համար է տանջանքը։ Բայց այդ բոլոր աղաչանքների դիմաց միայն մի պատասխան կայ՝ այսպէս է եղել, այսպէս պէտք է լինի և այսպէս միշտ կը լինի։

—Ո՛չ, Պաօլո,—շտապեց առարկել Մարիան,— միշտ այսպէս չի կարող լինել։ Մտածիր սպանութեան և աւերման ծառայող նաւերի մասին. նրանք այժմ անգործ ընկած են... Մտածի՛ր պատերազմի մասին, նա էլ այժմ անիրագործելի է... Ո՛չ, առաջադիմութիւնը երբէք չի դադարում մի տեղ։ Եւ այդ լաստի գանգատները արդեօք ահեղ դատավճիռ չե՞ն այն երևոյթների դէմ, որոնք պիտի անհետ կորչեն երկրի երեսից։

—Թող այնպէս լինի, ասաց Պաօլոն, հակառակ ուղղու-

թիւն տալով նաւակին, որպէս զի այլ ևս չլսի այդ տխուր ձայները։

. . . . .
. . . . .

Միւս օրը պայծառ արևը փայլում էր Սպեցիայի երկընքում։ Միակերպ գիշերին յաջորդեց աշխատանքի օրը։ Մեր նշանուածները, մի քանի հին զրահակիր նաւեր զննելուց յետոյ, նստան իրանց օդապարիկը և թռան դէպի արևելք,—այն արևելքը, որտեղից դարերից ի վեր մարդկանց սրտերի մէջ յոյսի մշտավառ, կենդանարար ճառագայթներ են հոսում։

Բ. Սպեցիայից դէպի բուրգերը. — Բուրգերից դէպի Փորձ կղզին.—Հաւասարութեան երկիր.—Ցիրաննօպոլ.— Տուրացիա եւ սոցիալիստական հանրապետութիւն.— Լոզոպոլ.— Ուրիշ կառավարութիւններ եւ ուրիշ սոցիալական կազմակերպութիւններ։

Պաոլոն և Մարիան, դուրս թռչելով Սպեցիայից, շուտով հասան Սիկիլիայի վրայ, ուր ողջունեցին Էտնային, որ մի քանի դար առաջ արդէն մարել էր։ Հետևեալ օրը նրանք եգիպտոսում էին և տեսան վիթխարի բուրգերը, որոնք, չնայելով իրանց գլխովն անցած հարիւրաւոր դարերին, առաջուայ պէս անյողդողդ կանգնած էին իրանց մռայլ փառաւորութիւնով։ Բայց այլ ևս փուխր աւազ չէր սփռուած նրանց ստորոտում, այլ նոր ծովի ալիքներն էին շուրջը գոռում-գոչում, ծովի, որ, մարդկանց հսկայական ջանքերի շնորհիւ, ծածկել էր Աֆրիկայի անապատները։ Դրա հետևանքն այն եղաւ, որ Եւրոպայի կլիման մի քանի աստիճան աւելի ցրտացաւ։ Սակայն մարդիկ այդ ժամանակ արդէն այնքան տիրապետել էին բնութեան ոյժերին, որ եթէ կամենային, կարող էին, ջերմ օդի հոսանք ուղղելով, ոչնչացնել բևեռային սառոյցները։

Մարիան ցանկացաւ զննել բուրգերն, ուստի Պաոլոն ցած թողեց օդապարիկն այդ հսկաներից մէկի ստորոտը։ Բացատրելով մի քանի վերտառութիւններ, որոնք փորագրուած էին քարերի վրայ վաղուց անհետացած մի լեզուով՝ Պաոլոն առաջարկեց ձկնորսութեամբ զբաղուել։ Կարճ միջոցում նաւակը լցուեց ձկներով։ Առատ որսը նրանով կարելի էր բացատրել, որ ծովի մէջ թողնուում էր մի փոքրիկ էլէքտրական լամպ, որը ջրային բնակիչներին բազմութեամբ գրաւում էր իրան։ Ընտրելով այդ բազմութեան միջից ամենալաւ ներկայացուցիչներին, Պաոլոն

մնացեալը կրկին ծովը նետեց։ Մեր ճանապարհորդները գիշերն անցկացրին բուրգերից մէկի վերին հրապարակիկում՝ զմայլուելով լուսնի տեսքով և մտաբերելով այն հեռաւոր անցեալները, երբ այդ, այն ժամանակ անապատ և ամայի, վայրում իշխում էին հին եգիպտացիները, թուրքերը և իտալացիները։

Ծովի վրայի զբօսանքը խիստ հաճելի էր թուացել Մարիային, և նա ասաց Պաօլոին.

—Լաւ չէ՞ր լինիլ որ մենք ծովով շարունակէինք մեր ճանապարհորդութիւնը։

—Ի՞նչու ոչ, —պատասխանեց Պաօլոն,—ճիշտ այս երեկոյ այստեղ կը լինի «Տիեզերք» ծովային նաւը։ Նա Լօնդոնից Հնդկաստան է գնում և ճանապարհին մտնելու է Ցէյլոն։ Օդային ճանապարհորդութիւնը բնաւ արգելք չպէտք է լինի զանազանակերպելու մեր ճանապարհը և՛ ծովով և՛ ցամաքով։ Մենք այստեղից անգլիական նաւով կուղևորուենք Ցէյլոն։ Օդապարիկով էլ մենք պէտք է մտնէինք այդ հետաքրքրական կղզին, ուր պահպանուել են վաղեմի կառավարութիւնների բոլոր ձևերը, ուստի և կոչուել է «Փորձ» կղզի։

Իսկապէս երեկոյեան եկաւ «Տիեզերքը» և բուրգերի մօտ կանգ առաւ, որ ցամաք հանէ ճանապարհորդներին, որոնք ցանկանում էին զննել հնութեան յուշարձանները։ «Տիեզերքը» երբէք նման չէր առաջուայ շոգենաւներին։ Նա հին նաւերի հետ համեմատելով խիստ փոքր էր, և նրա մեքենան ոչ թէ շոգեշարժ էր, այլ էլէքտրաշարժ։ Ծովային ջուրը պէտք էր գալիս ջրածին գազ արտադրելու և մաքրուում էր խմելու համար։ Ածխի մեծ պաշար ունենալու կարիք էլ չկար, ինչպէս առաջ։ Նաւի իրանը շինուած էր ալումինիոնից, որ մի թեթեւակշիռ մետալ է, երկաթից աւելի առաձգական։ Նաւի արագութիւնը խիստ նշանաւոր էր, որով նա կարողանում էր ամեն օր ճանապարհից շեղուել դէպի ափը և թարմ ուտելիքի պաշար վերցնել։ Ճանապարհորդները ծովային հիւանդութիւնից չէին նեղուում. հէնց որ սկսուում էր ալեկոծութիւնը, իսկոյն գուրս թողած իւղի հոսանքը հանդարտեցնում էր նաւի շուրջը գտնուող ալիքները։ «Տիեզերքի» վրայ կային մեծ ու հարուստ քաղաքի կենսական բոլոր յարմարութիւնները։ Նեղ և շնչարգել նաւասենեակների մասին, որոնք զզուանք են պատճառում խոհանոցից և մեքենայից եկող անախորժ հոտերով, խօսք չկար։ Նաւասենեակներն առատ լոյս և օդ ունէին, շքեղ կահաւորուած էին, ծաղիկներով զարդարուած և այնպէս կարգաւորուած, որ ամեն մի ճանապարհորդ ազատ լինի։ Խոհանոցն ամեն

ժամանակ պատրաստ էր ծառայելու։ Կային նմանապէս հարուստ գրադարան, ամենատեսակ խաղեր և երաժշտութիւն ուղևորներին զուարճացնելու համար։ Կապիտանը, որ աւելի մօտ ծանօթ էր ճանապարհորդներին, քան թէ առաջուայ նաւերի հրամանատարները, ազատ ժամանակ շատ ունենալով՝ մշտապէս գտնուում էր ուղևորների շրջանում։ Ամեն երեկոյ փոքրիկ բեմի վրայ ներկայացում էր կազմուում—խաղացուում էին պիէսներ և կատարուում երաժշտական երկեր։ Ուղևորներից ոմանք, իբրև սիրողներ, նոյնպէս մասնակցում էին ներկայացումներին։ Նաւի ընթացքի կատարեալ հանդարտութիւնը հնարաւորութիւն էր տալիս պարահանդէսներ կազմելու և բիլեարդ խաղալու։

Բուրգերից մինչև Ցէյլօն երկու օր ճանապարհորդեցին։ Մինչև Ցէյլօն մի քանի ժամուայ ճանապարհ մնացած, կղզու կողմից զգացուում էր արդէն ծաղիկների, գլխաւորապէս վարդի հոտը։ Ափ իջան Ցէյլօնի նոր քաղաքներից մէկի նաւահանգստում, որ կոչւում էր «Հաւասարութիւն»։ Այդ քաղաքը հիմնուած էր այն մարդկանց ձեռքով, որոնք ցանկացել էին մարդկային երջանկութեան հարցը վճռել, հաւասարացնելով բոլոր մարդկանց ոչ միայն իրաւունքների և պարտականութիւնների, այլ նաև կացութեան, կեանքի եղանակի, զգեստի և այլ պարագաների նկատմամբ։

Պաօլօն և Մարիան ափ իջնելով պատահեցին հետաքրքիրների մի ամբոխի, որ սպասում էր անգլիական նաւի գալուն։ Ամենքը հագած էին միատեսակ սպիտակ մետաքսէ շորեր։ Նրանից ոչ ոք մօրուք չունէր, բոլորի մազերը կարճ խուզուած էին, այնպէս որ միմիայն ձայնից կարելի էր որոշել նրանց ինչ սեռի լինելը՝ տարիքը նոյնպէս որոշել անկարելի էր, ըստորում ծերերի մազերը ներկուած էին։ Նաւահանգստին կից գտնուում էր մի մեծ հրապարակ, շրջապատուած հաւասար բարձրութեան և միագոյն տներով։ Դէպի հրապարակ հովհարաձև ուղղուած էին փողոցներ՝ թուով քսան։ Բոլոր փողոցներում երևում էին նոյնպիսի բարձրութեան և գոյնի տներ, ինչպէս և հրապարակում։

Պաօլօն և Մարիան աջ ու ձախ նայելով՝ անցան այդ փողոցներից մէկով, ջանադիր լինելով գտնել այդ տխուր միակերպութիւնը խանգարող մի բան, բայց իզուր։ Բոլոր քաղաքացիները միակերպ էին ման գալիս՝ ոչ հանդարտ, ոչ արագ, կարծես, նրանք միևնոյնն էլ մտածում էին. ամենքի դիմագծերն անգամ, կարծես, միանման էին։ Մի խօսքով, բոլորն ամեն

գանով կատարեալ հաւասարութեան տեսք ունէր։

Պաւլոն կարծելով որ ընակիչներից մէկը կամ միւսը պիտի գիտենան համաշխարհային լեզուն, դիմեց նրանցից մէկին հարցնելով, թէ որտեղ կարելի է իջևան գտնել մի օրուայ համար և ով է քաղաքագլուխը։

—Ո՞ր տան դուռը կամենաք, կարող էք զարկել, և ձեզ կը հիւրասիրեն, պատասխանեց քաղաքացին։— Իսկ ինչ կը վերաբերի քաղաքագլխին, դուք նրան կը գտնէք վեցերորդ փողոցի № 1000 տան մէջ։ Մեր տները,—շարունակեց նա,— թուանշաններով են միայն որոշուում, ճիշտ այնպէս, ինչպէս մենք ինքներս։ Ոչ մէկը մեզնից անուն չունի, այլ իւրաքանչիւրը ծնուելիս միմիայն համար է ստանում և նրա հետ ապրում է մինչև գերեզման իջնելը։ Երբ մեզնում մէկը մեռնում է, առաջին ծնուողը ժառանգում է նրա համարը, այսպիսով հասարակութիւնը երբէք չի ընդհատուում։ Վերջին նորածնին տրուած ամենամեծ համարը մի և նոյն ժամանակ ցոյց է տալիս և ազգաբնակութեան քանակութիւնը, ներկայումս այդ համարը 10,000 է։ Մեր քաղաքագլուխը «այսօրուան ընտրուած» անունն է կրում։ Մեզնից ամեն մին, որ քսանումէկ տարեկան է, թէ տղամարդ լինի թէ կնամարդ—միևնոյն է, մի օրուան գլուխ է ընտրուում, այդ օրուայ ընթացքում կառավարում է քաղաքը, դատաստան անում և առհասարակ կատարում այն բոլորն, ինչ որ Անդրոպոլում անում են հարիւրաւոր աստիճանաւորներ։ Հաւասարութիւն քաղաքի կառավարութիւնը շատ հեշտ է, որովհետև իւրաքանչիւր ընտրուած քաղաքացի, կարծես, ինքն իրանով ամենին կառավարող օրէնք է ներկայացնում։

Լսելով շատախօս քաղաքացու զրոյցը, Մարիան չկարողացաւ զսպել ժպիտը, բայց նա չնկատեց այդ և, իբր թէ ոչինչ չի պատահել, չափաւոր, կարծես տակտով, քայլելով շարունակեց իր ճանապարհը։

—Սիրելի Պաւլո, բացականչեց Մարիան,—մենք խելագարների երկիր ենք եկել։ Գնանք այստեղից շուտով։

—Օ՜, ոչ, Մարիա,—առարկեց Պաւլոն,—այդ հաւասարութեան թագաւորութիւնը ինձ համար շատ հետաքրքրական է, դրան պէտք է մօտիկից ուսումնասիրել։ Հազար հարիւր տարի է անցել այն օրից, երբ ֆրանսիացիները սարսափելի արիւնահեղ յեղափոխութիւն արին, մարդկանց մէջ հաւասարութիւն տարածելու նպատակով։ Գիլեոտինը հազարաւոր անմեղ գլուխներ կտրեց, բայց մինչև այսօր էլ մարդիկ շարունակում են

իշխել իրար վրայ, և սոցիալական իէրարխիայում, որ մեզնում գոյութիւն ունի, ամեն մէկին տեղ է տրւում ոչ թէ միւսների հետ հաւասար, այլ համեմատ իրանց երախտիքին։ Եւ ահա այստեղ, կղզու վրայ, տասնումէկ դար անցած, ջանք են անում 1789 թուականի բաղձանքն իրականացնել։

—Դեռ լաւ է որ այստեղ Գիլէոտին չկայ և այդ բոլոր խելացնորները կարողանում են ազատ անձնատուր լինել իրանց մտապատրանքներին։

— Սիրելի ուղեկցուհիս,--ասաց Պաօլօն,—ես սաստիկ քաղց եմ զգում և պատրաստ եմ առաջին իսկ դուռը զարկել և հիւրընկալութիւն խնդրել։

Այնպէս էլ արին մեր ճանապարհորդները։

Վեցերորդ փողոցի № 365-ի դուռը, որը նրանք ծեծեցին, իսկոյն բացուեց, և նրանք մտան ընդունարան, ուր նրանց դիմաւորեց ոտից գլուխ սպիտակ հագնուած մէկը։ Արտաքինից դժուար էր որոշել, թէ ո՞ր սեռին է պատկանում նա, բայց երբ սկսեց խօսել և համաշխարհային լեզուով ողջունեց մեր ճանապարհորդներին, պարզ իմացուեց, որ նա կին է։

—Ներեցէք, տիկին,—ասաց Պաօլօն,—մեզ ասացին, թէ ձեր քաղաքում հիւրանոց չկայ, և ճանապարհորդը, ո՞ր տանն ուզենայ, կարող է խնդրել հիւրընկալութիւն։ Ուստի մենք կը խնդրէինք ձեզ, որ տաք մեզ նախաճաշիկ։

—Խնդրեմ հրամեցէք նստէք,—պատասխանեց տանտիկինը,—բայց ինձ շատ ցաւալի է,—շարունակեց նա,—որ չեմ կարող ձեր խնդիրքը կատարել։ Նախաճաշիկի ժամն արդէն անցել է, և դուք ստիպուած պիտի լինէք սպասել ճաշին, որ մեզնում տրւում է տասեօթներորդ ժամին։

—Ներեցէք, տիկին, բայց մենք սաստիկ սոված ենք։ Մի ամենահամեստ նախաճաշիկ, օրինակ—ձու և հաց մեզ բաւական կը լինէր։

—Ցաւում եմ, որ իրաւունք չունեմ հաւասարութեան օրէնքը խախտելու։ Գուցէ ձեզ մօտ գտնուի որև է սառն ուտելիք, որ հնարաւորութիւն կրտայ սպասելու մինչև ճաշ, իսկ մինչև այդ ժամանակ դուք կարող էք հանգստանալ,—ահա ձեզ հիւրընկալութեան սենեակը, ուր կարող էք ազատ վարուել, ինչպէս ձեր կամքն է։

Պաօլօն և Մարիան մշտապէս իրենց հետ ունենում էին ճանապարհական պայուսակի մէջ սպիտակուցային թանձրացրած հիւթեր և նեարդեր գրգռող տարրեր։ Կրկին անգամ ներողութիւն խնդրելով տանտիկնոջից՝ նրանք մտան առա-

Ջարկած սենեակը, խելագարի նման ծիծաղելով երկրի տարօրինակ սովորութիւնների վրայ։

Երբ ճաշի ժամը հասաւ, տան մէջ հնչեց զանգակը. նոյն միջոցին զանգակների ձայն լսուեց և ամբողջ քաղաքում։

Պաօլօն և Մարիան մտնելով սեղանատուն՝ տեսան ընտանիքը ճաշի նստած։ Ընտանիքը հինգ հոգուց էր բաղկացած։ Սեղանի մօտ սպասուհի չկար։ Ընտանիքի անդամներից իւրաքանչիւրը՝ հայր, մայր, զաւակներ, հերթով մօտենում էին պատի միջի բացուածքին և իրանց ձեռքով վերցնում խոհանոցից տրուած կերակուրները։

Տանտէրը, որ թէ զգեստով և թէ կերպարանքով քիչ էր տարբերւում իր միւս համաքաղաքացիներից, խիստ սիրալիր ընդունեց Պաօլօին և Մարիային։ Խօսակցութեան մէջ հարց ու փորձ անելով հիւրերին նրանց ճանապարհորդութեան մասին, պատմելով նորութիւններ Հաւասարութիւն քաղաքի և կղզու միւս քաղաքների մասին, նա, իմիջի այլոց, սկսաւ գովաբանել իր քաղաքի սոցիալական կարգերը։

—Տեսնում էք,—ասաց նա,—ինչ գեղեցիկ սիստեմ է մեզնում, ամեն բանում կարգ, ամեն տեղ միակերպութիւն։ Այս ժամին, օրինակ, մեզնում ամենքն առանց բացառութեան ճաշում են և ուտում միևնոյն կերակուրը։ Ով որ դեռ ընտանիք չունի, նա այնուամենայնիւ ապրում է որևէ ընտանիքի մէջ և սեղանակից լինում նրան։ Բայց դա առ ժամանակ է, ըստորում անամուսնութիւնը մեզնում արգելուած է, ինչպէս արգելուած է, 'ի դէպ ասած, և երեք զաւակից աւելի ունենալը։ Ամեն մի մասի սկզբում բոլոր ընտանիքի գլխաւորներն ուղարկում են մեր «այսօրուան ընտրուածի» վարչատունը կերակրների օրինակային ցուցակներ, թէ եկող ամսուայ ընթացքում ինչ կերակրներ կը ցանկանային ունենալ նախաճաշիկին, ճաշին և ընթրիքին։ Միատեսակ առաջարկութիւնների մեծամասնութիւնը հաստատւում է և օրէնք դառնում ամենքի համար։ Մի՞թէ դուք համաձայն չէք, որ այսպիսի կարգը հասարակական կազմակերպութեան իդէալ է ներկայացնում։ Չկայ մեր մէջ առաջին և վերջին, ամենքը հաւասար են։ Չկայ փառասիրութիւն, չկայ կռիւ իշխանութեան համար, չկայ նախանձ։ Ի՞նչպէս է, հաւանո՞ւմ էք։

Պաօլօն չկամենալով հիասթափեցնել սիրալիր վարուող տանտիրոջը, անորոշ խօսքերով կարճ կտրեց.

—Ի հարկէ, ձեր սոցիալական կազմակերպութիւնը շատ հետաքրքրական է, խիստ ինքնուրոյն....

—Օ՜, թանկագին պարոն,—ընդհատեց խօսակիցը,—ոչ միայն ինքնուրոյն և հետաքրքրական է, այլ և անգնահատելի գերազանցութիւններ ունի, սոցիալական կեանքի միւս բոլոր կարգերի հետ համեմատելով։

—Բայց ինչպէս էք դուք կարողանում միևնոյն բանով ամենքին էլ գոհացնել։ Չէ՞ որ մարդիկ զանազան ճաշակի տէր են։

—Դեռ ևս—այո՛, բայց միևնոյնին ընտելանալը հետզհետէ ոչնչացնում է այդ զանազանութիւնը։ Մենք յոյս ունենք ժամանակով բոլոր մարդկանց հաւասարացնել, ինչպէս ֆիզիքականի և մտաւորի, այնպէս էլ հակումների ու ճաշակի վերաբերմամբ. Միշտ, ամեն տեղ և ամեն բանում լիովին հաւասարութիւն—սա է մեր իդէալը։ Ահա, օրինակ, այս տարի մեզնում մի օրէնք է քուէարկուած, որով քաղաքացիները կարող են միայն Մայիսի 1-ին ամուսնանալ։ Իդէպ նկատեմ, որ մենք սէրին էլ անձնատուր ենք լինում ամենքս միևնոյն ժամին, առաւօտները, երբ յատուկ նշանակուած զանգակը հնչում է կառավարչական տանը։ Մի՞թէ դուք չէք համարում գեղեցիկ և մինչև անգամ բանաստեղծական այն միտքը, թէ երբ դուք ուտում էք, քնում, զբօսնում, ձեր բոլոր համաքաղաքացիներն էլ նոյնն են անում։

Այսպիսի խօսքեր լսելով՝ Պաօլօն ստիպուած էր միայն լռել և չանդիր լինել զսպելու ակամայ ծիծաղը։

Հաւասարութիւն անունով օրիգինալ քաղաքի այցելութիւնից յետոյ, Պաօլօն և Մարիան եկան Տուրացիա, մայրաքաղաքը մի փոքրիկ պետութեան, որ կազմակերպուած էր հաւասարական-սոցիալիստական սկզբունքների հետևմամբ։ Այստեղ նմանապէս շատ հետաքրքրական և զուարճալի կարգեր կային, նման նախանցեալ քաղաքում եղածներին։

Խնդրելով առաջին հանդիպող պատանուն ցոյց տալ մի հիւրանոց, ուր կարելի լինի իջնել, Պաօլօն ցանկացաւ իմանալ թէ ում հետ է խօսակցում, և հարցրեց պատանուց, թէ ով է նրա հայրը։

—Չգիտեմ,—պատասխանեց պատանին,—բայց և ոչ ոք մեզնում չի կարող ցոյց տալ իր հօրը։ Ես միայն մօրս եմ ճանաչում, բայց որովհետև նա խիստ շատ սիրականներ ունի, ուստի միանգամայն անհնարին է դառնում վճռել այն հարցը, թէ ես ում որդին եմ։ Ամեն մէկը կարող է իր իրաւունքը յայտնել իբրև ինձ կեանք տուող։ Այդ պատճառով է ահա, որ մեզ ազգանունն էլ մօր անունով են տալիս։ Մեզնում

ամուսնութիւն չկայ, սէրն ազատ է։ Պետութիւնն է ընդհանուրի և ամեն մէկի հայրը։

Մարիան հարցրեց պատանի սոցիալիստին, թէ ինչո՞ւ է նրանց քաղաքը Տուրացիա կոչւում։

—Այսպէս կոչւում է ի պատիւ մի ոմն Տուրատիի,—բացատրեց պատանին, —որ ապրել է Իտալիայում XX դարի վերջը։ Սա մի ազնիւ և խելացի մտածող է եղել, որի վարդապետութիւնը ծառայել է իբրև հիմք մեր հանրապետութեանը։

Տուրացիան խիստ հետաքրքրեց Մարիային, ուստի Պաօլոն մանրամասն պատմեց նրան բոլորն, ինչ որ գիտէր վաղուց մոռացուած և ասպարէզից անհետացած սոցիալիստական տեսութիւնների և նրանց պատմութեան մասին։

—Բոլորն, ինչ կարողացայ տեսնել Տուրացիում, ինձ այն համոզման է բերում, որ ընդամենը հինգ տարուայ փորձը տեւողական չի լինիլ։ Սոցիալիստների մէջ բազմաթիւ տգէտ և թոյլ բնաւորութեան տէր մարդիկ կան, որոնք եկել են այստեղ այն յոյսով, որ այստեղ նրանց թերութիւնները չեն խանգարիլ նրանց բաղդ ձեռք բերելու։ Վարչութեան գլուխ կանգնած տեսայ մի քանի խելացի մարդկանց, բայց դժբաղդաբար աւելի սրտի մարդկանց, մինչդեռ նրանք պարտաւոր են լուծել մի ոչ պակաս դժուար խնդիր, քան շրջանակի քառակուսիացման խնդիրն է, այսինքն տալ աշխատանք ամեն մէկին նրա հակումների և ընդունակութիւնների համեմատ և տալ բաւարարութիւն ամեն մէկի ցանկութիւններին, մինչդեռ ցանկութիւնները որքան անսահման են, ընդունակութիւնները որքան տարբեր։ Այդտեղ պետութիւնը ներկայանում է որպէս մի հսկայական կենդրոն, որ իրան է քաշում բոլոր հիւթերն ու ոյժերը և պարտաւորւում է բաշխել այդ հիւթերն ու ոյժերը ամենիս հաւասարապէս։ Բայց հնարաւո՞ր է արդեօք այդ, երբ բաշխումն այնուամենայնիւ մարդկանց ձեռքով է կատարւում, որոնք որքան էլ խելացի և մարդասէր լինեն, կարող են սխալուել, ունենալ իրենց համակրութիւններն, իրանց կրքերը։ Սրանից անհրաժեշտօրէն առաջ կը գան մոլորութիւններ ու սխալանքներ, իսկ նրանց հետևանքը կը լինի դժգոհների ահագին բազմութիւն։

—Բացի դրանից, ապա իր աշխատանքի պտուղներից օգուտ քաղելու անկարելիութիւնը, որպէս զի իր զաւակներին ժառանգութիւն թողնէ. ապա մաքառման բացակայութիւնը, ըստորում այդտեղ չկան ոչ հարստահարողներ, և ոչ հարստահարուողներ,—ահա սրանք են ոչնչացնում անհատի մէջ ամեն

եռանդ, առաջացնում անզգայութիւն, անտարբերութիւն դէպի ապագան, որն արդէն սկսում է զգացուել հասարակական մրթնոլորտում։

—Երէկ, երբ դու քնած էիր, ես երկար խօսակցեցի Տուրացիայի պարագլուխներից մէկի հետ և գտայ, որ նա աւելի բանաստեղծ է քան թէ պետական մարդ։ Ամենից առաջ նա սաստիկ ոգևորուող է։ Նա հաստատում է, որ նրանց հանրապետութիւնը մեծ ապագայ ունի և ժամանակով մեր մոլորակի բոլոր սոցիալական կողմերը կը միացնէ։

Տուրացիայից մեր ճանապարհորդները ուղևորուեցին Լոգոպոլ, կամ խօսքերի քաղաքը։ Այդ քաղաքում, որ իր մէջ հին պարլամենտական կարգն էր վերանորոգել, նրանք բիչ հետաքրքրական բան տեսան։ Լոգոպոլը հին Անգլիայի ճիշտ պատճէնն էր ներկայացնում։ Տարբերութիւնը միայն նրանում էր կայանում, որ այդտեղ թագաւորը գահակալում էր ոչ ժառանգաբար, ինչպէս Անգլիայում, այլ ընտրութեամբ, որ հինգ տարին մի անգամ կատարում էին պալատը և սենատը։ Թագաւորի պարտաւորութիւնն էր միայն վճիռներ ստորագրել, մինչև անգամ յանցաւորներին ներելը նրա իրաւասութիւնից դուրս էր։ Բոլոր պատգամաւորները, մինիստրները և սենատորները ընտրովի էին։ Առհասարակ ընտրողական սկզբունքը շատ զարգացած էր։ Ընտրողների ժողովները ոչ միայն իրանց ներկայացուցիչներին պալատ և սենատ էին ուղարկում, այլև իրաւունք ունէին արտակարգ ժողովներ կազմելու՝ որպէս զի կամ քուէարկութիւնով որևէ կարևոր քաղաքական հարց վճռեն, կամ որևէ պատգամաւորի, սենատորի կամ մինիստրի անհաւանութեան քուէ տան։ Նա, ում որ անհաւանութիւն էր քուէարկուում, անյապաղ վերցնում էր վրայից լիազօրութիւնը, և նրա փոխարէն մի ուրիշն էր ընտրուում։ Այդ հանգամանքը փոքր ինչ բարւոքում էր Լոգոպոլի պարլամենտական սիստեմը՝ համեմատելով հին պետութիւնների հետ, բայց ընդհանրապէս նրա անբաւարարութիւնը նոյնն էր մնում, որովհետև կաշառումները, խարդաւանքները և պարլամենտական ռէժիմի միւս թերութիւնները ծաղկած էին այնպէս, ինչպէս հին ժամանակ։

Բացի Հաւասարութիւն, Տուրացիա և Լոգոպոլ քաղաքներից Ցէյլօնում կային և շատ ուրիշ մարդկային ընկերութիւններ, զանազանակերպ սոցիալական կարգերով և վարչական ձևերով։

Այսպէս նրանում կային՝ Պոլիզամիա—կիսաբռնակալական պետութիւն, որի մէջ բազմակնութիւն էր ծաղկում։ Պոլիանդրիա—ուր ընդհակառակը կանայք էին իշխում, որոնք

իրաւունք ունէին, որքան ուզենան, ամուսիններ ունենալ։ Միզոգենիա—մի ահագին քաղաք, ուր կանայք մուտք չունէին, իսկ տղամարդիկ խիստ ճգնողական կեանք էին վարում. Մօնակեա—մի փոքրիկ քաղաք կոյսերի հասարակութիւնով, որոնք դաւանում էին Սաֆոի կուլտը. Պերուվիա—կոմունիստական պետութիւն հին սոցիալիսական սիստեմի պատճէնը, որը չէ թոյլատրում մասնաւոր սեփականութեան գոյութիւն, այլ բոլորը պէտք է պատկանի պետութեան, և ամեն ոք նրա համար աշխատի և նրանից ստանայ բոլոր անհրաժեշտ պէտքերը, և այլն։ Մի խօսքով, այստեղ կարելի էր գտնել բոլոր սոցիալիստական տեսութիւնների, վարչական ամեն եղանակների գործադրութիւն, ըստորում իմանալով որ այստեղ մշտապէս կարելի է գտնել ազատ բնակութիւն, դիմում էին ամենքը, որոնք ցանկութիւն ունէին նոր հանրապետութիւն կամ այլ ձևի պետութիւն հիմնելու։

Այսպիսով 8էյլօնում մշտապէս քաղաքական և սոցիալական փորձեր էին տեղի ունենում, որոնք իբրև գեղեցիկ դպրոց էին ծառայում մեր մոլորակի Միացեալ նահանգների քաղաքագէտների և զառանցողների համար։

Պաոլոն և Մարիան բաւականացան Հաւասարութիւն, Տուրացիա և Լօգօպոլ քաղաքներն այցելելով։

Թարգմ. Մ. ՊՈՊՈՎԵԱՆ

(Կշարունակուի)

ԿԱՄՊՈ-ՍԱՆՏՈՅԻ ՇՈՒՆԸ

Roland Brévannes-ի

Հիւսիսային Իտալիայի փոքրիկ քաղաքներից մէկի Կամպո-Սանտոն *) այցելելով, կանգ առայ մի դամբարանի առաջ, որի վրայ արձանագործը քանդակել էր մի մարդ և մի շուն։ Իտալացիները մի առանձին հաճոյք են զգում իրենց գերեզմանատները սպիտակ «ոգիներով» զարդարելու. ընդհանրացած մի սովորութիւն է դա։ Կարծես վիշտը կիսով չափ թեթևացած է լինում նոցա համար, որոնք, լուռ կանթեղների ցոլքը պարփակող խոժոռ ծածկի և մելամաղձոտ, մահուան ստուերները իրենց մէջ ամփոփող կիպարիսների տակ քամու մի օրինակ վայոցի ձայնների մէջ իրենց սրտի սիրելիների և մերձաւորների վիշտն ու հեծութիւնը որոնելու են գալիս։ Նոքա սիրում են տեսնել իրենց սիրելիներին այնպէս, ինչպէս որ նոքա կենդանութեան ժամանակն էին և մահուան դէմքը պէտք է մօտենար նոցա սառն, ոչ մի ցաւ չկրող սպիտակ մարմարիոնի միջոցով։

Ցաւախ եմ տեսել այս կամ այն իտալական գերեզմանի վրայ չան արձաններ, ոչ միջնադարեան զինանշանների դիրքով՝ իրենց տէրերի ոտքերի տակ պառկած, այլ աշխոյժ, կենդանի կեցուածքով, որ կարծես մասնակից են մարդկային յուզումներին՝ մահուան ծանրութիւնը մասամբ իրենց վրայ առնելու միտումով։ Անշուշտ միւս բազմաթիւ արձանների պէս այս մէկն էլ կխուսափէր իմ ուշադրութիւնից, եթէ միւս արձանների սովորական դիրքն ու կեցուածքն ունենար. բացառութիւնը գրաւեց ինձ։ Անդրէխումբը ներկայացնում էր մի մարդ, որ լալիս էր մեռած շան կողքին։

Զգում էի, որ մի սրտազեղ պատմութիւն պիտի կապուած

---

*) Կամպո—Սանտո։ Սուրբ դաշտ, այդպէս են կոչւում Իտալիայում գերեզմանատները։

լինէր այդ անդրէխմբի հետ։ Եւ չէի սխալուում։ Ուղեկից հիւրընկալս, իմ առաջին հարցի վրայ, պատմել սկսեց։

—Գուիդո Մուրատորէն սիրոյ երկու առարկայ ունեցաւ,— իւր կինը և իւր շունը։

Զքնաղ, շիկահեր Լուկրեցիան, Վենետիկի հարազատ, կատարեալ մի գուստր էր, իւր փարթամ, մեղկ գեղեցկութեամբ, իւր ալեծածան, ոսկեհեր մազերի հիւսակներով, որով Ֆիցիանն ու Վերոնէզը կարող էին ոգևորուել, տարօրինակ, խաժ-կանաչ զարմանալի աչքեր ունէր, որի մէջ բոպէաբար անցնում-դառնում էր մելամաղձիկ ծովակի բոլոր երանգները։ Ինչ որ գրաւիչ ոյժ կար այդ աչքերի մէջ, բայց միևնոյն ժամանակ՝ այդ գրաւչութիւնը ինչ որ անհանգստութիւն, սարսուռ էր ազդում։ Ցանկութիւնը այդ օտարօտի աչքերի մէջ մի ինչ որ մութ, յուզող փայլ էր առկայծում, բայց դա պատճառ չէր, որ բերնի շուրջը պատող գծերի վրայից արհամարհանքի արտայայտութիւնը ջնջուէր. նորա ամբողջ անձնաւորութիւնը մի ինքնուրոյն խառնուրդ էր կազմում, որից միաժամանակ բղխում էր այն խորհրդաւոր, բայց թունաւորող շնորհալիութիւնը, որ անփոյթ, մեղկ Ադրիատիկի և ժանտախտի որրան ճահիճների ափին մահուան քնով երազող քաղաքների հմայքն է կազմում։

Շունը սկովտական, սպանիկ որսաշներից էր, ճկուն մարմնակազմով, թաւիշ մազերով, շէկ, փայլուն, ինչպէս խնամքով մաքրած պղինձ։ Նորա պայծառ բբերը, խոշոր, լայն բացուած, չեչտակի նայող աչքերը վերին աստիճանի խելացի արտայայտութիւն ունէին. մարդկային ինչ որ բան կար թաղնուած նոցա մէջ. երբ տերը «Մազանիելլո» էր կանչում, կարծես, կենդանին խօսել էր ուզում։

Սկզբում, երբ Լուկրեցիան, իբրև նորատի կին, հաստատուեցաւ իւր ամուսնու յարկի տակ, Մազանիելլոն կատաղի խանդոտութեամբ էր վերաբերում դէպի իւր տիրուհին և ամենևին չէր թագցնում իւր բարկութիւնը դէպի նորեկը, որ համակրանքի բաժին էր խլում այն մարդուց, որը մինչև այդ օրը իւր միակ ընկեր, բարեկամն էր։ Գուիտօն ստիպուած էր միջամտել և դեռատի կնոջը պաշտպանել չան սպառնացող ժանիքներից։

Սակայն, կամաց-կամաց Մազանիէլլոն հնազանդել սովորեց։ Լուկրեցիան սիրում էր դանդաղօրէն շփել իւր սիրունիկ սպիտակ ձեռներով չան փայլուն մորթը, նորա մազերի մէջ թաղելով թանգագին քարերով զարդարուն նուրբ մատները. կենդանին թողնում էր, որ այդ նուրբ մատները շփեն, թմրեցնեն իրեն փաղաքշանքով, ճկում էր ողնաշարը և յաղթահարուած աչքերի կո-

պերը իջեցնում, փակում էր։ Կնոջ անդիմադրելի հրապոյրները հալեցնում կորցնում էին նախկին թշնամական զգացումները. այդ հրապոյրներով նա քնեցնում էր նորա կասկածոտութիւնը, չանն էլ վարպետութեամբ խաբելով, ինչպէս որ իւր թակարդի մէջ էր առել արդէն տիրոջը։ Մազանիէլլօն ստիպուած էր երկուսի բաժանել իւր սէրը,—կնոջ և մարդու մէջ։

Վենետիկի չիկահեր դուստրը շուտով զգաց իւր նենգամիտ հայեացքների և երկդիմի ժպիտների գինը. նա նկատեց իտալական և գերման ցեղի խառնածին զաւակներից մէկին, որոնք բազմաթիւ են Φo գետի հովտում, և շուտով էլ իւր տարփածուն դարձրեց։

Կարլօ Պերդուչիի այրական գեղեցկութիւնը կատարեալ հակապատկեր էր Մուրատորի պիէմոնտական գրաւչութեան։ Մինչդեռ վերջինս քաջառողջ, ամրակազմ, կարճահասակ, մետաղագոյն փայլուն մազերով սևաչուի՝ շէշտ հայեացքով մէկն էր, միւսը հպարտանում էր իւր աւելի բաց գոյնի մազերով և կատարեալ երկնագոյն ծաւի աչքերով։

Լուկրեցիան անխոհեմութեամբ իւր մօտ էր ընդունում իւր տարփաւորին, երեկոյեան մութը կոխելու պահուն, առանց կասկածելու Գուիտոյի մասին, որին կուրացրել էր իւր հաւատարմութեամբ և սիրով։ Եւ կինը մինչ այս աստիճան ազդեցութիւն էր ձեռք բերել չան վրայ, որ Մազանիէլլօն, տան շէմքը կոխող իւրաքանչիւր օտարականի վրայ կատաղի հաչող ու յարձակուող այդ հաւատարիմ պահապանը, լռում պապանձւում էր մինչև իւր տիրուհու ննջարանը ծածուկ սողոսկող մարդու համար, անխօս ու ճկուն՝ ինչպէս մի սողուն։ Իւր չան պէս հաւատարիմ պահապան ունենալով, Մուրատօն կարող է բոլորովին վստահ լինել. ինչպէս կարող էր նորա մտքումը կասկած իսկ անցնել, որ կենդանին բոլորովին նուաճուած է կնոջ հրապոյրների ազդեցութեամբ և որ վերջինս՝ Ցիրցէից աւելի վարպետութեամբ, կարող էր կենդանիներին ևս ներշնչել մարդկային թուլութիւն ու տկարութիւն։ Գուիտոյի չունն ամենայն իրաւամբ կարող էր պահանջել, որ իւր վզկապի՝ շնհարքի վրայ փորագրուէր բօլօնական վաղեմի երկտող արձանագրութիւնը։

Latra; pe ladri e pe gli amanti tacqui
Cosi à Messer, cosi à Madonna piacqui*)

Արդէն վեց ամիս էր, որ Կարլօն Լուկրեցիայի տարփա-

Գողի վրայ կհաչեմ, տարփածուին լուռ կենամ,—
Ահա ինչու թէ տիրոջս, թէ տիրուհուս եմ բարեկամ։

ւորն էր. վերջինս չան վրայ բոլորովին ապահով լինելու և ոչնչով չկասկածելու նպատակով, միշտ իւր մօտ, մոլութեան սենեակում էր պահում Նորան. ժամադրութեան պահից քիչ առաջ կանչում էր շանը, իւր մատը Նորա շրթունքների վրայ էր դնում և կրկնում այն շարժումը, որով Նրանից մեղսակցութեան վկայի լռութիւն էր պահանջում։ Մազանիէլլօն լուռ կուչ էր գալիս մի մորթու վրայ և մրափում մինչև օտարականի հեռանալը։

Մի երեկոյ Կարլօն սովորականից աւելի ուշ եկաւ, սպրդնած, բարախ սրտով։

—Ի՞նչ է պատահել քեզ, հարցրեց անհանգիստ Լուկրեցիան, աչխատելով անհանգստութեան պատճառը Նորա աչքերի մէջ կարդալ։

—Ամուսինդ այլ ևս անտեղեակ չէ. Նա ամեն ինչ գիտէ։

—Նա՞։ Բայց ես կնկատէի այդ, եթէ... Անչուշտ մի հայեացքով, շարժումով, չնչին մի բանով Նա կմատնէր իրեն, որ բաւական կլինէր ինձ համար։

—Նա գիտէ, ասում եմ քեզ, երկու անգամ քեզնից ելնելիս պատահել եմ Նորան. սկիզբը պատահականութեան վերագրեցի և չէի ուզում քեզ տնհանգստացնել, բայց հէնց այս րոպէիս Նորից պատահեցի Նորան. կարծես սպասում էր ինձ և աչքերի մէջ կարդացի, որ Նա տեղեակ է։

—Մենա՞կ էր։ Ու պիէմօնտցու օշարիով վրադ նշան չը-դրոշմեց։ Ձեռքին վէնը չունէ՞ր։

—Ո՛չ. մենակ էր. միայն Մազանիէլլօն էր հետը։

—Ճիշտ է, չունն այս երեկոյ դուրս եկաւ Նորա հետ։ Գուիտօն չէր համարձակվել յարձակուել այն մարդու վրայ, որին սիրում եմ ես, Նորան շատ լաւ եմ ճանաչում, Նա կտանջուի լուռ ու մունջ, բայց չի բողոքիլ... Արի։

Ու իւր դողդոջ շրթունքների վրայ Կարլօին ամեն ինչ մոռցնել տուեց։ Հետևեալ օրը, ինչպէս և յաջորդ օրերն, անցան առանց Կարլօյի երկիւղն արդարացնող աղդանշանի։ Ամեն երկու շաբաթը մի անգամ Մուրատօրը Մանտու էր գնում գործով և կինը յաճախ ուղեկցում էր Նորան։ Այս անգամ, երբ կինը մնալու ցանկութիւն յայտնեց, միևնոյն ժամանակ ուշադիր կասկածամտութեամբ դիտելով ամուսնուն, բայց ոչ դէմքի վրայ և ոչ էլ ձայնի մէջ ամենաթեթև յոյզի արտայայտութիւն չը նկատեց։

Մեկնելու րոպէին չունը կամեցաւ հետևել Նորան։

—Ոչ, ասաց Մուրատօրէն, դարձիր տիրուհուդ մօտ։

Քիչ անց տարփաւորը տուն սողոսկեց և Լուկրեցիայի իրանը գրկելով, մինչև անկողնի խորշը ընկնել տուեց, ուր և անհետացան...

...Ինչ որ անսովոր մի ձայն երկու անգամ գրաւեց նոցա ուշադրութիւնը։

—Կարծես Մազանիէլլօն դուռն է քրթքրթացնում, ասաց Կարլօն։

—Է՞, չէ, մեզ մօտ է նա։

—Ձիշտ որ, կարծես ուրախ տրամադրութեան մէջ լինի. նայիր,—թռչկոտում է կատուի պէս ինչ որ առարկաների շուրջը, որ մենք չենք տեսնում, կրծոտում է փայտերը և պաստառի ծայրերը։

—Գուցէ ատամներն է ցաւում։

—Ոչ, աւելի շուտ՝ կարծես ականջն է ցաւում. տես։

—Իրաւ է. երևի ճանճ-մանճ է մտել ականջը։

Կէս գիշերին մի տարօրինակ հաչոց սիրահարների սիրտը տակն ու վրայ արեց. կենդանին մի սուր, անհաճոյ ձայն էր հանում, յանկարծ դադարում, կրկին սկսում՝ աւելի սուր, սարսուռ ազդող շեշտով։

—Անասունին մի բան է պատահել, ասում եմ քեզ։ Կարծես մահուան ոռնոց տալիս լինի։

—Չէ՞, այդպիսի բան չկայ։

—Գուցէ որևէ դժբաղդութիւն է պատահել Մուրատօրէին։

—Վաղը կիմանանք...

Վերահաս վտանգի միտքը խիստ զգայուն էր դարձրել նոցա ջղերը։ Կարլօն սովորականից աւելի երկար մնաց և նոցա գրկախառնութիւնն աւելի բորբոք դարձաւ։

Յաջորդ օրը, որովհետև Գուիտօն չեկաւ և ոչ էլ որևէ վրդովող լուր կար, ուստի սիրահարներն աւելի կանուխ իրար գտան, որպէս զի հարաւի կիզող սիրագիշերներից մէկն անցնեն, որ այնքան քիչ էր պատահում, քան իրենք կուզենային։

Հազիւ Կարլօն սենեակ էր մտել, որ իսկոյն նկատեց չան տարօրինակ շարժումները. վերջինս սաստիկ տխուր էր երևում, բայց նորա խառնուած աչքերի մէջ ինչ որ երկիւղ ազդող փայլ էր ցոլում։ Յանկարծ կռծոտել, պատռտել սկսեց ատամի տակն ընկած ամեն ինչ՝ գահաւորակի բարձերը, գորգի եզերքը, պատերի ծէփը, որ ճանկռտում էր կատաղաբար։

—Խեղճը քաղցած է բոլորովին, տես ինչպէս քաղցած է, ասաց Լուկրեցիան. ծառաները մոռացել են կերակրելու. գուցէ տիրոջ մեկնելուց յետոյ դեռ ևս ոչինչ չէ կերել։

Նգոյրի վրայից մի կտոր կարկանդակ վերցրեց և շանը մեկնելով ասաց։

—Առ, Մազանէլլո։

Գազանը յարձակուեցաւ և երիտասարդ կնոջ ձեռքը կորաւ լայն բացուած երախի մէջ։ Լուկրեցիան ճիչ արձակեց և լորձնապարտ ձեռքը դուրս քաշեց. ժանիկաւոր թաչկինակով սրբեց, մի բարակ, կարմիր թել երևեցաւ ձեռքի վրայ, որ նուրբ մորթի անդուսը ծիրանի ներկեց։

—Վայրենի գազան, մռնչաց կինը։

Կարլօն մօտեցաւ. դժգոյն, բոլորովին գունատ նա չչնչաց.

—Միայն թէ... Ա՜խ ինչ եմ մտածում... Սարսափելի կլինի...

—Ի՞նչ ես ասում, Կարլո։ Ի՞նչ ես մտածում...

—Երկիւղ եմ կրում... Բայց ինչ յիմարութիւն... Չեմ ուզում վախենաս...

—Ի՞նչ կայ, ասա, խօսիր։

—Այս առաւօտը իմացայ, որ թաղումը կատաղած շներ կան։

—Կատաղած շնե՞ր։

—Այո՛, բայց չէ՞ որ Մազանիէլլօն երբէք մենակ դուրս չի գալիս, այնպէս չէ՞։ Ուրեմն...

—Քանի՞ օր կայ, որ այդ շները... կարճ, խուսափող հարց տուեց Լուկրեցիան։

—Մի վեց օր կայ։ Այդ ժամանակ Մազանիէլլօն դուրս եկե՞լ է։

—Ո՛չ։ Բայց հէնց այդ երեկոն չէ՞ր, որ տեսար նորան ամուսնուս հետ։

Պերդուչչին գլուխը թօթուեց, ատամներն իրար զարկել սկսեցին, պատասխանի հաւաստիացումը բկումը մնաց։

Շունը սողալով մօտեցաւ տիրուհուն, նորա ոտքերը լիզել սկսեց մի արտասովոր ջերմութեամբ, որ մարդու սարսուռ էր ազդում։

—Ոչ, տեսնում ես, նկատեց Լուկրեցիան, որ ներողութիւն է խնդրում արածի մասին, զգում է։

Կնոջ սառնարիւնութիւնը անցաւ և իւր տարփաւորին. գրկախառնութիւնը շուտով մոռացնել տուեց ամեն տագնապ...

...Նախորդ գիշերը լսած կաղկանձիւնները զարթեցրին նոցա։ Շունը, սենեակի միւս անկիւնում կկուզ եկած, բերանը չողինք պատած, աչքերը արիւն կոխած, չնչտակի նոցա էր նայում, զգում էին, որ հիմա չէ հիմայ պէտք է իրենց վրայ

թուչի... Ծնկների յանկարծական մի կծկում, չեչտակի սլացում, մէջքի ճկուն, դիւրաթեք կորութիւն, ծանր մարմնի զգացում անկողնի վրայ, սամոների տակ պատռտուող մարմնի կռճիւն... Սարսափի, զարհուրանքի կրկին մի ճիչ լսուեցաւ։ Շունը նորից իւր տեղը թռաւ. երկու սիրահարներն իրար նայեցին,—այլադէմ, վայրագ, արիւնլուիկ, բզկթուած. նոցա սարսափելի կերպով լայն բացուած աչքերի մէջ արդէն կատաղութեան ցոլք էր շողում։

—Օգնութիւն, օգնութիւն, կանչում ու հեծում էր Լուկրեցիան, օգնութեան հասէք, խնամեցէք ինձ։ Ազատեցէք, ի սէր Աստուծոյ։ Սպանեցէք այս գազանը, թէ Աստուածածինը կը սիրէք։

Կարլոն կամեցաւ դուրս գալ, գնալ, բայց ի զուր։ Ամեն անգամ, երբ երկու քայլ էր անում դէպի դուռը, կենդանին իւր մարաղ մտած անկիւնից թռչում, նորա որկորն էր հախուռում։ Ամենում Մարդն անօգուտ ջանք էր թափում դիմադրութեան նորանոր հնարքներ որոնելու, գետին տապալուեցաւ, ամբողջապէս արիւնաներկ, լորձունքով ու կատաղութեան փրփուրով պատած...

Ոչ ոք ականատես չեղաւ այդ աղետալից սենեակում տեղի ունեցող զարհուրելի տանջանքների տեսարանին, բայց կարելի էր երևակայելով պատկերացնել, երբ հետեւեալ առաւօտը Կարլօի անշնչացած, գետին փռուած, ամբողջապէս ծուէն-ծուէն բզկըթուած, անճանաչելի դարձած մարմինը գտան... Լուկրեցիան միայն թեթև կերպով էր վիրաւորուած, բայց մեռաւ երեք օրից յետոյ՝ անտանելի տանջանքների մէջ, և Լուկրեցիային մահ պատճառողը ոչ այնքան կատաղութեան վարակն էր, որչափ այդ զիշերուայ արիւնալից տեսարանի սպանդանոցը և աւելի զարհուրելի մահ ստանալու երկիւղը։

Ինչ վերաբերում է Մուրատօրէին, նա տարաւ իւր շունը պարտիզի խորքը, մի վերջին անգամ ձեռքով շփեց նորա ոսկեցոլքով շողացող սիրուն մորթը, որ կարծես Լուկրեցիայի չիկահեր մազերը լինէին, դարձաւ նորան, ինչպէս մարդկային մի էակի։

—Դու պէտք է գողի գալն իմաց տաս ինձ. հապա ինչպէս է, որ իմ պատիւս գողացողի գալն ինձ չես իմացրել. դաւաճանել ես ինձ։ Բայց ոչ. նա է քեզ յուրթել, մոլորեցրել, ուստի և անհնազանդ ու անհարազատ եղար միայն ինձ ցէմ։ Բայց և այնպէս լաւ վրէժխնդիր եղար։ Ներում եմ քեզ։

Եւ, գլուխը դարձնելով, նա յանկարծակի գնդակահար արեց նորան. վայրկենապէս սպանելով նորան, այն թզենու տակ, ուր յաճախ Կարլօն և Լուկրեցիան նստելու էին գալիս...

Տ. Վ.

* * *

Այս մեր չարատանջ չարքաշ օրերում
Երբ մեր արեւը կապոյտ կամարում
Փայլում է աղօտ, զրկում մեզ լուսից,
Երբ մեր երկիրը բիրտ բռնութիւնից
Հազիւ շունչ քաշում, կեանքից զրկւում,
Դառն նզովքներ չար բախտին ուղղում,

Երբ մենք տեսնում ենք մեր կարմիր կեանքում
Ե՛ւ խիղճ ե՛ւ պատիւ ոտնակոխ եղած,
Երբ մեր վաստակած ամեն մի քայլում
Մեզ մտրակում են եւ մենք հալածուած
Լայն ծովը ընկած տաշեղի նման
Տարուբերւում ենք կեանքի զոռ կուում,

Մեզ պէտք է միայն մի քան իմանալ
Նրան նուիրուել բոլոր ուժերով.
Դա սուրբ կռիւ է, որ կնճռոտ ճակտով
Մենք պէտք է մղենք միշտ եւ անդադար։

Այո՛, հայ եղբայր, այսօր մեր կեանքում
Կռիւն է կարիք, մի պարտք սրբազան.
Թող կռուի բոցը վառուի մեր սրտում
Կուումն է միայն փայլուն ապագան։

Թող այսուհետեւ սուրբ նշանաբան
Այս փոթորկոտ մեր անյոյս կեանքում
Լինի Մովսէսի «ակն ընդ ական»
Այս զօրեղ կոչը. կռուի լայն դաշտում։

Այո՛, հայ եղբայր, մեր կեանքը ցա՜ւ է
Էլ չտանջուենք, այսքանը բաւ է.
Մինչեւ ե՞րբ այսպէս միշտ ու թախիծով
Ճամբենք օրերս մենք լալկան ոգով
Զէնքը ձեռներիս ասպարէզ ելնենք
Եւ նրա զրկում իբրեւ հայ մեռնենք։

Տ. ՇՈՌԼՈՒԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Հինգերորդ և չորրորդ դարերում Քրիստոսից առաջ

Ըստ Քսենոֆոնի

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ոչ է պատմութիւն ճշմարիտ
առանց ժամանակագրութեան
Մ. Խոր. Ա, 82 1.

Մարդկութեան ձգտումներից մէկն էլ, եթէ կարելի է այսպէս ասել, ճշմարտութիւնն է։ Եւ այս ոչ միայն որոշ դէպքերում, այլ միշտ և ամէն բանի մէջ պէտք է փնտռել։ Հետևաբար և պատմութեան համար ևս խիստ անհրաժեշտ և կարևոր է ճշմարտութիւնը։ Թէ որքան կարևոր նշանակութիւն ունի ազգերի համար ճշմարիտ, ստոյգ պատմութիւնը, որ հիմնուած պէտք է լինի նաև ժամանակագրութեան վրայ, շատ բնորոշ և գեղեցիկ կերպով է որոշում հինգերորդ դարի մեր երանելի Բերթողահայրը վերոյիշեալ հատուածով։

Բնականաբար ազգերի-որոնք ապրում են դարերովնպատակը պիտի լինի նաև ունենալ իրենց այդ կեանքի ստոյգ, ճշմարիտ պատմութիւնը։

Խօսքը մասնաւորելով հայոց ազգին, եթէ մի ընդհանուր հայեացք ձգելու լինինք սորա անցեալ կեանքի պատմութեան, մասնաւորապէս հին դարերի պատմութեան վրայ, որ մեծ

---

*) Սոյն շարադրութիւնը կազմելիս ի նկատի ենք ունեցել և օգտուել նաև հ. Յ. Դաթրճեանի «Տիեզերական պատմութիւն»-ից։ Հ.

Յօդուածի միջի յունարէն բառերը չենք տպել, որովհետև տպարանում յունարէն տառեր չունեն։ ԽՄԲ.

մասամբ ծածկուած է անյայտութեան քօղով, ուրախութեամբ կը տեսնենք, որ այդ անծանօթ աշխարհը կարելի է գտնել առաջնորդուելով միմիայն դիտութեան ցոյց տուած միջոցներով և վերականգնելով ճշմարիտ պատմութիւնը հիմնուելով ստոյգ, արժանահաւատ աղբիւրների վրայ։

Թէպէտև մեր պատմութեան հին շրջանները որոշ մասերով արդէն պարզուած և որոշ մասերով էլ անծանօթ են, սակայն այս վերջին մասերից մի քանիսի պատմութիւնը հնարաւորութիւն ենք ունենում ստուգելու և վերականգնելու։ Այս դէպքում, հարկաւ, ուր անբաւական են մեր ազգային պատմիչներն ու աղբիւրները, պէտք է դիմենք օտարազգի պատմիչներին ևս, որոնք իրենց պատմագրութեանց մէջ մասնաւորապէս տեղեկութիւններ են տուել նաև Հայաստանի և հայերի մասին։

Այս վերջիններիս կարգին է պատկանում և հինգերորդ դարի յոյն նշանաւոր պատմագիր Քսենոֆոնը (445—355 թուին Քրիստոսից առաջ)։ Քսենոֆոնի պատմածը արժանահաւատ է, ոչ այն տեսակէտից, որ նա ևս օտարազգի է, այլ այն, որ նա ինքն անձամբ և իւր աչքերով եղել է Հայաստանում, անցել է շատ գիւղերով, ապրել է այն տեղեր և ապա նկարագրել այն բոլորը, ինչ որ ինքն է արել և կամ իւր աչքով է տեսել։ Բնական է, որ նրա տուած տեղեկութիւններն ու նկարագրութիւնները ևս աւելի վստահելի ու ճիշտ կլինին։

Քսենոֆոնի Հայաստանի մասին տուած այդ խիստ շահեկան և թանկագին տեղեկութիւնները թէև քանակով շատ նուազ են, բայց անհամեմատ աւելի մեծ արժէք ու նշանակութիւն ունին և ստուգապէս լուսաբանում են մեր հինգերորդ դարի պատմութեան մի քանի անորոշ ու անստոյգ էջերը։

Այս կտորները գտնում ենք Քսենոֆոնի «Արշաւանք» երկասիրութեան մէջ, գլխաւորապէս չորրորդ գրքում։

Այդ բոլոր տեղեկութիւնները կարելի է հետևեալ չորս գլխաւոր խմբերի բաժանել։ Առաջին՝ Հայաստանի քաղաքական բաժանումն ու թագաւորները։ Երկրորդ՝ գիւղերը։ Երրորդ՝ գիւղացիք։ Եւ վերջապէս չորրորդ՝ հիւրասիրութեան մասին։

Մանաւորապէս դիտենք, որ, որովհետև Քսենոֆոնը անցել է միմիայն հարաւային և արևմտեան Հայաստանով, այսինքն Տարոնով և հիւսիսարևմտեան նահանգներով, այդ տեղեկութիւնները բոլորն, անշուշտ, չեն վերաբերում ամբողջ Հայաստանին, այլ գլխաւորապէս Հայաստանի այն մասերին, որտեղից որ անցել է ինքը պատմագիրը։

Իսկ ինչ վերաբերում է ամբողջ Հայաստանին՝ այդ ևս կերևայ ստորև ի նկատի ունենալով Քսենոֆոնի այդ թանկագին յիշատակութիւններն ու այլ պատմական հանգամանքներ։

I. Հայաստանի քաղաքական բաժանումն ու թագաւորները

Հայաստանը նահանգ Պարսկաստանի.—Քաղաքական բաժանումը եւ մասերը.—Սոցա տեղերը, սահմանները.—Վարչական եղանակն ու Թագաւորները.—Ճանապարհները.—Ցունաց զօրքերն ու նոցա արարքները։

Հայաստանը դեռ ևս վեցերորդ դարի վերջին քառորդից սկսած համարւում էր Պարսկաստանի մի նահանգը։ Ապացոյց դորան Դարեհ Վշտասպեանի և Քսերքսէս Ա-ի արձանագրութիւնների մէջ Հայաստանը յիշատակւում է որպէս մէկը յայնկոյս Եփրատայ գտնուող հարկատու երկրներից։ Հերոդոտից գիտենք, որ Դարեհ Վշտասպեանը (522—486) ամբողջ Պարսից աշխարհը հարկերի համար բաժանել էր քսան մասի։ Այս բաժանումով տասնեմէկերորդ մասը համարւում էր Հայաստանը։ Բնական է, որ հայերն ևս, որպէս հարկատու և հպատակ Պարսից, արեաց զօրքերի մէջ ունենային և իրենց զօրագունդը զինուած վահաններով ու նիզակներով և գնային պատերազմ յօգնութիւն պարսից։ Այսպէս շարունակւում է նաև Դարեհի յաջորդների Դարեհ Հարճորդու (433—404), սորա որդի Արտաշէս Ուշեղի (404—358) օրով և մինչև Դարեհ Կոդոմանոս, որին, Մակեդոնացւոց դէմ մղած պատերազմների ժամանակ, օգնում էին և հայոց հեծելազօրքն ու հետևակները [1]։

Ահա այս երկդարեան շրջանում Հայաստանը, այդ անառիկ, լեռնոտ, ըստ Քսենոֆոնի ընդարձակ և բարեկեցիկ երկիրը երևան է գալիս քաղաքականապէս բաժանուած երկու մասի՝ արևելեան և արևմտեան կամ ինչպէս կոչւում էր նաև՝ Մեծ-հայք և Փոքր-հայք։

Մեծ-հայքը կամ հիւսիս արևելեան Հայաստանը տարածւում էր գլխաւորապէս Կուրի և Երասխի հովիտներում։ Բացի այս ընդարձակ սահմանից Արևելեան Հայաստանը, ըստ Քսենոֆոնի, ձգուել է նաև դէպի հարաւ և հարաւային կողմի սահմաններն են եղել Կորդուաց լեռներն ու Դիմտրիտէս գետը—այժմեան՝ Արևելեան Տիգրիսը,—որ բաժանել է Հայաստանը Կորդուաց երկրից։

---

[1]) Հ. Յ. Դաթրճեան. «Տիեզ. պատմ.» I հատ. եր. 340։

Այս մասում, ըստ ամենայն հաւանականութեան, իշխում էր Օրոնտը և ունէր իւր առանձին զօրքը, որոնց մէջ կային նաև Մարդեր և վարձկան Խալդեր —Մարաց և Խաղտեաց երկրների բնակիչներ [2]։ Այս հանգամանքից պարզապէս երևում է, որ Օրոնտի իշխանութիւնը տարածուելիս է եղել նաև շըրջակայ երկրների վրայ և մինչև իսկ պահել է վարձկան զինուորներ։ Գուցէ և առաջին ու միակ դէպքը մեր հին պատմութեան մէջ, որ հայերս ունեցել ենք նաև վարձկան զինուորներ։ Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ պարսից թագաւորը աշխատում էր նրան գրաւել և իրեն թիկունք ունենալ, որովհետև Օրոնտը մեծ նշանակութիւն ունէր և զօրաւոր, դիրք ունեցող իշխան էր։ Այս պատճառով արեաց արքան իւր դուստրը տալիս է նորան կնութեան, թոյլ տալով և միևնոյն ժամանակ որպէս իւր փեսայի և կողմնակցի լինել Արևելեան Հայաստանի (մեծ-հայքի) թագաւոր։

Այս հետաքրքրական անձնաւորութեան մասին, սակայն, դժբախտաբար, Քսենոֆոնը մեզի աւելի մանրամասն տեղեկութիւններ չի տալիս։

Ի դէպ՝ շատ հաւանական է, որ Մ. Խորենացու յիշած Տիգրան Ա-ի յաջորդները մինչև Վահէ, Հայաստանի այս մասին ժառանգաբար տիրած լինեն Շահապ կամ նախարար և կամ նոյն իսկ թագաւոր անունով [3]։

Անշուշտ մի այսպիսի կազմակերպուած և ընդարձակ երկիր, որպիսին Հայաստանը, հաղորդակցութեան դիւրութեան համար պէտք է ունենար նաև կանոնաւոր ճեռակերտ ճանապարհներ։ Այսպիսիներից առաջինը Հայաստանում, յիշում է Քսենոֆոնը, որ եղել է այն ճանապարհը, որով յոյներն աշխատում էին Կորդուաց լեռներն ու Արևելեան Տիգրիսը (Գինտրիտէս գետն) անցնելուց յետոյ բարձրանալ դէպի վեր լեռները և մտնել Հայաստան, որի թագաւորն էր Օրոնտը [4]։ Եւ ահա Օրոնտն

---

[2]). Սոքա, ըստ Քսենոֆոնի, եղել են ազատ և քաջ ժողովուրդ և իբրև զէնք գործ են ածելիս եղել նիզակներ և երկար վահաններ։

[3]). Հ. Գաթրճեան «Տիեզ. պատմ.» I. հատ. եր. 341։

[4]), Պէտք է նկատել, որ Քսենոֆոնը Արեւելեան Հայաստան (որ Օրոնտի երկիրն էր) անունը բնաւ չի յիշում, այլ լոկ Հայաստան։ Սակայն յանկանէ յանուանէ յիշում է Արևմտեան Հայաստան, որի կառավարիչն եղել է Տիրիբազը և այլն և այլն։ Եւ այս անունները՝ (Արևելեան) Հայաստան և Արևմտեան Հայաստան՝ ենթադրել են տալիս, որ դոքա երկրի

ու Արտուխը (անյայտ է թէ ով է եղել, բայց հաւանաբար Օրոնտի սատրապը կամ նշանաւոր զօրավարներից մէկը) փակում են ճանապարհը Արևելեան Տիգրիսից երեքից չորս հարիւր ոտնաչափ հեռուից իրանց ղէնուած ձիաւոր և հետևակ զօրքերով և յոյներին արգելում են Հայաստան մտնել։

Սակայն յոյները կարողանում են խորամանկ միջոցներով գետն անցնել, մտնել Արևելեան Հայաստան և հինգ փարսախ անվտանգ անցնել Հայաստանի հարթութիւններով ու բլրակներով, որովհետև գետի ափին եղած գիւղերն աւերուել էին Կորդուաց դէմ մղուած պատերազմների ժամանակ և դիմադրող ոյժ չկար։ Այսպիսով յոյները հասնում են մի մեծ գիւղ, ուր նստում էր սատրապը [5]) և օգտուում են երկրի պաշարի առատութիւնից։

Ուրեմն պիտի ընդունենք, որ Մեծ հայքում կամ բուն Հայաստանում (Արևելեան) բացի Օրոնտ թագաւորից եղել է նաև առանձին սատրապ իւր յատուկ աթոռանիստ մեծ գիւղով։

Յոյները սատրապանիստ գիւղից տասը փարսախ [6]) հեռու անցնում են Տիգրիսի վտակները, նորից արշաւում 15 փարսախ և անցնելով Տելեբոաս գետը—այժմեան Մշոյ վտակը—մտնում են Տարոն կամ Արեւմտեան Հայաստանի (փոքրհայքի) սահմանները։

Հայաստանի այս մասն ընկնում է Եփրատի ակունքներից այն կողմը (յայնկոյս աղբերացն Եփրատայ՝ Դաթրճեան)։ Սորա և Արևելեան Հայաստանի սահմանը կազմում էր Մշոյ վտակը (Տելեբոաս գետը) Արևմտեան Հայաստանի կառավարիչը կամ Դարեհ Հարճորդու և Արտաշէս Ուշեղի թագաւորութեան ժամանակ Տիրիբազն էր, որին յիշում է և Քսենոֆոնը։ Սորա իշխանութիւնը տարածւում էր նաև դէպի հիւսիս և հիւսիս արևմուտք գտնուող երկրների Բասենի և Սպերի վրայ [7])։

առանձին մասերի անուններ են և եթէ, այդ մասերից մէկը կոչուել է Արեւմտեան, միւսն էլ հաւանօրէն պիտի կոչուէր Արեւելեան։

[5]). Սատրապ.—կոչւում է երկրի գլխաւոր կառավարիչը, փոխարքան և կամ թէ թագաւորի փոխանորդը երկրի այդ մասում։ Մի երկրում կարող էին լինել նոյն իսկ մի քանի Սատրապներ, կամ թէ մէկը միայն։

[6]). Փարսախ,—պարսկական երկարութեան չափ է, որ 30 ստադիաի կամ 3750 ոտնաչափի է հաւասար (մօտ 5 վերստ ռուսական)։ Իսկ ստադիան—հաւասար է յունական 600 կամ ռուսական 125 ոտնաչափի։

[7]). Քսենոֆոնի VII, 8, 25-ից երևում է, որ թագաւորի

Տիրիբազն ունէր իւր սեփհական զօրքը-անշուշտ Արևմտեան Հայաստանի հայերից-և նորա զօրքերի մէջ կային նաև վարձական զինուորներ Խալտեաց և Տայոց երկրների բնակիչներից։

Տիրիբազն ևս, ինչպէս Օրոնտը, սիրելի է եղել արեաց արքային և վայելել է այն առանձնաշնորհը, որ երբ Տիրիբազը ներկայ էր լինում թագաւորի մօտ, բացի նրանից ոչ ոք չէր համարձակւում արքային ձի նստեցնել։

Գուցէ այդ պաշտօնը Արևելքում մի առանձին և բարձր պատիւ է համարուել, որին թագաւորն արժանացրել է Տիրիբազին, սակայն այդ յայտնի չէ և չի կարելի պնդել։ Նման սովորութիւն վերագրւում է նաև մեր Մեծն Տիգրանին, որ ձի նստելիս 4 հպատակ թագաւորների էր ծառայեցնում։ Ինչպէս երևում է այս մի յատուկ սովորութիւն է եղել Արևելքի միապետների համար, որոնք ամէն ջանք գործ էին դնում այդ և նման սովորութիւններով ծառայեցնել իրենց հպատակ թագաւորներին, որպէս զի դորանով հպատակ թագաւորներին աւելի ևս ճնշէին և իրենց աւելի բարձր և արքայավայել դիրք տային։

Զը նայելով այս հանգամանքին Հայաստանի պէս ճոխութեամբ և առատութեամբ լցուած երկրի պետը չէր կարող հասարակ պարզ կեանք վարել։ Եւ իսկապէս Տիրիբազի վրանում կային արծաթոտն տեղաններ, բաժակներ և առանձին հացարարներ և տակառապետներ։ Այս վերջին կարգի պաշտօնեաներ, ինչպէս յայտնի է Ս. գրքից, եղել են նաև Եգիպտոսի փարաւոնների պալատներում։ (Գիրք ծննդոց-գլուխ 40)։ Ուրեմն Տիրիբազն ևս ըստ ամենայնի Արևելքի պետի վայել և յատուկ ճոխութեան մէջ է ապրելիս եղել։

Հարկաւ այս բոլորը անզօր են ապացուցանել, որ Տիրիբազն ևս, ինչպէս արևելեան ուրիշ շատ պետեր, նուիրուած է եղել միմիայն շռայլութեան կամ կերուխումի և այլն։ Ընդհակառակը Տիրիբազը երևան է գալիս որպէս մի արթուն հովիւ, որ հսկում է իւր հօտի և երկրի բարօրութեան վրայ։ Այս իսկ պատճառով երբ իմանում է յոյների Արևմտեան հայաստանի (այսինքն իւր երկրի) սահմաններն անցնելը, զօրքով արշաւում է նոցա դէմ, որպէս զի զօրավարներին արգելէ առաջ խաղալ։ Բայց իմանալով վերջիններիս դիտաւորութիւնը պայմանաւորւում և դաշն է կռում նոցա հետ։ Այս դաշինքի հիման վրայ

(պարսից) երկիրը բաժանուած էր բազմաթիւ թագաւորութիւնների կամ իշխանութիւնների։ Այս բաժանմամբ Բասենի և Սպերի արքունատը Քսենոֆոնի ժամանակ Տիրիբազն էր։

ոչ Տիրիբազը յոյներին պիտի նեղէր իւր երկրի միջով անցնելիս և ոչ էլ յոյները պիտի այրէին ու աւերէին հայոց տներն ու գիւղերը։ Այլ յոյները հայերից պիտի վերցնէին այնքան պաշար, որքան որ իրենց հարկաւոր կը լինէր ճանապարհի համար։ Յոյներն, այնուհետև, շարունակում են իրենց ճանապարհը երեք օր դաշտի միջով տասնևհինգ փարսախ և հասնում Եփրատի ափերին (Գաթրճեան նոյն. եր. 342), ուր և էր արքայանիստը՝ այժմեան Խնուս քաղաքը՝ իւր շրջակայ բազմաթիւ գիւղերով։ Իսկ Տիրիբազը իւր զօրքերով հետևում էր յոյներին 10 ստադիա։ Երբոր բոլոր զօրավարները իրանց զօրքերով հաւաքւում են միևնոյն գիւղում, ուր առաջուց արդէն գնացել էր զօրարար Խէյրիսոֆոսը, վիճակով մի մի գիւղ են ընտրում. Խէյրիսոֆոսը մնում է այդ գիւղում, իսկ միւսները իւրաքանչիւրն իւր գնդերով քաշւում է վիճակով իրեն ընկած գիւղը գիշերելու և ապրելու համար։

Սակայն զօրավարներից մէկը՝ Պոլիկրատէս Աթենացին չէ բաւականանում խաղաղ կեանքով և, հակառակ իրանց դաշինքի տրամադրութեան, յարձակւում է վիճակով Քսենոֆոնին ընկած գիւղի վրայ, կալանաւորում և գերում է բոլոր տներում եղող գիւղացիներին, գիւղապետին, սորա որդիներին և 9 օրուայ պսակուած աղջկան, (որի ամուսինը նապաստակ որսալու էր գնացել), և խլում է 17 քուռակ, որոնք մնում էին իբր հարկ արեաց արքային։ Եւ մինչև իսկ յոյները յանդգնում են կողոպտել Տիրիբազի վրանը և նորա մարդկանց գերի վարել։

ԿԵՍԱՐ

(Վերջը միւս անգամ)

ՀԳՆԱԺԱՄԸ

Տոքթէօր Գաբրիէլեանի «Ճգնաժամ Հայոց ու ազգային վերածնութիւն» տիտղոսուած գիրքը որ վերջերս լոյս տեսաւ Ամերիկայի մէջ, բուռն վէճերու տեղի տուաւ եւ կը շարունակէ դեռ տալ արտասահմանի շատ մը թերթերուն մէջ։ Գործը, հզօր ու վճիտ կերպով զգացուած, պարզ եւ ուժեղ արտայայտուած, անուրանալի անկեղծութիւնով մը, համոզումի տաք շեշտով մը տոգորուած ծայրէ ծայր, բնական էր որ յուզէր հասարակութիւնը եւ հարկադրէր ընթերցողը թեր կամ դէմ կարծիք մը ունենալու, անով զբաղելու, անով մտաւորապէս ապրելու։ Գիրք մը որ շարժում յառաջ կը բերէ, ատով իսկ կ՚ապացուցանէ որ կենդանի է, եւ այդ արդէն էական արժանիքներէն մին է գործի մը։ Տը. Գաբրիէլեան այս գրքով ուզած է ուսումնասիրել հայկական խնդրոյն ծագումը, բոլոր փուլերը որոցմէ ան անցած է մինչեւ այսօր, բացատրել պատճառներն այն աղէտքներուն որ խուժեցին ժողովրդին վրայ, որոշել ատոնց մէջ օտար և հայ պատասխանատուութեանց բաժինը, ցոյց տալ սխալները Հայոց գործունէութեան՝ սկիզբէն մինչեւ այսօր եւ մատնանիշ ընել այն ուղին որուն՝ ըստ իրեն՝ պէտք է ասկից ետքը հետեւի հայ ժողովուրդը ինքզինքը փրկելու համար կորուստէ։ Անահիտի ընթերցողները կը յիշեն որ այս հարցերուն վրայ այս էջերուն մէջ շատ անգամ պարզուած են տեսութիւններ որոնց համաձայն են՝ մերթ՝ Տը. Գաբրիէլեանի տեսութիւնները։ Բայց կան եւ կարգ մը կէտեր Տը. Գաբրիէլեանի գրքին մէջ, որոնց համախոհ չեմ։ Մտադրութիւնս այստեղ գրքին մանրամասն վերլուծումը եւ ամբողջական քննադատութիւնն ընել չէ. ատի պիտի համապատասխանէր հայկական հարցին քննական պատմութիւնը անգամ մը եւս ընելու. ատոր համար ժամանակը կը պակսի այս պահուս ինծի եւ արդէն վայրեկեանը ուր կը գըտնուինք՝ յարմարագոյնը ըլլալէ հեռու է այդ քննութիւնը վերջնական կերպով կատարելու համար։

Այդպիսի քննութիւն մը, լիակատար, բացարձակապէս անաչառ ու յստակ, պիտի կատարուի՝ երբ այս տենդի, յուզման փուլը անցնի, երբ գայ հանգստեան շրջանը, որ անշուշտ պիտի գայ, և որ հնարաւոր պիտի ընէ մեզի մէկուն, կամ՝ թերևս՝ մեզի ետքը եկող մէկուն՝ պաղ արիւնով, հանդարտ և խուզարկու ուսումնասիրութիւնով, անկողմնակալ ու «գիտական» դատողութիւնով, հետազօտել բոլոր տոքիւմանները, իրողութիւները, գրաւոր ու բերանացի վկայութիւնները, և գրել՝ պատմագրի պէս՝ հայկական խնդիրին պատմութիւնն ու անոր իմաստասիրութիւնը։ Այս զգացումն է որ տարիներ առաջ զիս մղեց ընդհատելու վէճը զոր սկսած էի Պ. Զերաղի հետ՝ Ներսէս պատրիարքի քաղաքականութեան մասին։ Ատի այլ ևս աւելորդ է վէճի ձևով շարունակել, նոյն իսկ անճահ։ Կը մնայ միայն պատմութիւնը գրել այդ անցեալին, ու վայրկեանը դեռ եկած չէ ատոր։ Իսկ ինքը Պ. Զերաղ շատ լաւ կ'ընէ՝ Տր. Գաբրիէլեանի գրքին առթիւ հրատարակելով շարք մը յօդուածներ, ուր պատասխանելով անոր ինչ ինչ քննադատութեանց՝ Ներսէսեան շրջանին վերաբերող շատ մը անտիպ իրողութիւններ երևան կը հանէ. տոքիւմաններու նոր շարք մըն է որ կ'աւելցնէ, որոնք օր մը քննուելով, ստուգուելով, բաղդատուելով ուրիշ աղբիւրներու հետ, պիտի մեծապէս ծառայեն ապագայ պատմաբանին՝ ամբողջական ու ճշգրտագոյն պատկերը գծելու հայկական խնդրոյն։

Այստեղ ես կուզեմ միայն հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել Տր. Գաբրիէլեանի գրքին այն կէտերուն վրայ որ մեր այժմու կացութեան և անմիջական հրատապ հարցերուն հետ ուղղակի կապ ունին, ու մասնաւորապէս իր առաջարկած հետևեալիք ուղղութեան վրայ։ Մեր յեղափոխութիւնը քննադատած ատեն Տր. Գաբրիէլեան կը մեկնի սա հիմնական տեսակէտէն—և այդ տեսակէտը պէտք է միշտ ի նկատի ունենալ իր դատումներուն նոյն իսկ ծայրայեղութիւնները և մերթ անճշդութիւնները բացատրելու համար,—թէ Հայոց յեղափոխական շարժումը «ժամանակէն առաջ պայթած է», և թէ այդ տարաժամ և բռնազբօսիկ պայթումը սրոշ չափով մը շարժառիթ եղած է այն աղէտքներուն որ մեր ժողովրդին վրայ խուժեցին։ Այս տեսութիւնը, զոր ես իսկ քանիցս յայտնած եմ, ճիշդ կը թուի ինծի. մեր յեղափոխական շարժումը սկսած է այնպիսի պահու մը երբ քաղաքական ընդհանուր պայմանները ամենաանպատեհ էին մեզի համար և երբ մեր ժողովուրդը բացարձակապէս անպատրաստ և անկարող էր՝ թուրքը կառա-

վարութեան դէմ կռուելու։ Որքան ալ թուրք բեժիմը անհանդուրժելի ըլլար՝ մանաւորապէս մեծ Հայաստանի մէջ, հայ ազգը պէտք էր շարունակէր իր վաղուց սկսած ծրագիրը՝ ազգային գիտակցութիւնը իր մէջ տարածելու և ամրացնելու, կրթական, տնտեսական զարգացումը յառաջ տանելու, վերջապէս ամէն ձեւով մեծ ճիգին «պատրաստուելու». իսկ այդ վճռական ճիգը կատարելու համար՝ պէտք էր սպասէր պատեհ բոպէի մը,— օրինակ՝ պատերազմ մը Թուրքիոյ և Ռուսիոյ միջև. այդ սպասումը երբէք զինքը չպիտի արգիլէր անշուշտ Բիւրտերուն և թուրք պաշտօնեաներուն դէմ ինքզինքը (մանաւանդ իր մասնաւորապէս կեղեքուող հատուածները) պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելու. ուրիշ բան է անհատական կամ հատուածական ինքնապաշտպանութիւն՝ կրուած յարձակմանց դէմ, ուրիշ բան է՝ ազատման համար ոտքի կանգնել ազգովին. այդ երկուքը իրար խառնուեցան, և է՛ն անյարմար պարագաներուն մէջ։ Հետևանքը տեսանք։ Այն էջերը ուր Տ. Գաբրիէլեան այս տեսութիւնը կը պարզէ, ինչպէս և անոնք ուր կը պարզէ թէ թուրք կառավարութեան և թէ եւրոպական դիւանագիտութեան ոճրագործ ընթացքը, ուժեղ ու յստակ վերլուծումի էջեր են, զերծ չըլլալով հանդերձ վիճելի կէտերէ։ Բայց գրքին եզրակացութեանը մէջ է մանաւանդ որ այլ ևս համաձայն չէմ Տր. Գաբրիէլեանին՝ մէկէ աւելի կէտերու վրայ. Տր. Գաբրիէլեան կը խորհի թէ 1895 և 96ի հայկական ջախջախումէն յետոյ՝ Հայք պէտք էր դադրեցնէին իրենց յեղափոխական գործունէութիւնը։ Պէտք չէր՝ ըստ իս՝ «դադրեցնէին», այլ փոխէին գործունէութեան ձեւը, խուսափէին ո և է ցոյց, արշաւանք սարքելէ, ջարդի պատրուակ տուող ո եւ է արարք կատարելէ, բայց ժողովրդին օգնէին՝ յարձակմանց դէմ ինքնապաշտպանութեան, և «պատրաստուէին»՝ ամէն միջոցներով, յարմար բոպէի մը ըլլուելիք ճիգին։

Տր. Գաբրիէլեան կը կարծէ թէ յեղափոխական պետերը որ շարունակած են բուռն միջոցներով գործունէութիւնը, կամ շահամոլներ են կամ խելագարներ՝ մեծ մասամբ։ Կրքոտ դատում մըն է այդ, անարդարՀև դատապարտելի (իրաւ է թէ շատ նուազ անարդար ու վայրագ քան այն դատափետումները զոր իրենք իսկ յեղափոխականներ իրարու դէմ ուղղած են տարիներէ ի վեր. բաւական է կարդալ ինչ որ իւրաքանչիւր կուսակցութիւն ըսած է միւս կուսակցութեանց գործիչներուն համար։) «Արտասահմանեան յեղափոխական» ի փաղանգին մէջ անշուշտ եղած են և կան դեռ յեղափոխութիւնն իրենց ապրուստի մի-

ջոց դարձուցած տիպարներ. բայց յեղափոխական «վարիչ»-ները՝ մեծ մասամբ՝ շատ անկեղծօրէն հաժողուած են իրենց կատարած դերին օգտակարութեանը. առասպելական անձեր չեն վերջապէս, կրճանչնանք զիրենք. ուրիշ ո եւ է գործով կրնային շատ հանգիստ ապրիլ անոնք. եւ կան անոնց մէջ որ գործերնին ձգած են այդ դերին լծուելու համար։ Ինչ որ իրենցմէ շատերուն կարելի է մեղադրել, ռոմանթիկ խանդավառութեամբ մը՝ իրականութեան տեսութիւնը կորսընցուցած ըլլալնին է։ Ուրիշ—եւ աւելի կարեւոր—մեղադրանք մը զոր կարելի է իրենց ընել, այն է որ դեռ չեն ըմբռնած թէ յեղափոխութեան վարիչները պէտք է երկրին մէջ գտնուին. Մակեդոնացի յեղափոխական բոլոր վարիչները կոուի դաշտին վրայ են. Եւրոպայի մէջ ունին երկու կամ երեք փրոփականտիստ։ Երբ յեղափոխական գործին վարիչ մարմինը երկրին մէջ փոխադրուի, հայ յեղափոխութիւնը թէ աւելի զգոյշ, գործնական կ'ըլլայ և թէ աւելի ուժեղ։ Ոչ միայն՝ մեր յեղափոխական կազմակերպութեանց վարիչները գրեթէ բոլորն ալ արտասահման կը գտնուին, այլ—ինչ որ արտառոց է - այդ կուսակցութիւններէն միոյն՝ Դաշնակցութեան՝ վարիչները տարամերժօրէն Ռուսահայեր են, որ Տաճկաստան ոտք անգամ երբէք չեն կոխած եւ բնաւ չեն ճանչնար երկիրն ու պայմանները։ Ասի մին է այն կարեւոր հարցերէն, որու մասին Անահիտի մէջ արդէն այնքան անգամներ ուշադրութիւն հրաւիրած եմ և որ պէտք է լուծուի յեղափոխական Համաժողովին մէջ՝ եթէ գումարուի։

Տր. Գաբրիէլեան կ'առաջարկէ իբր միակ դարման մեր ցաւերուն, և իբր միակ ուղին որմէ պէտք է ընթանայ ազգը այսուհետև, դադրեցնել բոլորովին՝ և անկեղծօրէն՝ յեղափոխական գործունէութիւնը, հրաժարիլ մեր քաղաքական ծրագրէն, և կրթական ու. անհատական զարգացման նուիրել մեր բոլոր ուժերը։

Այս գաղափարը՝ զոր ես իսկ յայտնած եմ տարիներ առաջ Նոր կեանքին մէջ, սխալ է։ Մեր յեղափոխական շարժումը շատ կանուխ սկսած է, բայց անոր դահավէժ ընթացքը, և այն բոլոր պայմանները որ ստեղծուած են այս վերջին շրջանին դէպքերուն հետեւանքով, այնպիսի կացութիւն մը ստեղծած են, որ այլ ևս մեզի համար ետ դառնալ նիւթապէս անկարելի է։ Տաճկաստանը այսօր կը ներկայացնէ կատարեալ քաոս մը, զոր յաւիտենապէս նոյնութեամբ պահպանել անկարող է քաղաքակիրթ աշխարհը՝ նոյն իսկ իր նիւթական շահերուն համար. Տաճկաստանը կարգի պիտի դրուի վերջ ի վերջոյ.

ատի պատմական բացարձակ անհրժեշտութիւն մըն է,» մենք այժմէն՝ հաշտութեան ձեռք կարկառելով Թուրք բռնապետութեան, Եւրոպայի աջակցութեանը դիմելու իրաւունքէն մեզ զրկած կ'ըլլանք ու Եւրոպական միջամտութեան պահուն մանաւորապէս մեզի ի նպաստ կարգադրութեան մը յոյսը—որքան ալ տժգունած, բայց դեռ ոչ բոլորովին ջնջուած—մեր ձեռքով չքացուցած կ'ըլլանք։ Ասկից զատ, մրդէն արդիւնքը որուն Տր. Գաբրիէլեան կը կարծէ թէ պիտի հանինք՝ այդպէս վարուելով, երևակայական է։ Եթէ մեր յեղափոխական ցոյցերը դադրին, ջարդերը կը դադրին, ատոր համոզուած եմ, բայց ոչ սիստեմական կեղեքումն ու սեղմումը. իսկ կրթական ու վաճառականական այդ լայն շարժումը զոր կ'երազէ Տր. Գաբրիէլեան, անհնար է որ անկաշկանդ տեղի ունենայ համիտական ռեժիմին տակ. Թուրք կառավարութիւնը այլ ևս թող պիտի չտայ որ Հայը զօրանայ՝ ո և է ձևով, նոյն իսկ տնտեսապէս, մտաւորապէս. ու երբ մանաւանդ՝ ամեն դիմադրողական միջոց մէկդի դրած, իր գիրկը նետունք, ինք պիտի որոնէ միջոցներ՝ մեզ դանդաղ, խուլ բայց ապահով միջոցներով հետզհետէ տկարացնելու, ճզմելու։

1896էն ի վեր, հայ յեղափոխական գործունէութիւնը պէտք էր ոչ թէ դադրէր, այլ ինչպէս որ ըսի, ամբողջապէս իր ձևը փոխէր։ Մինչ Վերակազմեալ Հնչակեանները այդ փոփոխութեան պէտքը զգացին և իրագործեցին զայն. բայց չկրցան դժբաղդաբար համոզել Դաշնակցականներն ալ որ հետևէին իրենց ուղղութեան։ Այս վերջինները գործունէութիւننին՝ նոյն իսկ աւելի յախուռն՝ շարունակեցին։ Տր. Գաբրիէլեան անարդար է երբ կը քննադատէ Վեր. Հնչակեանները, որ խոհեմ ու շրջահայեաց ընթացքի մը պէտքն զգալով հանդերձ՝ շարունակած են «պատրաստել» հայ ժողովուրդը պատեհ րոպէին ուժեղ ու վճռական ճիգ մը ընելու. պատեհ րոպէ մը օգտուելու յոյսը և ատոր համար աշխատելու ձգտումը՝ ներելի չէ վերցնել Հայոց սրտէն, որովհետև այն ատեն խաւարն ու յուսահատութիւնը կը տիրեն Հայութեան մէջ, ու ազգին բարոյական քայքայումը կը սկսի. այսքան ճիգերէ, զոհողութիւններէ, կորուստէ ու չարչարանքէ յետոյ՝ կարելի չէ վերջնապէս հրաժարեցնել ժողովուրդ մը այն իտէալէն որուն համար այդ բոլոր մարտիրոսութիւնը կրեց և կը կրէ. այդ յոյսը և այդ հաւատքը պէտք է միշտ հայ հորիզոնին վրայ նշուլեն։ Կ'ընդունիմ որ պէտք էր կարելի եղածին չափ քիչ խօսիլ, նոյն իսկ երբէք հրապարակաւ, (ինչպէս Կամպեթթա կ'ըսէր),

բայց միշտ մտածել ատոր մասին և պատրաստուիլ ատոր իրագործման։ Բայց հայկական դատին ի նպաստ դիւանագիտական գործունէութիւնը Եւրոպական պետութեանց և ժողովուրդներու մօտ՝ որուն շարունակումը և նոյն իսկ ընդարձակումը անհրաժեշտ կը նկատէ Տր. Գաբրիէլեան, գրեթէ նոյնքան զբաղիչ կրնայ ըլլալ Թուրք կառավարութեան համար՝ որքան վեր. Հնչակեաններուն «պատրաստութեան» հրաւէրները. դիւանագիտական այդ ջանքերը, նոյն իսկ գաղտնի, միշտ կիմացուին Թուրք կառավարութենէն՝ այդ անտարակուսելի է (և անկարելի է զանոնք միշտ գաղտնի կատարել)։ Ու արդէն այս բոլոր «դրական» պատճառներէն զատ որ այդ թէզին կը հակառակին, պիտի ըսեմ որ՝ ինքնին, զգայնական, բնազդական տեսակէտով՝ անկարելի բան մըն է Հայոց մերձեցումը Թուրք կառավարութեան՝ ցորքան Եըլտըզի հրէշը իր գահին վրայ մնայ։ Այդպիսի մերձեցման փորձ մը կրնայ փորձուիլ, երբ ուրիշ Սուլթան մը յաջորդէ արդի ճիւաղին։ Երբեք ըսել չեմ ուզեր թէ անձի փոփոխութենէն բեժիմի արմատական փոփոխութիւն կը յուսամ. բայց վերջապէս անկարելի չէ որ նոր Սուլթան մը պաշարէ ինքզինքը լուրջ և ազատամիտ տարրերով, մտածէ իր նախորդին գործած սխալը դարմանել և ջանալ համաձայնութեան մը յանգիլ հայ ազգին հետ (ինչպէս ըրաւ Էտուարտ Է. Պօէրներուն հետ). այն ատեն—եթէ այս վարկածն իրականանայ,—մենք ալ, ինչպէս Պօէրները քանի մը էական կէտերու վրայ որոշ երաշխաւորութիւն ստանալով՝ համաձայնեցան պայքարը վերջացնել, կրնանք օգտուիլ այդպիսի պարագայէ մը, և ընդունիլ մեզի եղած մերձեցման առաջարկ մը՝ մեր դատին հիմնական պահանջքներուն որոշ ու եւրոպական վերհսկողութեամբ երաշխաւորուած գոհացումն ստանալէ յետոյ։ Ատոր մէջ մեզի կրնան մեծապէս օգնել եւրոպացի ազդեցիկ հայասէրները. բայց յաջողութեան համար ամենէն անհրաժեշտ պայմանը՝ մեր յեղափոխական կուսակցութեանց համերաշխ գործակցութիւնն է այդպիսի բոլորի մը։

Այս բոլոր նկատողութիւններն ընելէ յետոյ, պէտք իսկ չունիմ ըսելու թէ որքան կը համակրիմ եւրոպական մեծ քաղաքի մը մէջ հայկական ինքնապահպան ուժեղ մարմինի մը կազմութեան գաղափարին, որու մասին այնքան, անգամներ գրած եմ Անահիտը մէջ և զոր Տր. Գաբրիէլեան կ'առաջարկէ՝ անգամ մը ևս՝ կորովի ու խանդավառ կոչով մը։ Ատի անհրաժեշտութիւն մըն է, որ պէտք էր իրագործուած ըլլար շատոնց, և որ չիրագործուեցաւ դեռ՝ միայն ու միայն մեր հա-

բուստներուն ամենաստուար մեծամասնութեան անտարբերութեան պատճառով։ Արդարև, կը բաւէր որ մէկ հարուստ մը կարեւոր գումար մը ինքնաբերաբար տրամադրէր՝ այդ գաղափարն իսկոյն գործադրութեան դնելու հաշար, և «լրագրական» բոլոր ճիգերը որ կը պարզուին քանի մը տարիէ ի վեր այնքան ամուլ կերպով՝ այլ ևս աւելորդ պիտի ըլլային, գործը արդէն սկսած պիտի ըլլար ապրիլ։ Մամուլի կոչերով, հանրային հանգանակութիւնով այդպիսի մեծ ծրագրի մը «լուրջ» յաջողութեանը մասին թերահաւատ եմ դժբաղդաբար. մեր չէզոք ըսուած հասարակութիւնը մամուլի կոչելով զգացուելէ հեռու է. Զէյթունի որբերուն համար բացուած հանգանակութեան համար՝ մամուլը իր ամենէն պերճախօս շեշտերը հնչեցուց, (և Պ. Զերաղ շատ գովելի կերպով դեռ կը շարունակէ իր ճիգերը այդ մասին). արդիւնքը շատ խեղճ եղաւ. ցարդ հազիւ 10,000 ֆր. գոյացած է, մինչ առնուազն 100,000 ֆր. պէտք էր։ Եթէ այսպիսի անվիճելիօրէն յարգելի և սրտաշարժ նպատակի մը համար մեր հասարակութիւնը այսքան դանդաղ և ժլատ է, չեմ կրնար երևակայել որ ընկերութիւն մը հիմնելու համար փութայ ճարել այն մեծ գումարները որ հարկաւոր են այդպիսի ընդարձակ ծրագիր մը իրականացնելու համար։ Յուսահատ չեմ սակայն այդ ծրագրին յաջողման կարելիութենէն. կը շեշտեմ միայն կարեւոր գումարով մը սկսելու անհրաժեշտութիւնը։ Հարուստ մը որ այդ հիմնաքարը ուղէ դնել, կրնայ անմահանալ։ Չկայ հայ հարուստ մը որ անմահանալ ուզէ...

Բայց համակարծիք չեմ Տր. Գաբրիէլեանին երբ այժմէն իսկ կ'ուզէ այդ կազմուելիք ընկերութեան տալ ոգի մը թշնամի հայ յեղափոխական մարմիններուն։ Այդ ոգւով հիմնուած մարմին մը պառակտումի նոր տարր մը կրնայ կազմել, ու բարիքէն աւելի չարիք կրնայ արտադրել։ Դերը՝ զոր ըստ իս՝ այդ մարմինը պիտի կատարէ, անջատ է յեղափոխական գործունէութենէն, և զայն կը լրացնէ. այդպիսի մարմնոյ մը հիմնարկութեան գաղափարը, հայ յեղափոխութեան սկսելէն շատ առաջ, Ծերենցի օրով լուացուած է արդէն. եթէ շատոնց այդ գաղափարն իրագործուած ըլլար, թերևս խել մը աղէտներու առաջքն առնուէր, կամ գէթ շատ մը վերքեր աւելի փութով և խնամով դարմանուէին. այժմ որ տարիներէ ի վեր յեղափոխական մարմիններ գոյութիւն ունին և կը գործեն, այդ հին գաղափարը իր անհրաժեշտութիւնը չէ կորսնցուցած. ընդհակառակն։ Ամեն նոր դէպք աւելի ուժեղ կը զգացնէ անոր պակասը։

Ընկերութիւնը որ պէտք է հիմնուի, ոչ միայն պէտք չէ թշնամի ըլլայ յեղափոխական մարմիններուն, այլ պէտք է ջանայ անոնց վրայ բարերար ազդեցութիւն մը ունենալ, պէտք է զանոնք պառակտող դժտութիւնները ջնջելու, զանոնք մերձեցնելու աշխատի, ճշնի մեղմացնել անոնցմէ ոմանց ծայրայեղ յանդգնութիւնները։ Իսկ իր բուն գործունէութիւնը պէտք է ըլլայ քաղաքակիրթ աշխարհին ճանչցնել մեր ազգին պատմութիւնը, քաղաքակրթութիւնը և ցաւերը, եւրոպական և ամերիկեան կառավարութեանց ուշադրութիւնը միշտ հրաւիրել մեր դատին վրայ, նպաստել մեր ազգին պահպանման, նիւթական ու մտաւոր զարգացման, օգնել հանրօգուտ մտաւորականներու (օրինակ՝ Նորայր Բիւզանդացիի պէս գիտուններու) արտադրութեանց երևման, օգնել ապագայ խոստացող ուսանողներու, վաղուան Հայութեան համար «մարդ»եր կազմել, ևն. ևն.

Հակառակ այս կէտերուն մէջ տեսութեան տարբերութիւններուն որ զիս կը բաժնեն Տր. Գաբրիէլեանէն, իր գիրքը, կը կրկնեմ, ինծի կը թուի իբրև շատ կարևոր, ցնցիչ ու այժմէական գործ մը։ Անոր ծայրայեղութիւններն ու անարդարութիւններն իսկ յառաջ կուգան բուռն ազգասիրութենէ մը, Հայութեան սպառնացող ահաւոր վտանգին խռովեցուցիչ զգացման սաստկութենէն։ Ազնուութիւնը ձգտումներուն որ մղած են հեղինակը՝ այդ գործը գրելու, վէճի իսկ չի կրնար ենթարկուիլ։

Ասոր համար է որ տարօրինապէս անհարկի գտայ այն եղանակը որով Զայն Հայրենեացի «Տերտունի»ն քննադատած էր այդ գիրքը։ Տր. Գաբրիէլեան հայ յեղափոխականները խստիւ քննադատած ըլլալով, անշուշտ ինքն իսկ կը սպասէր որ իր գործն ալ քննադատուէր խստօրէն։ Բայց քննադատութիւն ընել չէ ելլել ըսելը թէ Տր. Գաբրիէլեան յաճախորդ չունեցող բժիշկ մըն է, թէ իրեն ըեքլամ ընելու համար է որ այդ գիրքը հրատարակած է, և թէ «մարդը պարապ տեղը չէ որ Ակնցի է ծներ !!»։ «Տերտունի»ին հայրենասիրական հռետորութեան ժայթքումէն, նոյն իսկ «Զայն Հայրենեաց» ին հիմնարկութենէն շատ առաջ, Տր. Գաբրիէլեան ազգասիրական եռանդուն և ուշիմ գործունէութիւն մը ունեցած է. և յեղափոխական գործունէութեան անցեալին սխալները—անոնք զոր Վեր. Հնչակեան կուսակցութիւնը ինքն ալ կ'ընդունի,—Տ. Գաբրիէլեան այդ առաջին շրջանին՝ երբ Վեր. Հնչակեան կուսակցութիւնը դեռ գոյութիւն չունէր՝ արդէն մատնանիշ ըրած է ողջմտօրէն։ «Հայկական Միութիւն» մը, գրեթէ այն ծրա-

գրով զոր այսօր կը բաղձանք իրագործուած տեսնել, արդէն ինք յղացած և առաջարկած է տասը տարի առաջ, իր պիրճախօս մէկ ատենաբանութեան մէջ։ Մ՚ըդ մըն է, որ ինքիրենը, իր միջոցներովը, իր ըմբռնած եղանակովը, բայց ամենայն անձնուիրութեամբ ու եռանդով աշխատած է տարիներէ ի վեր իր ազգին համար։ Ներելի չէ ուրանալ ինչ որ կայ արժանիք այդպիսի անձի մը մէջ, և անոր քննադատութեան արժէքը կոտրելու ելլել՝ անոր անձը ծիծաղելի դարձընել ձգտելով։ Իսկ մէկ տողով շահամոլ ու շարլաթան հռչակել բոլոր Ակնցիները,—այսինքն Հայութիւնը կազմող ամենէն արուեստագետ, ամենէն նուրբ ու ազնուական տարրերէն մին,—անազնիւ թեթեւոլիկութիւն մը՝ է, որ զիս չի զարմացներ «Տերտունի» ին կողմէն, բայց շատ կը զարմացնէ երբ զայն կը տեսնեմ Վեր. Հնչակեան կուսակցութեան օրկանին մէջ հիւրընկալուած։ Եթէ «Տերտունի» կ՚ուզէ ըմբռնել տարբերութիւնը ճշմարիտ քննադատութեան և իրենին միջև, թող կարդայ Ազատ Բեմի մէջ Շ. ստորագրող Հնչակեանին յօդուածները. անոնք ներողամիտ կամ համակրական ըլլալէ հեռու են Տր. Գաբրիէլեանի համար, բայց բարեկիրթ, փաստերու վրայ հիմնուած, լաւ տրամաբանուած յօդուածներ են *)։ Ինչ

*) Ըսեր չեմ ուզեր թէ համաձայն եմ Շ. ի պարզած բոլոր տեսութեանց։ Տր. Գաբրիէլեանի յայտնած մէկ քանի ծայրայեղութիւնները կամ անճշտութիւնները քննադատելով, ինքն ալ կ՚իյնայ հակընդդէմ ծայրայեղութեան մէջ. կը ձգտի ապացուցանել որ նոյն իսկ եթէ Հայը—Ներսէս Պատրիարք ու յեղափոխականներ—ոչինչ ըրած ըլլային, Թուրք կառավարութիւնը արդէն որոշած էր Հայ տարրը բնաջինջ ընել և թէ այդ որոշումը պիտի գործադրէր նոյն իսկ եթէ Հայերը անշարժ մնացած ըլլային։ Թէ Թուրք կառավարութիւնը որոշած էր սեղմել ու տկարացնել Հայութիւնը, այդ ճիշտ է, բայց թէ ան երբեք պիտի չկարենար այն հայաջինջ ծրագիրը իրականացնել այն ահաւոր չափով որով իրականացուց առանց Հայոց տուած պատրուակներուն, ասիկա աւելի ճիշտ է։ Եւ եթէ ասիկա ճիշդ չըլլար, ինչու Վեր. Հնչակեանները տարիներէ ի վեր կը դատափետէին Դրօշակեանները իբրև իրենց արարքներով Հայութեան վրայ ազէտքներ հրաւիրող. Զայն Հայրենեացը, Սասունի դէպքերէն յետոյ՝ այլանդակ ծայրայեղութեանց հանող յօդուածներով մինչև իսկ «ազգասպան» կանուանէր Դրօշակեանց վարիչ մարմինը։ Անուրանալի է որ մեր վրայ խուժած դժբախտութիւններուն մէջ՝ մենք ալ ունեցած ենք պատասխանատուութեան բաժին՝ մեր ռոմանթիկ և անքաղաքագէտ խանդավառութեամբ, մեր հաշուելու անկարողութեամբ. զայդ խոստովանելու քաջութիւնը ունենալու ենք։ Թուրք

հակասութիւն՝ արդէն, սկսիլ ծիծաղելի և ապուշ «տիրացուի» մը գործը նկատելով այդ գիրքը, և այդ անանուն համարուած գրքին նուիրել հազարաւոր տողերով անվերջանալի յօդուածներ, որոնք՝ հաւաքած՝ Տր. Գաբրիէլեանի գրքին չափ ստուար հատոր մը կրնան կազմել։ Տր. Գաբրիէլեանի գիրքը այնքան քիչ «անանուն» է, որ նոյն ինքն Տերտունին ստած է իր գաղափարներէն մէկ քանին փոխելու։ Երբ Տերտունի կ'ըսէ թէ ինք երբեք հակառակ չէ եղած Տր. Գաբրիէլեանի առաջարկածին պէս ընկերութեան մը հիմնարկումին, թէ յեղափոխական միջոցներու հետ կրթական, գրական միջոցներով ալ հայկական դատին ծառայելու օգտակարութիւնը երբէք չէ ուրացած, ճշմարտութիւնը չէ որ կ'ըսէ. ընդհակառակն, մինչև ցարդ, «Տերտունի», թէ իր այդ կեղծանունով հրատարակած յօդուածներուն և թէ Զ. Հ.ի խմբագրականներուն մէջ, միշտ հակակիր կամ հեգնական ակնարկութիւններով խօսած է այդ ուղղութեամբ գործունէութեան առաջարկներու կամ նոյն իսկ արդէն այդ ճամբով կատարուած փորձերու մասին և ատիկա արդէն ապշութեամբ կը նկատէի օրկանին մէջ կուսակցութեան մը, որ, իր հիմնական ուղղութեան և սկզբունքներուն հետևանքով, ինքն իսկ առաջին օրէն պէտք էր ամենէն աւելի ուժ տար յեղափոխական գործունէութեան այդ անհրաժեշտ լրացուցիչ և ինքնին նոյնքան կարևոր գործունէութեան կազմակերպեալ, կանոնաւոր, հզօր ձևով մը կատարուելուն, ինքն իսկ պէտք էր ամենէն աւելի եռանդով աջակցէր որ այդ բաղձացուած ընկերութիւնը հիմնուած ըլլար ցարդ, ու մշտական, բազմաձեւ, ուժեղ հայանպաստ փրոփականտի շարժում մը շատոնց ի վեր յաջորդած

կառավարութիւնը սկզբէն ի վեր կը բաղձայ և որոշած է ջնջել Զէյթունը. ինչու՞ ցարդ չէ կրցած ջնջել զայն, որովհետև Զէյթունցիք, այնքան քաղաքագէտ որքան քաջ՝ երբեք պատրուակ չեն տուած. արիաբար ինքզինքնին կը պաշտպանեն՝ երբ յարձակում կրեն. անպատեհ պարագաներու մէջ նախաձակ ըլլալու երբէք չեն հաւանիր, 96էն ի վեր բացարձակապէս խոհեմ դիրք մը կը բռնեն, և ատոր համար է որ ազատ մնացին կործանումէն որ իշաւ Սասունի վրայ։ Պոլիս ու Իզմիր Հայութիւնը յարաբերական հանգստութիւն մը ունէր, որ երբեք պիտի չվրդովուէր, եթէ Իզմիրի և Պոլսոյ մէջ Հայերու ձեռքով կուտակուած ռումբեր չգտնուէին և եթէ Աբիկ Ունճեանի ցաւալի սպանութիւնը տեղի ունեցած չըլլար։ Այս բոլորը ըսելէ յետոյ, կը կրկնեմ սակայն որ Շ. ի յօդուածները կը համարիմ «քննադատութիւն»—որքան ալ ըլլան միակողմանի—որովհետև իրապէս «մտքի արտադրութիւններ» են և ոչ թէ շողիքի ժայթքումներ։

ըլլար անհատնելու կողմէ ահաւոր նեղութիւններով փորձուած փոքրիկ ճիգերուն։ Armenia բազմօգուտ թերթին հիմնարկութիւնը, զոր ամենէն աւելի ուրախութեամբ գնահատողներէն եղայ ես բնականաբար, շատ աւելի առաջ կրնար ու պարտէր կատարուած ըլլալ. ու ատոր պէս դեռ շատ, խիստ շատ ձեռնարկներ կան որ պէտք էր կատարուած ըլլային, ու չեն կատարուած դեռ։ «Տերտունի» մերթ առաջ գացած է մինչև իսկ ազգային-գրական կարգ մը ձեռնարկներ բուն յեղափոխական գործին գրեթէ վնասարար (!) նկատելու չափ. Պէշիկթաշլեանի քերթուածներուն երկրորդ տպագրութեան առթիւ գրուած յօդուածի մը մէջ, չկարենալով հանդերձ գործին ներքին արժէքն ուրանալ, ազգային պայքարէն հանրային միտքը շեղեցնող, այժմէական էական հարցէն հեռացնող արարք մը համարձակած էր նկատել երկրորդ տպագրութիւնը Պէշիկթաշլեանի երգերուն (որոնք սակայն հայրենիքի սէրը կը պանծացնեն ու Զէյթունը կ'երգեն ինչպէս ոչ մէկ հայ բանաստեղծ չէ երգած) ու գրեթէ ներողութիւն կը խնդրէր իր ընթերցողներէն՝ այդպիսի գործի մը վրայ խօսելով ազգային հարցէն պահ մը իրենց ուշադրութիւնը հեռացուցած ըլլալուն համար(!!)։ Միևնոյն ձգտումով, ամենէն վայրագ նախատինքներով քարկոծեց, պարզապէս մատնիչ ու դաւաճան հռչակեց Պօղոս փաշան, որովհետև առևտրական ազգային վարժարան մը հիմնելու գաղափարն ունեցած է, գաղափար որ, ինչքան ալ ազգային դատին՝ անմիջական ծառայութիւն մը մատուցանելու կոչուած չըլլայ, անվիճելիօրէն և բազմաթիւ տեսակէտներով «ազգօգուտ» գործ մն է։ Ու հիմակ ալ ծաղրելու ելեր է մեր հին մոռցուած բանաստեղծութեան գոհարները երևան հանելու ճիգերը, որոնք հայ ազգին ինք իր մտաւոր ուժին վրայ հաւատքը աւելցնելու գլխաւոր նպատակն ունին՝ բաց ի գեղեցկագիտական հաճոյքէն, և որոնց առթիւ փարիզեան մեծ քննադատի մը կողմէ Քուչակի մը Հայնէի հետ բաղդատութեան դրուիլը ազգային դատին—այո, ազգային դատին—աւելի գրականապէս օգտակար է՝ հասկցողին համար՝ քան «Տերտունի»ի բոլոր յօդուածները մէկանց։ Եթէ «Տերտունի» Հայաստանի մէկ կողմէն միւսը սուրացող, ամեն վայրկեան կեանքը վտանգի դնող, գործի ու միայն գործի մէջ ապրող գործիչ մը ըլլար և սրտնեղութեամբ մէկդի նետէր ո և է գրչի աշխատութիւն՝ իբր անօգուտ, պիտի հասկնայի —առանց արդարացի նկատելու— այդպիսի պարզ ու կտրուկ հոգիի մը ըմբռնումը և մտքէս իսկ պիտի չանցընէի վէճի մտնել արիւնի մէջ ապրող և ուրիշ

բան տեսնել չկրցող մարդուն հետ։ Բայց այդ որպէս թէ գիշեր ցորեկ պայքարին ու միայն պայքարին վրայ հեւ ի հեւ մտածող «Տերտունի»ն Ամերիկայի ափերէն դեռ չէ հեռացած, և իր ամբողջ գործունէութիւնը թղթեղէն է։ Հայրենիքը զէնքով չէ միայն որ կը շինուի. ու զէնքով չէ միայն որ անոր կորսուած անկախութիւնը կը վերստացուի. զէնքը, գիրքը, դպրոցը, արուեստը, աւանդութիւնները, երգերը, այս բոլորը մէկանց են որ կը հիմնեն հայրենիքը և անոր պահպանումը, կամ անոր ազատութեան վերըստացումը կ'ապահովեն։ Ասկից զատ, արդէն սխալ է կարծել թէ մտաւորական գործունէութիւնը արգելք մըն է դիւացաղնական ճիգերու զարգացումին. Աղեքսանդր Մակեդոնացին, որ դիւցաղնութեան մասին՝ կ'ենթադրեմ՝ դաս չունէր առնելու «Տերտունի» էն, Հոմերոսը հետը կը տանէր իր բոլոր պատերազմներուն մէջ, և անոր ընթերցումը զինքը չէր արգիլեր իր քաջութիւնն ապացուցանելէ. ընդհակառակն։ Մացցինի, որ իտալական վերածնութեան յղացողն եղաւ ու անոր հոգին՝ մինչև վերջը, իր յեղափոխական փրոփականտի յօդուածներէն զատ՝ իմաստասիրական, գրական, գ'զարուեստական ահագին գործեր արտադրած է, և յաճախ ալ այդ բոլորը կը ձդէր՝ կիթար զարնելու համար. կիթարն ու իր զուտ մտաւորական աշխատութիւնները չարգիլեցին զինքը Իտալիոյ վերածնութեան ամենէն մեծ նպաստողն ըլլալէ, ոչ ալ Իտալիան՝ վերականգնելէ։ Ու ծիծաղելին այն է որ Պէշիկթաշլեանի գործերուն երկրորդ տպագրութիւնը ոչ—այժմէական հոչակող այդ պարոնը Զ. Հ.ին մէջ հրատարակից սակայն ամենայարգելի անձնաւորութեան մը դէմ իր նախկին գրագրին կողմէ անձնական անիմաստ ու գռուռ վրէժ մը հանելու նպատակով շարադրուած երգիծական յղրճուկ գրութիւն մը, որ չեմ գիտեր ինչ կապ կրնար ունենալ «ազգային բուն գործին հետ»...

Գարշելի տիպարի մը, զազիր գործի մը ամենավայրագ խարանումը անշուշտ անհրաժեշտ բան մըն է, և այդ մասին ոչ մէկէն դաս առնելու պէտք չունիմ։ Բայց ատել՝ ատելու համար, բանի մը կամ մէկու մը դէմ լրծնել՝ ատոր հաճոյքին համար, գործիչի մը կամ կազմակերպութեան մը քննադատելի կողմը ի վեր հանելու ատեն՝ ուրանալ անոր մէջ գտնուած բացայայտ արժանիքը, զայն մէկ գոյնով՝ մաղձի կոհակով մը ներկել ու այլակերպել, ատիկա տգեղ է, անընդունելի՝ առողջ ու գիտակից մարքի մը, շիտակ ու վեհանձն նկարագրի մը՝ համար, և այդ ձգտումն է որ կը գտնեմ «Տերտունի»ի մէջ

շատ յաճախ, և որ կ'երևայ թէ անբուժելիօրէն պիտի միշտ ապականէ այդ պարոնին գրական փայլուն կարողութիւնները։ Մանկասարեանը Զ. Հ.ի մէջ «Ամերիկայի մտաւորական աստղերէն մին» հռչակելէ յետոյ՝ ելլել պարզապէս հայկական հարցին նկատմամբ թղթակցի մը անոր վերագրած ու առաւել կամ նուազ ճշդութեամբ թարգմանուած կարծիքէն ցասկոտելով՝ զայն ցոյց տալ իբր ողորմելի միջակութիւն մը, որ արդէն ըսուած բաներ կրկնելէն ուրիշ բան չէ ըրած . . . առ նուազն թեթևսոլիկութիւն է, և այսպիսի վճիռներ արձակողը ծիծաղելի դարձընելէն ուրիշ բանի չի ծառայեր, որովհետև Մանկասարեանի մը արժանիքը վերջապէս բնաւ երբեք պէտք չունի «Տերտունի»ին գնահատումին՝ իր նուիրագործումը գտնելու համար։ Մտուգելէ յետոյ որ Պ. Մանկասարեան իրօք ըսած է՝ ճիշդ նոյն բառերով՝ ինչ որ իրեն վերագրուած է, կարելի էր խստիւ քննադատել իր այդ կարծիքը, առանց իր մտաւորական արժէքին դպչելու։ Տեսէք Բլէժանսօն, հոյակապ Բլէժանսօն· Ժորէսի հետ իր ատենէ մը ի վեր վարած բուռն բանակռուին մէջ, անոր գլխուն իր բոլոր ուժով իջեցնելէ յետոյ հարկ եղած հարուածները՝ այն կէտերուն մէջ ուր համաձայն չէ անոր գաղափարներուն, ոչ մէկ առիթ կը փախցնէ բացէ ի բաց, անվերապահօրէն խոստովանելու իր հակառակորդին ուրիշ տեսակէտով ունեցած արժանիքները։

Աւելին կայ։ Կովկասի Մահմետականներուն և Հայերուն միջև պայթած բաղխումին առթիւ «Տերտունի»ի հրատարակած յօդուածները անազնուութեան չափն ու սահմանն անցուցին. այդ յօդուածները կը ճգնէին, կը քրտնէին, կը գալարուէին ապացուցանելու համար՝ և գրեթէ տեսակ մը ազատոտ ուրախութեամբ՝ թէ Կովկասի Հայութիւնը ոչխարի պէս ջարդուած է. ասիկա՝ պարզապէս հարուածելու համար հակառակորդ կուսակցութիւն մը, զայն ցոյց տալով ապիկար՝ ռուսահայ հասարակութիւնը թաթարական յարձակմաց դէմ պաշտպանելու. և ինչ փաստի վրայ կը հիմնուէր «Տերտունի» այդ վճռով խարանելու համար Հայութեան ամբողջ կէսը և ամբողջ կուսակցութիւն մը, — Շարժում ըսուած էականապէս գարշելի թերթի մը մէջ անձնական ու գռուռ հաշիւներով հրատարակուած թղթակցութեան մը վրայ *)։ Արդ, ամէն ոք

*) Պէտք է այստեղ ըսեմ թէ աննեբելի կը գտնեմ այն համակրական դիրքը զոր բռնեցին Վեր. Հնչակեան և չեզոք թերթերը «Վարդօ»ի Դաշնակցութեան դէմ վերջերս սկսած պայքարին հանդէպ, և զոր մինչև իսկ «առնական, անկեղծ,

գիտէ թէ ո՛րքան անարդար էր այդ վճիռը. ճիշդ է միայն որ Բագուի մէջ թրքական անակնկալ յարձակման առաջին երկու օրերուն, անպատրաստ հասարակութիւնը՝ յանկարծակիի եկած՝ ջարդուեցաւ չատ քիչ ինքնապաշտպանութեամբ. պէտք է սակայն ի նկատի ունենալ որ Պաքուի մէջ Հայերը ճղճիմ փոքրամասնութիւն մըն են մահմետականներու ջախջախիչ մեծամասնութեան մէջ ընկղմուած, և թէ բաց ի գործաւորներէն՝ Բագուի Հայերը, զեղխ ու վայրաժոլ կեանքի մէջ թուլցած մարդիկ են և բնական է որ դժուար պաշտպանէին ինքզինքին

քաջ՝ ածականներով նուիրագործելու չափ առաջ գացին։ Դրօշակեան կուսակցութիւնը շատ քննադատելի կողմեր ունեցած է և ունի մինչև այսօր, մենք միշտ քննադատած ենք զայն, ու պիտի շարունակենք քննադատել. բայց երբեք պէտք չէ մեր քննադատութեան մէջ գործածենք զէնքեր որ աղտոտ են. այդ Վարդօի պայքարը ոչ անկեղծ, ոչ առնական է, քանի որ յայտնապէս անձնական ու նիւթական աղտոտ ու գռեհիկ շարժառիթներէ մղուած է. այդ ողորմելին, որ այսօր կը յայտարարէ թէ Պոլսոյ Օսմանեան Պանքային ցոյցին սկիզբէն հակախոհ է եղեր, թէ Դրօշակեան կազմակերպութիւնը բացարձակ կեդրոնացումի սիստեմի վրայ հիմնուած է շեփորուած ապակեդրոնացման հակառակ, թէ Սասունի վերջին ջախջախումը արդիւնքն էր այդ կուսակցութեան անխորհուրդ թաքթիքին, են, այդ պարոնը հինգ վեց տարիէ ի վեր ամենէն զզուելի, ամենէն անխիղճ անուանարկումով հալածած է այն բոլոր ճշմարտապէս անկեղծ անձերը որ ճիշտ այդ բաները կըսէին, և գիտնալով Դաշնակցութեան կարգ մը արարքներուն սխալութիւնը՝ մինչև հրկինք հանած է այդ կուսակցութիւնը, և այսօր այդ կուսակցութիւնը կը քննադատէ պարզապէս անձնական դձուձ հաշիւներու գոհացում տալու համար։ Ճիշտ է որ Դրօշակեանները միշտ օգտուած են Վեր. Հնչակեան կուսակցութենէն վըտարուած ողորմելիներու վայհայհանութիւններէն, իրենց իբր մատնիչ դատապարտած Արփիարեանին յարձակումները Վեր. Հնչակեանց դէմ իբր աւետարանական ճշմարտութիւններ ընդունած և զանոնք ուզած են գործածել իբր զէնք Վեր. Հնչակեանց վարկը կոտրելու համար. Դրօշակեանները միշտ արդէն ներողամիտ, խրախուսական դիրք մը բռնած են անուանարկումի միջոցով հակառակորդ մը փշրելու սիստեմին. Վարդօի թերթը ամենէն քստմնելի գործիքն էր անուանարկումի. ամենէն ճիւաղային զրպարտութիւնները այնտեղ հրատարակուած են շնական անպատկառութեամբ. «Արևմտեան բիւրո»-ն, գիտնալով յաճախ որ այդ հրատարակումները բարոյական գիտակից մարդասպանութեան փորձեր էին պարզապէս, անփոյթ կը կենար, կը խրախուսէր։ Այսօր կեղտի ծորակը իրեն դէմ է որ կը բացուի. Արևմտեան բիւրոն պէտք չէ զարմանայ։ Բայց ան իրաւունք ունիմ զարմանալու որ Վեր. Հնչակեանները, որոնց

աւազակութեամբ ապրող և սպանութեան մէջ վարպետ ճիւաղներու դէմ (եթէ Փարիզի բոլոր Ափաշները մէկանց իրիկուն մը յարձակէին մեծ պուլվարին սրճարաններուն մարդոցը վրայ, ասոնք ալ գրեթէ նոյնքան դիւրութեամբ պիտի ջարդուէին). կառավարութիւնը բացարձակապէս արգիլեց Պալախանիի հայ բանւորներուն օգնութեան հասնիլ քաղաքին Հայերուն, եւ բռնի զինաթափ ըրաւ անոնք որ զէնք ունէին, զէնք բաժնեց Թաթարներուն, օգնեց անոնց բացէ ի բաց. այս պայմաններուն մէջ՝ ոչ միայն ներելի չէր այդքան կոպիտ կերպով դատապարտել նահատակուող Հայութեան հատուած մը, այլ պէտք էր ընդհակառակն հիանալ որ այդ աննպաստ դրութեան մէջ՝ և շատ սակաւաթիւ ըլլալով հանդերձ՝ քաղաքին երիտասարդները կրցան վերջ ի վերջոյ զէնքով դիմադրել Թաթարներու խուռն բազմութեան և այդ հրոսները ետ մղել. կորովի այդ ապացուցումը կատարուեցաւ շնորհիւ Դաշնակցութեան. տարբրական պարտականութիւն մըն է գովել գործիչ մը կամ կազմակերպութիւն մը՝ զոր քննադատած ես առաջուց՝ երբ լաւ բան մը կ'ընէ. «Տերտունի» ոչ միայն գիտակցութիւնը չէր ունեցած այդ տարբրական պարտականութեան, այլ «հակառակորդին վրայ գերազանց յատկութիւններ գտնել ուզող պարոններուն մէջ՝ ամենէն սիրուելու, ներուելու! խնայուելու!! ներքին ձգտումներ» կ'երևակայէր. արդ այդ այլանդակ յօդուածէն քանի մը օր յետոյ կը ստանայի Վեր. Հնչակեան պաշտօնական օրկանը, Հնչակը, ուր կ'ըսուէր՝ շատ որոշապէս՝ թէ Բագուի Հայութիւնը՝ թէպէտ ուշ գիտցաւ դիմադրել թաթար զաւաններուն. Հնչակեան կուսակցութեան վարիչնե՞րն ալ ուրեմն կ'ուզեն «ամենէն սիրուիլ, ներուիլ, խնայուիլ» . . . : Եւ արդէն նոյն իսկ եթէ միլիոններու քաղաքին բոլոր Հայերը ոչխարի պէս ջարդուած ըլլային, ի՞նչ իրաւունք ունի մարդ՝ մինչ այդ մանրամասնութիւնը տեսնելու այն ամբողջ երկարատև դիւցազներգութեան մէջ զոր Կովկասի Հայութիւնը կ'ապրի երկու տարիէ ի վեր և որ մեր ազգին պատիւն ու վարկը բարձրացուց, եկեղեցական կալուածներու գրաւումէն ի վեր, Կովկասի Հայութիւնը, — Կաթողիկոս, հարուստներ,

---

դէմ Վարդ հրատարակած է ամենէն նողկալի զրպարտութիւնները (զոր այժմ ալ ետ առնել մտքէն իսկ չանցներ) հեռեին Դրօշակեան սիստեմին, օգտուիլ ուզեն այդքան թունաւոր և արհամարհելի տիպարէ մը։ Դրօշակեան կուսակցութիւնը քննադատելու համար պէտք չկայ այդ փաստին, որ փաստ չէ։

բանուորներ, մտաւորականութիւն, և մանաւանդ յեղափոխականները, — այնպիսի կորովի դիմադրութիւն մը ցոյց տուաւ, որուն նմանը Ռուսիայէն կեղեքուած ուրիշ ցեղերը քիչ անգամ ցոյց տուած են, ու Թաթարներու յարձակումին՝ առաջին շուարումի վայրկեանը անցնելէ յետոյ՝ ահա վեց ամսէ ի վեր արիաբար կը դիմադրէ այդ Հայութիւնը. ամէն այն տեղուանքը ուր թիւի բացարձակ փոքրամասնութիւն չեն ունեցած, Հայերը ետ մղած են ու կը մղեն դեռ մահմետականները. ճշմարիտ պայքարներու մէջ՝ ուր երկու կողմէն զինուած մարդիկ իրարու հետ կռուած են՝ Հայերն են միշտ յաղթական ելած. մահմետականները ջարդած, կոտորած, աւերած են այն գիւղերը միայն՝ որոնք կղզիացած են՝ մահմետական հոծ զանգուածներու մէջտեղ։ Շուշիի նորագոյն բաղխումին մէջ, մահմետականներէն շատ աւելի մարդ մեռած է քան Հայերէն։ Ինչու «Տերտունի» գէթ պարտաճանաչութիւնը չ՚ունենար ետ առնելու իր անազնիւ դատափետումը։ Ոչ միայն չըրաւ ատիկա, այլ ելաւ խրատական մըն ալ ուղղելու Կովկասի Հայերուն, հրաւիրելով զանոնք որ Թաթարներուն օրինակին հետևելով՝ իրենք ալ այրեն, մորթեն ու պղծեն։ Հայ ժողովրդին գերագոյն պարծանքն է՝ այս վերջին ահաւոր շրջանին մէջ՝ իր դահիճներուն դէմ ազնիւ ու քաղաքակիրթ ազգի պէս արուած ըլլալը, ուր որ կրցած է, Հայը քաջութեամբ ինքզինքը պաշտպանած է, բայց երբ պատահած է որ ինքն ըլլայ յաղթող, երբ իր ձեռքը ինկած են մահմետական գերիներ, մարդասիրութեամբ վարուած է անոնց հետ, իսկ կիներուն (ինչպէս երախաներուն) երբեք չէ դպած. Շուշիի վերջին բաղխումին նկարագրութեանց մէջ զոր Մշակը հրատարակած էր, մեծ գոհութեամբ տեսայ որ՝ մինչ Թաթարները գազանական վայրագութեամբ կը վարուէին հայ կանանց ու տղոց հետ, Հայերը թաթար վիրաւորները հիւանդանոց կը տանէին ու կը խնամէին։ Այդ վեհ զգացումներն են դարձեալ որ մղեցին Կովկասի Հայերը՝ Թաթարներուն յարձակմանց ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տալէ յետոյ՝ անոնց խելահաս ու լուրջ (կամ գէթ այդպէս նկատուած) մասին կոչ ուղղելու հաշտութեան, գործուած ապուշ սխալին դարմանման։ Պատմութիւնը օր մը սքանչացմամբ պիտի արձանագրէ Հայոց այդ վարմունքը, ուր կորովը, ազնուութիւնը և ուշիմութիւնը միացան. և հոս է բուն վրէժը զոր մեր ժողովուրդը լուծած պիտի ըլլայ այդ անգիտակից ու ստորադաս անասուններու վոնմակէն։ Ցաւալի

— և ապշեցուցիչ — է ինծի համար որ Զայն Հայրենեցին մէջ — ու հոն միայն — արտայայտուած ըլլայ Թաթարներուն հմանելու, անոնց հաւասարելու, անոնց պէս անասնանալու հրաւէր մը . . . :

Ասոնք ըսելու մէջ հաճոյք զգալէ հեռու եմ: Աւելի գոհ պիտի ըլլայի որ Վեր. Հնչակեան կուսակցութիւնը ինքն իսկ ասոնք զգացուցած ըլլար «Ծերտունի»ին: Կուսակցութիւնը չեմ շփոթեր այդ անհատին հետ, բայց չեմ կրնար ընդունել որ կուսակցութիւնը թոյլ տայ անհատի մը՝ արտայայտել կուսակցութեան օրկաններէն մէկուն մէջ զգացումներ ու կարծիքներ որ այդ կուսակցութեան ոգիին և զայն հիմնողներուն զգացմանց — կէթ ես այդպէս կը կարծեմ, — համաձայն չեն:

(Անանիտ) Ա. ՁՕՊԱՆԵԱՆ

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Դուման, Պետական Դուման—դա այն մեծ արտօնութիւնն է, որ տրուեց չարատանջ ժողովրդին հոկտեմբերի 17-ի մանիֆէստով։ Մեծ բան չէր խոստանում այդ՝ թղթի վրայ արձանագրուած խոստումը, բայց և այնպէս վառ յոյսեր էին կապուած կայսերական այդ առանձնաշնորհի հետ, ուստի և մի մեծ ժողովուրդ անհամբեր սպասում էր այդ արտօնութեան ի կատար ածելուն—գոնէ կը բարուրքուի այս լարուած դրութիւնը, մտածում էին մարդիկ։

Սակայն ձգձգում, յետաձգում էր Դումայի բացումը, մի նիստ, ուր առաջին անգամ, ռուս ժողովրդի ամբողջ պատմութեան մէջ, պէտք է ձայնէր ժողովրդի ընկճուած հառաչը և օրէնքներ մշակուէր նրա ցաւը ամոքելու։

Հասաւ վերջապէս այդ *մեծ* օրը. պատմութիւնը գծեց մի նոր շրջան և ապրիլի 27-ին բացուեց Դուման։ Մի մեծաշուք հանդէս էր այդ, ուր ներկայ էին կայսերական ընտանիքի համարեա բոլոր անդամները, տէրութեան *մեծերն* ու *հնազոյները*, վստահելի հանդիսականներ, թղթակիցներ ու վերջապէս ամենակարևորները—ժողովրդի ներկայացուցիչ պատգամաւորները, որոնք շտապել էին Ս. Պետերբուրգ հասնել, թուով 400 աւելի։ Եւ այստեղ, այս շլացուցիչ հանդիսին մեծարգոյ պատգամաւորները շատ բան տեսան... Նախ և առաջ Ցարին, որին դէմ առ դէմ տեսնելու բախտին սակաւ ընտրեալներն են միայն արժանանում։ Բայց և շատ ոսկի ու գոհար—ինչպէս չեշտեց և մի պատգամաւոր—որի մի չնչին մասով ոչ միայն մի նոր պատերազմ ևս կարելի էր հրաւիրել, այլ և... ամենաչարքաշ մեծ ժողովրդի ողորմելի գոյութիւնը ապահովել, այն էլ փառաւոր կերպով։—Երանի այն պետին, որ ձեռը սրտին դրած մրմնջում էր, «ախ, ինչ մեծ բախտաւորութիւն, երբ իմ հպատակների ամենայետինն ևս ամենօրեայ ճաշին մի-մի տապակած վառեկ ուներ»։

Դումայի բացման ամենահետաքրքիր կէտը գահական ճառն էր, որին անհամբեր սպասում էր ոչ միայն ռուս ժողովուրդը ու

իր պատգամաւորները, այլ բոլոր միւս զգայուն ժողովուրդները, որոնց ներվօգութեան չատ էր նպաստում Ռուսաստանի արիւնյեղութիւնները։ Հնչուեց գահական ճառը, որ արտասանեց ինքը Կայսրը։ Պատգամաւորները պատիւ ունեցան հպատակօրէն լսել —սեպհական ականջներով այս անգամ,—որ Կայսրը չնորհաւորում է իրրև ժողովրդի ներկայացուցիչներ, անուանելով նրանց «լաւագոյն մարդիկ» և հրաւիրում է աջակցել իրեն, ժողովրդի դրութեան ամենաջերմ բարւոքման գործում։

Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց Պետական Խորհրդին և Պետական Դումային ուղղել ողջունի հետևեալ խօսքերը.

«Վերին նախախնամութեամբ Ինձ յանձնուած է հայրենիքի բարեկեցութեան հոգսը։ Այդ հանգամանքը հարկադրեց Ինձ ժողովրդի ընտրողներին հրաւիրել աջակցելու օրէնսդրական խնդիրներում։ Վառ հաւատ տածելով Ռուսաստանի պայծառ ապագային ես ի դէմս ձեզ, ողջանում եմ այն լաւագոյն մարդկանց, որոնց Իմ սիրեցեալ հպատակները Իմ հրամանով ընտրել են։ Ձեր առաջ դրուած է դժուար և բարդ աշխատանք։ Հաւատում եմ, որ հայրենիքի սէրը և ջերմագին ցանկութիւնը ծառայելու հայրենիքին՝ ձեզ կը ոգևորէ, և կը միացնէ, իսկ Ես անխախտ կը պահպանեմ այն օրէնքները, որ Ես շնորհել եմ, հաստատապէս համոզուած լինելով, որ դուք ձեր բոլոր ոյժերը անձնուիրութեամբ կը նուիրէք հայրենիքի ծառայութեան և կը պարզէք Իմ սրտին այնքան մօտիկ գիւղացիական պէտքերը, ժողովրդի լուսաւորութեան և բարեկեցութեան հարցերը, յիշելով որ պետութեան հոգեկան վեհութեան և բարեկեցութեան համար անհրաժեշտ է ոչ թէ միայն ազատութիւն, այլև անհրաժեշտ է կարգ ու կանոն, հիմնուած իրաւունքի վրայ։ Թող կատարուին Իմ ջերմագին ցանկութիւնները՝ տեսնել որդուս որպէս ժառանգութիւն ուժեղ, բարկեցիկ և լուսաւոր մի պետութիւն։ Թող Աստուած օրհնէ այն աշխատանքները, որ Ես Պետական Խորհրդի և Պետական Դումայի հետ միասին կատարելու եմ և թող այս օրուայ օրը նշանաւոր լինի, որպէս օր Ռուսական Երկրի բարոյական վերանորոգման, օր վերածնութեան նրա լաւագոյն ոյժերի։ Երկիւղածութեամբ ձեռնարկեցէք աշխատանքին, որի համար Ես ձեզ հրաւիրեցի և արժանաւոր կերպով արդարացրէք Աստուած ձեզ օգնական»։ Թագաւորական ողջոյնին հետևեց միահամուռ, երկար տևող, ուժեղ «ուռա»։ Պրէօբրաժենսկի գնդի զինուորական երաժշտախումբը մի քանի անգամ կրկնեց ժողովրդական հիմնը։

Վերջացաւ ճառը։ Դուման յայտարարուեց բացուած։ Կայսրը գնաց աղօթելու, պատգամաւորները դարձան ի գործ. Ժողովրդի կենդանի աղմուկն «ամնիստիա», «ազատութիւն» գոչելը ուղեկցում էին նրանց ամենուրեք։ Նոյն օրը, ժամը 5-ին կէսօրից յետոյ, ստատս-սեկրետար Ֆրիշը, ըստ կայսերական հրամանի բացեց նիստը, ապա Դումայի գրաղմունքները դեկավարելու համար միաձայն նախագահ ընտրուեց Մուրոմցև, Մոսկուայի համալսարանի մի նախկին պրոֆէսօր, որի ազատամտական տեսչերը տիրապետող հովերին չեղթարկուելով պատճառ դարձան նրան ասպարէզից հեռանալ դեռ Ալեք. 2 ի օրով։

Առաջին նիստում լսուեց շնորհունակ Պեսարունկևիչի ճառը, որ ուժգին բաւատարութիւններով շեշտեց Ամնիստիայի անհրաժեշտութիւնը։ Քանի որ բանտերը լիքն են ազատութեան զինուորներով, անհնարին է մեզ այստեղ պարապել, կրկնում էր նա. «Ազատ Ռուսիան բոլոր նեղեալների ազատութիւնն է պահանջում։ Եւ դահլիճը դղրդում էր երկար ծափահարութեամբ։

Միւս ժողովում ընտրուեց մի մասնաժողով գահական ճառի ուղերձ-պատասխան գրելու։ Այդ ուղերձը, որ պարունակում է իւր մէջ անհրաժեշտ բարենորոգումների, տիրող արհաւիրքների մի խոշոր գումար, դարձաւ հետեւալ նիստերի քննութեան առարկան և տեղի ունեցան մի շարք գեղեցիկ ճառեր։ Շերենևիչ (Կազանի պատգ.) բարուրք է համարում ամնիստիան դրական պահանջ չը դարձնել։ «Ամնիստիայի» հարցի անյապաղ լուծումը սպառնում է «կոնֆլիկտ» առաջացնել։

«Ինչ կը լինի մեր դրութիւնը, եթէ բոլորովին չը պատասխանեն ոչ նրան և ոչ միւսին կամ թէ բացասական պատասխան ստացուի։ Այնուհետև մենք ինչ կարող ենք ասել, մինչդեռ այնքան բան պէտք է ասել։ Միմիայն ամնիստիայի համար հո չէ մեզ ուղարկել այստեղ ժողովուրդը։ Ապա ուրեմն, կոնֆլիկտը անխուսափելի է, սակայն նա ցանկալի է արդեօք այդ հողի վրայ։ Ժողովուրդը, մեզ Դուման ուղարկելով, պահանջում էր մեզանից, որ մենք տանք նրան հող և ազատութիւն։ Կարող է արդեօք Դուման ցրուել, առանց կատարելու ժողովրդի այդ հիմնական պահանջները։ Ամնիստիան դեռ ևս բոլորը չէ, և եթէ մենք միայն այն ձեռք բերենք, մեր ընտրողները գժգոհ կը մնան։ Չը պէտք է թագցնել, որ մենք և կառավարութիւնը, ուղղակի երկու իրար թշնամի կողմեր են։ Պատերազմը կարող է սկսուել ամեն մի րոպէ, և բնական է, որ իւրաքանչիւր կողմը աշխատում է ամենաշահաւէտ վայրկեանը ընտրել կռուի համար, իսկ կառավարութեան համար, գուցէ այժմ աւելի յար-

մար է ստիպելու մեզ ընդունելու կոիւը հէնց այժմ։ Կրկնում եմ, մենք կօնֆլիկտից չենք վախենում և նրանից չենք էլ խուսափելու, բայց մենք պէտք է նախ և առաջ համոզուենք, որ ամբողջ ժողովուրդը անպայման մեզ հետ է և մեզ չի պարտաւի, որ ամենաոչխարն է. Այժմ մենք վտանգում ենք ժողովրդի ամենաթանգագին բարիքը, իսկ յետոյ մենք արդէն վտանգելու ենք միայն մեզ։ Մեզ համար անհրաժեշտ է, որ կանգ առնենք մեր երեկուայ որոշման վրայ։ Զը դնենք հարցը սուր կերպով, որպէս զի ժողովուրդը միշտ մեր կողմը լինի»։

Նոյն կարծիքին է և մանաւանդ կոմս Վէյյէնը։

Ամնիստիայի կողմնակիցները նկարագրելով երկրի սարսափելի դրութիւնը, տիրապետող ոտնձգութիւնները, պնդում են նեղման անհրաժեշտութիւնը։ Ընդունում է ամնիստիան, ապա անցնում են հերթական հարցին։ Խօսում է կոմս Պոտոցկին, չեշտելով, թէ հողերը ստիպողաբար դրաւելու ժամանակ պէտք է ի նկատի առնել այն ջանքը, որ թափել են սեպհականատէրերը կալուածքը չենայնելու նպատակով։ Պոտոցկու ճառը Դուման ընդունեց զերեզմանային լռութեամբ։ Խօսուեց և կնոջ իրաւունքների մասին, և մահուան պատժի դէմ, և բանուորների մասին, և քառանդամ բանաձևի մասին, «որի համար փողոցներում և բարբիկադների վրայ հազարաւոր մարդիկ են նահատակուել» և շատ այլ կարևոր խնդիրների մասին։ Հետաքրքիր է Վիտտէի ճառը Պետական խորհրդի նիստում, ուր նա ամփոփում է Դումայի այս մի չարք ճառերը ու քննադատութեան ենթարկում։

Ի վերջոյ Դումայում քննւում է ուղերձը մատուցանելու ձևը որ և վճռւում է առանձին պատգամաւորութեան միջոցով ներկայացնել։ Բայց. Դումային բարձրից պատասխանում են, որ ուղերձը պէտք է ներկայացնել պալատի մինիստրի միջոցով, այսինքն «ամենահպատակ զեկուցման» ընդունուած ձևով։ Եւ Դուման հենց առաջին քայլից դժուարութիւնների է հանդիպում։ Սակայն դա չէ յուսահատեցնում գործի մարդկանց և ահա նոցից ճառում է Կովալևսկին։

«Այդ կողմից մենք դեռ պրակտիկ չունենք, և կը մատուցուի արդեօք մեր ուղերձը այն ձևով, որ մենք որոշել ենք, թէ նա կը տրուի ուրիշ ձևով, այդ մեզ համար միևնոյնը պիտի լինի, և երկրի գործի համար — մեր հայրենիքի շահերի համար դա ոչինչ փաստ չէ ներկայացնում։ Կայսրը մեզ լաւագոյն մարդիկ անուանեց։ Ոչ թէ միայն լաւագոյն, այլ առհասարակ կարգին մարդիկ միշտ պիտի ճշմարիտը խօսեն։ Մենք անկեղծօրէն և ճշմարիտ ձևով ասացինք Թագաւորին այն

բոլորը, ինչ որ անհրաժեշտ է հայրենիքում խաղաղութիւն, հանգստութիւն և բարեկեցութիւն հաստատելու համար: Մենք այդ բոլորը արինք որպէս կարգին մարդիկ,— եթէ ոչ որպէս լաւագոյն մարդիկ,— խուսափելով ամեն տեսակ չողոքորթութիւնից և, հաւանականաբար, թագաւորը միայն այդ էր սպասում այնպիսի խորհրդականներից, որպիսիքը մենք ենք: Կարծում եմ, որ ուղերձը ստանալու այն ձևը, որը նա ընտրել է, պարունակում իր մէջ ոչ մի ուղղակի կամ անուղղակի վիրաւորանք մեր գործունէութեան վերաբերմամբ: Թագաւորն ստացաւ մեզանից այն, ինչ որ սպասում էր. անկեղծ, ազնիւ մի խորհուրդ, թէ ինչպէս կարելի է մեր հայրենիքին ներքին խաղաղութիւն վերադարձնել: Մենք մեր պարտքը կատարեցինք և ես չը գիտեմ, թէ ինչը կարող է մեզ խանգարել անցնել ուղղակի հերթական գործերին:

Գահական ճառի պատասխանը.—

«Ձերդ Կայսերական Մեծութիւն. Ձերդ Մեծութեան հաճելի եղաւ ժողովրդի ներկայացուցիչների ուղղած Ձեր ճառի մէջ յայտնել, որ Դուք վճռել էք անխախտ պահել այն կարգադրութիւնները, որոնցով ժողովուրդը կոչւում է, միացած իր Միապետի հետ, ստանձնել օրէնսդրական իշխանութիւնը: Միապետի կողմից ժողովրդին տուած այս բացարձակ խոստումը՝ Պետական Դուման համարում է մի հաստատուն երաշխիք օրէնսդրական կարգի ապագայ զարգացման համար, որ համապատասխանում է իսկական սահմանադրական սկզբունքներին: Պետական Դուման ամեն ջանք պէտք է գործ դնէ իր կողմից կատարելագործելու ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքները, և կ. մատուցանէ ի հաստատութիւն Ձեր Մեծութեան ժողովրդական ներկայացուցչութեան վերաբերեալ օրէնքը՝ հիմնուած ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ և համաձայն ժողովրդի միահամուռ արտայայտած կամքին: Ձեր Կայսերական Մեծութեան կոչը՝ յօգուտ հայրենիքի աշխատելու միացեալ ոյժերով՝ կենդանի արձագանք տուեց Դումայի բոլոր անդամների սրտում: Ունենալով իր կազմի մէջ բոլոր դասակարգի և Ռուսիայի սահմաններում բնակուող բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներին, Դուման միացած է այն ընդհանուր և ջերմ ձգտումով, որ անհրաժեշտ է վերանորոգել Ռուսաստանը, ստեղծել նրանում մի այնպիսի պետական կարգ, որ հիմնուած լինի բոլոր դասակարգի և բոլոր ազգութիւնների խաղաղ համակեցութեան և քաղաքացիական ազատութեան անսասան հիմքերի վրայ, սակայն Դուման պարտք է համարում յայտնել, որ այն պայմանները, որոնց մէջ ապրում է մեր երկիրը, անհնարին են դարձնում այն ճշմարիտ արդիւնաւէտ աշխատանքը, որ ձգտում

է վերածնութիւն տալ հայրենիքի լաւագոյն ոյժերին։ Մեր երկիրը եկաւ այն դիտակցութեան, որ մեր պետական ամբողջ կեանքի ժամրոտ կողմը դլխաւորապէս չինովնիկների ինքնիշխանութիւնն է, որոնք անջատում են Ցարը ժողովրդից. նա, բռնուած միասիրտ տենչով, յայտարարեց բարձրաձայն, որ մեր կեանքի վերանորոգումը հնարաւոր է միմիայն ազատութեան, ինքնագործունէութեան և իւր իսկ ժողովրդի՝ օրէնսդրական իշխանութեանը մասնակցելով, նաև կատարողական իշխանութեան վրայ ունենալիք կոնտրոլի հիմունքներով։ Ձերդ Մեծութեան հաճելի էր 1905 թուի հոկտեմբերի 17-ի մանիֆէստում գահի բարձրութիւնից յայտարարել, որ հաստատապէս վճռել էք ռուսական Երկրի բաղդի հետագայ կառուցման գործում հէնց այդ սկզբունքները դնել որպէս հիմք և ամբողջ ռուսական ժողովուրդը այդ լուրն ընդունեց հիացման միահամուռ աղաղակով։ Սակայն ազատութեան առաջին իսկ օրերը մթագնեցին ծանր փորձանքներից, որի պատճառը նրանք էին, ովքեր արգելառիթ եղան ժողովրդին մօտենալ Ցարին և ոտնատակ տալով հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն մանիֆէստի բոլոր հիմքերը՝ ծածկեցին երկիրը առանց դատաստանի կատարած մահուան պատիժների, աւերածութիւնների, գնդակահարութիւնների խայտառակութեամբ և ադմինիստրացիայի այդ գործողութիւնների հետևանքը այն աստիճան խորը ծանրացել է ժողովրդի հոգում, որ մի երկրի խաղաղացումը հնարաւոր չէ մինչև այն ժամանակ մինչև չը պարզուի ժողովրդի համար, որ այլ ևս իշխանութիւնները Ձեր Մեծութեան անունի տակ թագնուելով՝ իրաւունք չունեն բռնութիւններ անել, քանի որ մինիստրները պատասխանատու չեն լինի ժողովրդական ներկայացուցչութեան առաջ և համաձայն սրան չը վերանորոգուի ադմինիստրացիան պետական ծառայութեան բոլոր աստիճաններում։ Թագաւոր, այն ժամանակ միայն մարդկանց ուղեղներում կարող է հաստատուել այն միտքը, որ Միապետը բոլորովին պատասխանատու չէ բոլոր այդ գործողութիւնների մէջ, երբ մինիստրութիւնը պատասխանատու լինի ժողովրդի առաջ. Դումայի մեծամասնութեան հաւատարմութիւնը վայելող մինիստրութիւնը միայն կարող է հաւատ ներշնչել դէպի կառավարութիւնը և այդպիսի պարագայում միայն հնարաւոր է խաղաղ կանոնաւոր աշխատանք Պետական Դումայի համար. բայց ամենից առաջ Ռուսաստանը պէտք է ազատել այն արտակարգ օրէնքների՝ ուժեղացրած և արտակարգ պաշտպանութեան և զինուորական դրութեան ազդեցութիւնից, որի հովանաւորութեան տակ առաւել զարգացել և շարունակում է արտայայտել անպատասխանատու չինովնիկների

ինքնիշխանութիւնը։ Ադմինիստրացիայի պատասխանատուութիւնը ժողովրդի ընտրեալների առաջ հաստատելով հանդերձ՝ Պետական Դումայի արդիւնաւէտ գործունէութեան համար անհրաժեշտ է անցկացնել իսկական ժողովրդական ներկայացուցչութեան հիմնական որոշակի սկզբունքը, որը կայանում է նրանում, թէ Միապետի և ժողովրդի միութիւնը միայն կարող է աղբիւր կոչուել օրէնսդրական իշխանութեան, ուստի և այն պատնէշները, որ կան Բարձրագոյն իշխանութեան և ժողովրդի մէջ՝ պիտի վերացնել։ Չէ կարող գոյութիւն ունենալ նոյնպէս այնպիսի մի ճիւղ օրէնսդրութեան, որ ընդմիշտ փակ լինէր ժողովրդի ներկայացուցիչների քննութեան Միապետի հետ միասին։

Պետական Դուման սեպուհ պարտականութիւն է համարում ժողովրդի անունից յայտնել Ձերդ Կայսերական Մեծութեան, որ ժողովուրդը այն ժամանակ միայն իսկական թափով և ոգևորութեամբ, իրապէս հաւատալով հայրենիքի մօտակայ բարեկեցութեան՝ կարող է կատարել կեանքի վերանորոգման ստեղծագործական աշխատանքը՝ երբ նրա և գահի մէջ չի կանգնիլ Պետական խորհուրդը, որը կազմուած է նշանակովի բարձրաստիճան չինովնիկներից և ազդարնակութեան բարձրագոյն խաւերից ընտրեալներից և երբ ոչ մի առանձին օրէնքով նշանակովի չինովնիկների պատասխանատուութեան սահմանը չի որոշուի նոյնպէս անհատի անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի և մամուլի ազատութեան, միութիւնների, ժողովների և գործադուլների ազատութեան։ Գալով այն համոզմունքին, ու առանց ճշտիւ որոշելու և խստապահանջ անցկացնելու այդ սկզբունքները, որոնց մասին շեշտուած էր հոկտեմբերի 17-ի մանիֆէստի մէջ, հասարակական յարաբերութիւնների ոչ մի բարենորոգում իրագործելի չէ, Պետական Դուման անդրդուելի կերպով համոզուած է, որ ոչ ազատութիւնը, ոչ էլ իրաւունքի վրայ հիմնուած կարգը չեն կարող հաստատուն համարուել, երբ կայուն չէ այն ընդհանուր սկզբունքը, որ բոլոր քաղաքացիներ առանց բացառութեան հաւասար են օրէնքի առաջ. այդ պատճառով Պետական Դուման կը մշակէ օրէնք, որի հիման վրայ բոլոր քաղաքացիք կօգտուեն հաւասար իրաւունքներով և առանց սահմանափակումների կը վերացուեն բոլոր այն արտօնութիւնները, որոնք առնչութիւն ունեն այս ինչ դասակարգին, ազգութեան կամ կրօնին պատկանելուն։ Զգուշանալով երկիրն ազատել նրան բռնադատող կապանքներից և ադմինիստրական խնամակալութիւններից, վերապահելով, որ քաղաքացիների ազատութիւնը սահմանափակելու

իրաւունք ունենայ միմիայն անկախ դատաստանական իշխանութիւնը՝ Պետական Դուման այնուամենայնիւ անթոյլատրելի է համարում մահուան պատժի գործադրութիւնը նոյն իսկ հէնց այդ դատաստանական վճռով։ Մահուան պատիժը երբէք և ոչ մի պարագայում չը պէտք է ընդուներ Պետական Դուման իրաւացի է համարում ազդարարել, որ նա ամբողջ ազգաբնակութեան միահամուռ ձգտման արտայայտիչ կը լինի այն օրը, երբ գործադրութեան մէջ կը մտնի մահուան պատժի վերացնելու օրէնքը։ Գիւղացիական կարիքների պարզաբանութիւնը և համապատասխան օրէնսդրական միջոցների ընդունելը՝ պէտք է կազմէ Պետական Դումայի ամենամօտ խնդիրներից մէկը։ Երկրի ազգաբնակութեան ամենախոշոր մասը, աշխատաւոր գիւղացիութիւնը անհամբեր սպասում է, որ բաւարարութիւն տրուի իր կողմից սպասուող հողի մեծ կարիքին։ Եւ ռուսական առաջին Պետական Դուման կատարած չէր լինի իր պարտականութիւնը, եթէ չը հրատարակէր օրէնք բաւարարութիւն տալու այդ կենսական պահանջին. այն է՝ պետական ուղելնի, արքունական, վանական, կալուածատիրական բոլոր հողերը յատկացնելու այդ զգացուող կարիքը լրացնելու գործին։ Պետական Դուման անհրաժեշտ է համարում նոյնպէս մշակել օրէնքներ, որոնց հիման վրայ գիւղացիները հնարաւորութիւն ունենան օգնելու վերացնել նրանց վրայից կամայականութեան և խնամակալութեան լուծը։ Պետական Դուման նոյնքան անյետաձգելի է համարում և բանուոր դասակարգին բաւականութիւն տալը. առաջին քայլն այդ ուղղութեամբ այն կլինի, որ վարձու բանուորների նիւթական և հոգեկան բարեկեցութիւնը բարձրացնելու համար ապահովեն կազմակերպուելու և ինքնագործունէութեան ազատութիւն աշխատանքի բոլոր ճիւղերում։ Պետական Դուման պարտք է համարում նոյնպէս գործ դնել բոլոր ջանքերը ժողովրդի լուսաւորութեան մակերևոյթը բարձրացնելու և ամենից առաջ հոգալու ընդհանուր ընտրողական իրաւունքի մասին։ Պետական Դուման անյետաձգելի հարցերից մէկն է համարում նաև, որ անհրաժեշտ է լուծում տալ առանձին առանձին ազգերի հասունացած պահանջներին։ Ռուսաստանը մի պետութիւն է, ուր ապրում են բազմազան ցեղեր ու ժողովրդներ. այդ բոլոր ցեղերի հոգեկան լիացումը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ նրանց իւրաքանչիւրի պահանջներին բաւարարութիւն կը տրուի։ Պահպանելով և զարգացնելով այդ ցեղերի կենցաղի առանձնայատկութիւնները՝ Դուման հոգս կը տանէ առատօրէն բաւարարութիւն տալ արդարացի պահանջներին։ Ձերդ Մեծութիւն,

մեր իրաքանչիւր աշխատանքի նախադռնում կանգնած է մի հորց, որ ազմկում է ամբողջ ժողովրդի հոգին, նա ազմկում է և մեզ ժողովրդի ընտրեալներիս և զրկում մեզ հնարաւորութիւնից խաղաղ կերպով սկսելու մեր օրէնսդրական գործունէութեան առաջին քայլերը։ Առաջին խօսքը, որ հնչեց Դումայի դահլիճում, «ներում» խօսքն էր, որ արժանացաւ համակրական բացականչութիւնների։ Երկիրը ծարաւ է լիակատար քաղաքական ներման. նա ժողովրդական խղճի պահանջն է, որը չէ կարելի մերժել և որի չիրագործելը չէ կարելի ուշացնել։ Թագաւոր, Դուման Ձեզանից սպասում է լիակատար քաղաքական ներում որպէս առաջին առհաւատչեայ միմեանց հասկանալու և փոխադարձ համաձայնութեան՝ Ցարի և ժողովրդի մէջ»։

Վերջին ժամ ստացուած տեղեկութիւններից երևում է որ Դումայի ուղերձի այս պատասխանը հիմնովին մերժուած է։

Դումային կից բացուեց և Պետական խորհուրդ, ուր տեղ ստացաւ և Վիտտէն, Պետ. խորհուրդը ընդունելով ամնիստիան, սկզբում կարևոր էր համարում Դումայի հետ ձեռք ձեռքի գործել, սակայն այդ կարող էր անախորժութիւններ առաջ բերել... և նա մնում է նախկին դիրքում...

Պետական Դումայի բացման նախընթաց օրը հրատարակուեցան 82 յօդուածից բաղկացած հիմնական օրէնքներ, որոնց փոփոխելը թոյլ չի տրուում Պետական դումային։ Այդ հիմնական օրէնքները հրատարակուեցին այն օրից յետոյ, երբ ոչ մի օրէնք առանց ժողովրդի ներկայացուցիչների հաւանութեան չէր կարող ոյժ ստանալ։

ՀՐԱՄԱՆ

Խմբագրութիւնս ապրիլի 26-ին ստացաւ Թիֆլիսի II մասի ոստիկանական պրիստաւից հետևեալ պաշտօնական գրութիւնը № 225.

«Հայկական «Լումայ» ամսագրի պ. խմբագրին.

Թիֆլիսի և Թիֆլիսի դաւառի ժամանակաւոր գեներալ նահանգապետի հրամանով խնդրում եմ Ձեզ, մեծապատիւ տէր, չտպագրել Ձեր ամսագրում որևէ տեղեկութիւն Շուշում, Գօրիսում և առհասարակ այլ տեղերում կատարուած թուրք-հայկական ընդհարումների մասին, մինչև որ այդ տեղեկութիւնները ստուգուած չլինին պաշտօնական կերպով և թոյլ տրուած պ. գեն. նահանգապետի կողմից»։

ՑԷՆԶՈՒՐԱՅԻ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Պետական խորհրդին տուած բարձրագոյն ուկազով հրամայուած է

I. Վերացնել նախնական ցէնզուրան կայսրութեան մէջ դուրս եկող ինչպէս ընդհանուր, նոյնպէս և հոգևոր, ոչ պարբերական հրատարակութիւնների, նաև դոցա մէջ զետեղուած և առանձին թերթերով հրատարակուող էսսամպների, նկարների և այլ պատկերների։

II. Ս. Պ. Բուրգի, Մոսկուայի, Վարշաւայի, Թիֆլիսի գրաքննական կոմիտէները անուանել մամուլի գործերի կոմիտէներ։

III. ա. գրաքնն. կոմիտէի ցէնզորներին անուանել մամուլի գործերի կոմիտէի անդամներ և բ. առանձին գրաքննիչներին՝ մամուլի գործերի վերահսկիչներ։

IV. ցենզուրայի և մամուլի օրէնսդրութեան յօդուածները փոփոխել և լրացնել հետևեալ կանոններով.

1. Հինգ տպագրական թերթից մեծ ծաւալ ունեցող ոչ պարբերական հրատարակութիւնները՝ բացի օրէնքով որոշուածը (ценз. уст. ст. 167), տպարանից դուրս տալու հետ միասին տպարանի տիրոջ կամ նրա կառավարչի միջոցով ներկայացնում է տեղական մամուլի գործերի կոմիտէին կամ վերահսկիչին, օրէնքով որոշած օրինակների թուով։ Այդ օրինակները ստանալու ժամանակ տրւում է ստացական, որոշելով ներկայացնելու ճիշտ ժամանակը։

2. Ոչ պարբերական այն հրատարակութիւնները, որոնք մի տպագրական թերթից աւելի ծաւալ չունեն, բացի օրէնքով որոշուածները, դուրս են թողնում տպարանից մի թերթից ոչ աւելի ծաւալ ունեցող հրատարակութիւնները ոչ առաջ քան երկու օր, իսկ մի թերթից աւելին մինչև հինգ թերթ ծաւալ ունեցող հրատարակութիւնները—ոչ-առաջ քան եօթ օր՝ տպարանի տիրոջ կամ կառավարչի միջոցով տեղական մամուլի գործերի կոմիտէին կամ վերատեսչին օրէնքով որոշած օրինակների թուի ներկայացնելու ժամանակից։

3. Մամուլի գործերի տեղական կոմիտէը կամ վերահսկիչը կարող է արգելել հրատարակութեան բոլոր օրինակները, երբ այդ հրատարակութեան մէջ պարունակւում են քրէական օրէնքներով նախատեսած յանցաւոր գործունէութեան նշաններ, բացի այն յանցաւոր գործունէութիւնից, որ պատժւում են մասնաւոր մեղադրման ձևով, կամ միայն գանգատուելու, մեղադրելու ու վնասուած կողմի յայտարարութեան դէպքում։

4. Հրատարակութեան համար նշանակած ոչ պարբերական հրատարակութեան առանձին օրինակների վրայ դրուած արգելքը կոյանում է նոցա օրինակների ձերբակալութեան մէջ, բացի այն օրինակներից, որոնք արդէն դարձել են երրորդ անձանց սեպհականութիւն՝ նոցա սեպհական գործածութեան համար։ Այդ դէպքերում արգելք է դրւում նաև տպագրական մամուլի ստերէօտիպների և ուրիշ պարագաների վրայ, որոնք պատրաստուած են եղել արգելուած հրատարակութեան համար, եթէ տպարանի տէրերը կամ կառավարիչները ցանկանան պահել դոցա մինչև դատավճռի որոշումը։

5. Արգելք դնելու համար մամուլի գործերի կոմիտէտը կամ վերահսկիչը միաժամանակ պիտի յանձնի ոչ պարբերական հրատարակութեան արգելքի հարցը դատական որոշման վճռին և համապատասխան դէպքերում մեղաւորների դէմ քրէական դատ սկսէ։

6. Քրէական դատ բանալու հիմքերի բացակայութեան դէպքում՝ դատարանը, եթէ նրա քննութեան դրած՝ հինգ տպագրական թերթից ոչ աւելի ծաւալով՝ հրատարակութեան մէջ պարունակում են յանցաւոր գործունէութեան նշաններ, որոշում է այդ հրատարակութիւնը կամ նրա մի մասը ոչնչացնել, նոյնպէս և ստերէօտիպները և տպագրութեան մամուլի այն պարագաները, որոնք պատրաստուած են եղել այդ հրատարակութեան տպագրութեան համար։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա.

Հ. խմբագիր «Լումայ» ամսագրի

Ներփակեալ նամակը, որ ուղղել եմ նաև «Ալիք»-ի խմբագրութեան ուղարկելով խմբագրութեանդ՝ խնդրեմ հրատարակէք Ձեր ամսագրի էջերում։

Ընդունեցէք և այլն ինժեներ Նիկողայոս Գրիգորեան

«Մշակ» և «Ալիք» լրագիրների վերջին համարներում մի քանի նկատողութիւն կար տպուած Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածնի եկեղեցում կատարուած ընտրութիւնների մասին և զանազան անվայել ակնարկներ իմ հասցէին, ուր ինձ տուած էր «անարգնիւ» և այլ ածականներ։

Նախ և առաջ ես չեմ հասկանում, թէ ինչումն է կայա-

նում իմ անաղնիւ վարմունքը ընտրութեան գործում. ծխական ժողովը որոշում է, որ անգրագէտ ծխականների համար, սոցա ազատ ցուցմունքով, կարող են գրել գրագէտ ծխականները. եթէ նրանումն է կայանում իմ անաղնուութիւնը, որ ես ես այդ որոշման համեմատ այդպիսի անգրագէտ ծխականի համար, նորա ազատ թելադրութեամբ, գրել եմ նաև իմ անունը (իսկ անգրագէտների ցանկութիւնը վաղօրօք ես գուշակել անկարող էի), ուրեմն Դուք աչքի առաջ ունիք ոչ թէ մարդու ազնիւ կամ անազնիւ վարմունքը, այլ նորա դաւանած գաղափարները և կուում էք այդ գաղափարների դէմ, այն ժամանակ խնդրեմ կոուեցէք ազնիւ զէնքով։

Իրրև ապացոյց, որ Դուք անուանարկում էք ինձ ոչ թէ իմ անազնիւ վարմունքի, այլ միմիայն հակառակ համոզումներ ունենալուս համար, պէտք է առաջ բերեմ շատերից մի հետաքրքրական փաստ. Ձեր կուսակիցներից մէկին դիմելով անգրագէտ ծխականներից մէկը՝ խնդրում է գրել այս և այն անունները, իսկ այդ Ձեր կուսակիցը, հակառակ անգրագէտի թելադրութեան, գրում է իւր և իւր ցանկացած մարդկանց անունները, այս հանգամանքի մասին ինքը թելադրողը բողոքում է ժողովին հրապարակով և խնդրում է ջնջել այդ անճիշտ թելադրած անունները. բայց ոչ ջնջւում է և ոչ այդ մասին գրւում յիշեալ լրագիրների էջերում։

Երկրորդ՝ ես ոչ մի օժանդակ միջոցով չէի եկել ծխական ժողով. մինչդեռ Ձեր կուսակցութիւնից հաւաքուել էին ճնշում գործ դնելու ժողովի վերայ 60 ժողովականից աւելի ոչ-ծխական անձինք՝ տղաներ, աշակերտներ, հասակաւորներ, քահանաներ, դպիրներ էն։ Ասացէք խնդրեմ, իմ կողմից ինքեր կային մասնաւոր անձինք։

Ճիշտ է, թեմիս ս. առաջնորդը քանդել էր ընտրութիւնը, բայց ոչ թէ հիմնուելով 20 թէ 38 բողոքողների թղթի հիման վերայ (զարմանում ենք. եթէ 38 բողոքող կար մի ընտրութեան դէմ, հապա ինչու այդ մեծամասն քուէներով չընտրուեցան ձեր կանդիտատները), այլ այն պատճառով, որ «ժողովին մասնակցել էին մեր ծխական քահանաները, որոնք ուրիշ եկեղեցիների ծուխ են եղել», դէթ այսպէս է ասուած սրբազանի պաշտօնական թղթի մէջ։

Հետաքրքրական մի հարց.—եթէ ճշմարիտ դուք գաղափարի համար էք կուում և ոչ թէ անձնական հաշիւների, հապա ինչու չբողոքեցիք Ա. Քալանթարի ընտրութեան դէմ,

որ ընտրուեց նոյն ըստ ձեր «ապօրինի» ժողովում։ *)

Ինչ վերաբերում է իմ կառուցած դպրոցի խնդրին, թէ-պէտև այդ մասին շատ է գրուել «Մշակ»ում 10—15 տարի առաջ, պարզուել է այդ հարցը և այդ հիման վերայ Հայրապետական կոնդակով անուանուում է «Գրիգորեան», բայց որովհետև երևի նոր սերունդը անծանօթ է հին թերթում գրուածներին, ուստի և աւելորդ չեմ համարում համառօտ կերպով առաջ բերել այդ ուսումնարանի պատմութիւնը.

Հանգ. Մ. Միրզայեանցը շինել էր մեր եկեղեցու հարաւային կողմը իմ կառուցած դպրոցի տեղում մի կարգ խանութներ նկուղով և պարագաների մնացորդից շինել էր հին դպրոցի համար պատշգամբ և առաջին երեսի մի նեղ պատ, իսկ մնացեալ երեք պատը պատկանում էր հարևան տներին։ Խանութները կառուցանում է այն պայմանով, որ որոշ տարիների ընթացքում եկամուտը ինքը ստանայ և յետոյ նուիրում է եկեղեցուն։ (Տես կոնսիստորիայի գործերը)։ Եւ իբրև վարձատրութիւն, ինքն ու իւր կինը թաղուեցան եկեղեցու բակում և շինուեցաւ մատուռ։ Ինձ յայտնի չէ թէ որքա՞ն է ծախսել և ինչքան եկամուտ է ստացել Միրզոյեանցը, սակայն գիտեմ որ շինուածքը լինելով աւազի վերայ կառուցած և խարխուլ՝ յանկարծ փուլ եկաւ 1890 թուին։

Ծխական դպրոցի հոգաբարձութիւնը, որի մի անդամն էլ ես էի, վարպետ Մալխասի սիջոցով դիմեց այրի Միրզոյեանցին և խնդրեց որ նա ի յիշատակ իւր ամուսնու վերանորոգէ շինուածքը. սակայն տիկինը միանգամայն մերժեց։— Դպրոցը փակման վտանգի մէջ էր և ես ուրիշ ելք չգտնելով՝ մտածեցի ինքս օգնութեան հասնել. դիմեցի հոգևոր իշխանութեան և առաջարկեցի թոյլ տալ ինձ շինել նոր երեք յարկանի շինութիւն դպրոցի համար, որև թոյլատրուեց ինձ և ես իմ սեպհական ծախսով, որի մանրամասն հաշիւը ինքնայօժար կամքով ներ-

---

*) Էդ դրանց փեշակն է, պ. Գրիգորեան. այ օրինակ. Մշակը, մի ոմն Շահրիարի բերանով, (որ կարծեմ դու անվճար պարտը պիտի ունենայ խմբագրութեանս) գովաբանելով Ներսիսեան դպրոցի այժմեան Հոգաբարձուներին՝ նորա քա՛նանայ հոգաբարձուներին համարում է ժողովրդականութիւն չունեցող մարդիկ. բայց երբ «նշանաւոր ժողովրդական դէմք» Ա. Քալանթարը փառաւորապէս սնացաւ Ձեր եկեղեցու մի քանի ընտրութիւններին, չնայելով այդքան աշխատանք գործ դնելուն, և աւելի ևս փառաւոր սնացաւ Պետական Դումայի ընտրութիւններին, այդ իրողութիւնների մասին «Մշակը» խոհեմ լռութիւն պահպանեց։ ԽՄԲ.

կայացրել եմ կոնսիստորիային և պաշտօնական «Արարատ»-ի խմբագրութեան և հրատարակել «Նոր-Դար» լրագրում, կառուցի այն մեծ շինութիւնը, որի երրորդ յարկում գետեղուած է ուսումնարանը, իսկ ներքևի կրպակների և նկուղի եկամուտը ապահովում է ուսումնարանը։

1894-ին, երբ շինութիւնը պատրաստ էր և Վեհից կոնդակ էր սպասւում, տ. Միրզոյեանցը «Մշակ» լրագրով և կոնսիստորին տուած թղթով բողոքեց, թէ դպրոցը պիտի կոչուի Միրզոյեան։ Թեմի նախկին առաջնորդ ս. Սուրէնեանցի ներկայութեամբ ես յայտնեցի տիկնոջ կոնսիստորի ատենում, որ թէպէտ և իմ պայմանն արդէն ընդունուած է և շինութիւնը կառուցուած, այնուամենայնիւ պատրաստ եմ իմ շինութիւնը յանձնել նորան պայմանով, որ նա վերադարձնէ իմ ծախսերը և դպրոցը թող կոչուի նորա ամուսնու անունով։ Բայց տիկինը կրկին անգամ մերժեց և այնուհետև միայն առաջնորդը միջնորդեց Վեհին, որ կոնդակ շնորհէ ինձ. Հայրապետը դպրոցն անուանեց «Գրիգորեան» և ինձ կարգեց խնամակալ դպրոցի։

Ընթերցողը տեսաւ, որ ես ոչ եկեղեցուց բան եմ խլել և ոչ հանգ. Մ. Միրզոյեանցի դափնիներն եմ ուզեցել յափշտակել, այլ լցուած հայ մանուկների դաստիարակութեան սիրով՝ իմ սեպհականութիւնից հազարներ ծախսելով՝ նոցա համար կըրթութեան տաճար եմ կառուցել։

Խնդրում եմ «Մշակ» լրագրի խմբագրութեան արտատպել իմ այս բացատրութիւնը։

Ինժեներ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Բ.

«Լումա»-ի մարտի ամսագրում հրատարակուած «Մամիկոնեան տոհմը Հայոց պատմութեան մէջ» վերնագրով ուշադրութեան արժանի յօդուածում մի սխալ է սպրդել, որ ըստ իս կարևոր է ուղղել։ Երես 42 գրուած է «Գրիգոր Մամիկոնեան Արագածի արևմտեան ստորոտում Հառիճ աւանում փառաւոր եկեղեցի է շինում»։ Հառիճը գտնւում է Արագածի հիւսիսային ստորոտում. իսկ արևմտեան ստորոտում, ոչ Հառիճ, այլ Արուճ աւանն է, ուր գտնւում է Գրիգոր Մամիկոնեանի շինած փառաւոր, անսիւն և չատ մեծ եկեղեցին, որի կաթուղիկէն թէև խոնարհած է, բայց որմերը իրանց արձանագրութիւններով այժմ էլ կան կանգուն։

Մինաս ա. քահ. Տէր-Պետրոսեան

1906 10 մայիսի Կարս։

Գ.

«Լումայ» ամսագրի... Հ. խմբագրին

Իմ «Մկա վախ չունիմ» գրքոյկի վաճառքից մինչև օրս ստացել եմ արդիւնք ընդամենը 10 ռուբլի *), որպիսի չնչին գումարը ընդ սմին յղելով Ձեզ, խնդրում եմ յանձնել այն Վեհ. Կաթողիկոսից հաստատուած յանձնաժողովին՝ հայ արկածեալների օգտին գործադրելու համար։

Աստուածատուր Բէգ-Յովսէփեանց

4 մայիսի 1906 Կարս.

—Յիշեալ գումարը ստացանք մայիսի 7-ին և նոյն օրը յանձնեցինք Թեմիս ս. Առաջնորդին։ ԽՄԲ.

Դ.

Թիֆլիսի շրջանում կատար ուելիք հոգաբարձական ընտրութիւնները բաւական հետաքրքրական էին, առանձնապէս Կուկիոյ Նորաշէն Ս. Աստուածածնի եկեղեցում, ուր տեղի ունեցաւ երեք նիստ։ Այստեղ ծխականների մեծ մասը անգրագէտ ու վիրաւոր են, որ և մեծ դժուարութիւններ յարուցանելու լաւ պատճառներ են։ Առաջին ընտրութիւնները բեկուեցին, իսկ երկրորդ նիստը կրկնակի աղմկալից ու խառը լինելով համարուեց հենց իրենց ժողովրդականների կողմից—անվաւեր, նշանակուելով մի երրորդ նիստ, որ և համարուեց երկրորդ նիստի շարունակութիւնը։

Տարօրինակ էր այս ընտրողական նիստը։ Ժողովը անգրագէտ ծխականների կամքը չը հարցնելով, ուշադրութեան առաւ ոչ-ծխականների ճառերը ու վճռեց ընտրութիւնը կատարել քուէտուփերով, մի ձև, որ շատ լաւ լինելով հանդերձ, անծանօթ էր անգրագէտ ԲՈԼՈՐ ծխականներին. կային ընտրողներ, որ բոլոր թեկնածուներին սպիտակ քուէ էին տալիս։ Տգեղ էր և այն, որ թեկնածուների քուէտուփերը շարուած էին (որոշ նպատակով) ոչ այբբենական կարգով, և ոչ ձայների առաւելութեան կարգով, այլ ըստ տրամադրութեան նախագահ պ. Ա. Բալանթարի։

Տգեղ երևոյթ է և ագիտացիայի այն ձևը, որ կատարուում էր այդ տեղ Ագիտացիան 20-ը որդ դարում դեռ ևս անգնահատելի միջոց չի համարուում, սակայն ագիտացիան պէտք է կատարել նախ քան ընտրութիւնները։ Այնպէս որ բաւական անշնորհք

*) Բացի անցեալ անգամ ուղարկածս 20 ռուբլուց։

բան էր, երբ քահանաներից մէկը խօսք խնդրելով, ոտի է կանգնում ու գոչում-ինձ հարցնում են, որ առաջարկում ես, ով է Քալանթարը։ «Ա՛յ սա է»։ Կարծում սա նոյն իսկ Թեկնածու Քալանթարին անգամ անհաճոյ դրութեան մէջ պէտք է դնէր։

Կային, այո՛ կային շատ բացասական կողմեր։ Հազիւ թէ այդպիսի ընտրութիւն վաւեր համարուի...

Սպասում ենք աչալուրջ ծխականների բողոքին և ս. Առաջնորդի ուշադրութեան։

ԱԿԱՆԱՏԵՍ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հայ-Թիւրքական յարաբերութիւնները, չնայելով զանազան խաղաղարար մատնածողովների ջանքերին, գրեթէ նոյնն է մնում և սպառնում է նորից աւելի մեծ թափով աղմկել Կովկասը։ Վերջին լուրերը Վարանդայից և շրջակայքից յուզիչ են և յուսահատական։ Այս պատճառով Թիֆլիս է եկել Շուշուայ թեմական առաջնորդ սրբ. Աշոտ եպիսկոպոսը և ներկայանալով երկրիս Փոխարքային խնդրել է նորից Շուշի ուղարկել զէն. Գոլոշչապովին իբրև անկողմնակալ մարդու, ապահովել Եալախ-Շուշի և Շուշի-Գորիս տանող ճանապարհները, ապահովել գիւղացիների դաշտային աշխատանքները, յետ դարձնել Վարանդայի գիւղերից առնուած տուգանքները, հայերից զէնքեր չխլել, ինչպէս որ չեն խլում այնտեղի Թուրքերից, դադարեցնել նոյնտեղ կատարուող խուզարկութիւնները, պատժել Վարանդայի սոսկալի դէպքերի յանցագործներին և այլն և այլն։

Փոխարքան խոստացել է բաւարարութիւն տալ սրբազանի բոլոր խնդիրներին և հրամայել զէն. Գոլոշչապովին անմիջապէս ուղևորուել Շուշի։

Չնայելով այս խոստումներին, դրութիւնը այնուամենայնիւ գէթ առ այժմ բարելաւելու յոյս չէ խոստանում. հեռագիրները մէկը միւսի ետևից բերում են աւազակութեանց և աւարառութեան չարագուշակ լուրեր, Խաչէնը ռմբակոծուում է, Եալախ-Շուշի ճանապարհին Թուրքերից գերուած և կողոպտուած են բոլոր հայ ընտանիքները, անհանգիստ է ամբողջ Շուշուայ գաւառը։ Բայց մինչև ե՞րբ պիտի տանջուեն խեղճ և անզէն հայ բնակիչները, հարցնում ենք կառավարութեան

գործակալներին։ Թող պատասխանեն, որոնց վերաբերում է պատասխան տալ այս հարցին։

—Լրագիրներից տեղեկանում ենք, որ Վեհ. Կաթուղիկոսը մի կոնդակ է արձակել, որով հոգևոր պաշտօնատար անձանց ընտրութիւնը յանձնւում է ժողովրդին։ Մանրամասնութիւններ դեռ չկան, ուստի և աւելի մանրամասն մենք կխօսենք այդ մասին յաջորդ համարում։

—Մեզ հաղորդում են, որ Վեհ. Հայրապետը յունիսի 10-ին Թիֆլիս կը ժամանէ և ամառը կանցկացնէ Աբասթումանի հանքային ջրերում։

—Մայիսի 10-ին Թիֆլիսում կայացաւ Պետական Դումայի համար մի ներկայացուցիչ ընտրող 80 պատգամաւորի ընտրութիւն՝ քաղաքիս 9 մասերում։ Ընտրութեանը մասնակցում էին քաղաքական զանազան կուսակցութիւններ. 80 հոգուց՝ 71 հոգի ընտրուեցան սոցիալ դեմոկրատները, իսկ 9 հոգի (միայն 9-դ քաղաքամասում), դեմոկրատ-սահմանադրականներ։ Ընտրութիւններից առաջ սոցիալ-դեմոկրատները պատգամաւորի պաշտօնի համար թեկնածու էին դրել վրացի Նոյ Ժորդանիային, իսկ այժմ, ինչպէս տեղեկանում ենք, մի քանի թեկնածուներ են դրել, որոնց մէջ նաև յայտնի հասարակական գործիչ Արշակ Ս. Բաբեանը, որ ձայների ստուար մեծամասնութեամբ ընտրուած է 8 դ քաղաքամասում որպէս ընտրող պատգամաւոր։

—Առաջիկայ համարում կհրատարակենք մեր աշխատակից պ. Mars-ի մի ընդարձակ տեսութիւն Հայկական հարցի և հայոց յեղափոխական կուսակցութիւնների գործունէութեան վերաբերեալ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ց. Գասպարեանց. Օժանդակիչ ձեռնարկ մայրենի լեզուի հայերէն ուղիղ կարդալ ուսուցանելու. Թիֆլիս 1906, գ. 7 կ.

Բժ. Ա. Բուղուղեանց. Նուէր հայ դպրոցականին. Ս. Պ. Բ. 1906. գ. 10 կ.

Առաքել Նալբանդեան. Առակներ. գրեալ 1900—4. Թիֆլիս 1906 գ. 50 կ.

Տարեւոր տեղեկագիր հանրական ատենին յանձանձանաց հայ ազգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1904 ամի. Նոր Ջուղա 1905.

Կանոնագրութիւն Փարիզի հայկական միութեան. Փարիզ 1906 թ.

АРМ. и АБ. Хачатуръ Абовьянъ. Тифлисъ 1906. *գ. 15 կ.*

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Այս օրերս Փարիզում կազմուել է «Փարիզի Հայկական միութիւն» անունով մի ընկերութիւն, որի տպագրուած կանոնադրութեան մի օրինակ ուղարկուած է մեզ։

«Միութեան» ծրագիրն ու նպատակը խիստ ժամանակակից կարևորութիւն ունին և բաւական մօտ են այն «Հայկազեան քաղաքակրթական միութեան» ծրագրին, որ անցեալները կազմուեց Թիֆլիսում։

Միութեան նպատակն է՝ նպաստել, օրինական միջոցներոր, հայ ազգի բարոյական և նիւթական շահերու պաշտպանման։ Ճանչցնել քաղաքակիրթ աշխարհին՝ Հայութեան անցեալ ու ներկայ կեանքը և մտաւոր գործունէութիւնը։ Տարածել հայ ժողովրդի մէջ արևմտեան քաղաքակրթութիւն։

Այդ նպատակին հասնելու համար «Միութիւնը գործ է դնում հետևեալ միջոցները.

Օգնում է տաղանդ ցոյց տուող հայ ուսանողներին։

Նպաստում է հայ թատրոնի զարգացման։

Օգնում է հայերէն լեզուով գրական, գիտական, պատմական, գեղարուեստական ինքնագիր և թարգմանական գործերի, ինչպէս և օտար լեզուով Հայութիւնը Եւրոպային ճանաչեցնել ձգտող աշխատութեանց հրատարակման։

Կազմակերպում է Փարիզի և Եւրոպական ուրիշ քաղաքների մէջ երեկոյթներ, հանդէսներ և դասախօսութիւններ հայ երաժշտութիւնը, գրականութիւնը և ընդհանրապէս հայ արուեստը և Հայոց անցեալ ու ներկայ պատմութիւնը ճանաչեցնելու համար եւրոպական հրատարակութեանց։—Հրատարակում է գրքեր նոյն նպատակով։

Ջանում է մասնակցել իր ներկայացուցիչների միջոցով՝ գրական, գիտական և այլ միջազգային համաժողովների։

Ազգային մեծ աղէտների և դժբաղդութեանց ժամանակ-

նիւթական և բարոյական օգնութիւն պիտի ջանայ հասցնել հայ արկածեալներին։

Հիմնում է Փարիզի մէջ հայկական մի թանգարան ու հայկական մեծ մատենադարան, ուր պիտի հաւաքուին հայերէն լեզուով երևացող բոլոր լրագիրներ, գրքեր, հին ձեռագրեր, և օտար լեզուներով Հայոց մասին լոյս տեսած բոլոր հրատարակութիւններ։

Աշխատում է հիմնել Փարիզի մէջ գիշերօթիկ միջնակարգ Կոլէժ-վարժապետանոց։

Հիմնում է «Համազգային ֆոնդ» (fonds), որ պիտի պահուի Եւրոպական մի մեծ դրամատան մէջ ըստ որոշման ընդհ. ժողովին։

«Միութիւնը կազմակերպւում է այսպէս».—

Անդամակցում է ամեն հայ ու հայուհի։ Տարեկան անդամավճարն է 10 ֆրանկ (3.75 կ). «մշտական» անդամ լինել ցանկացողը վճարում է միանուագ 250 ֆր. «բարերար անդամը» վճարում է 2500 ֆր.։ «Պատուի անդամ» կոչւում են հայ օտարազգիք, որոնք կարևոր աջակցութիւն են նուիրում ընկ. նիւթական ու բարոյական բարգաւաճման։

Նուէր ընդունում է՝ թէ գումարով և թէ հին ձեռագրեր գեղարուեստ. իրեր, հին դրամներ և այլն և այլն։

Տնօրէն խորհուրդը, որ վարում է ընկ. գործերը, բաղկանում է 7 անդամից, Ատենապետ, փոխ-Ատենապետ, Ատենադպիր, գանձապահ և երեք խորհրդական անդամ։

Առաջին տնօրէն խորհուրդը հիմնադիր ընդհ. ժողովից ընտրուած է հետևեալ կերպով.—պ. պ. Ներսէս խան Ներսէսեան, ատենապետ. Շիրվանզադէ, փոխ-ատենապետ, Համբարձում Մելիքեան, Գանձապահ, Ս. Զօպանեան, ատենադպիր, բժշկապետ Աւետիք Բաբայեան, Յ. Իսկենդեր և Մ. Յովակիմեան։

«Միութիւնը» ունի իւր ընդ. ժողովը, օժանդակ մասնախմբեր ուրիշ հայաբնակ քաղաքների մէջ։

Կ. Պոլսից մեզ գրում են.

«... Ամենէն ցաւալին, վտանգալին ու ահռելին մեր ներքին խռովութիւններն ու երկպառակութիւններն են, որ կործանարար են մեր ազգային գոյութեան։ Զարաբաստիկ վիճակ. Հայ տղայք, Հայ աշակերտք Հայ վարժարանաց կապրս-

տամբին այդ վարժարաններու և նոյն իսկ իրենց անձերու գոյութիւն տուող Հայ կրօնին և Հայ եկեղեցւոյ դէմ։ Այն շատ զարհուրելի է և շատ վտանգաւոր. բայց ես կարծեմ թէ աշակերտք այնչափ յանցաւոր չեն, որչափ նոցա դասատուներն և մի քանի զէվզէկ հոգևորականներն որ ինքզինքնին լուսաւորեալ ցուցանել կուզեն անկրօնութեան աղօտ և աղտոտ լոյսերով... Այդ անլոյս աչքեր չեն տեսներ որ՝ աշխարհի մէջ առաջին համարուող ազգ մը, թագաւորութիւն մը կայ, որ իւր բոլոր զօրութիւնն ու կարողութիւնը իւր Քրիստոնէական կրօնին կը պարտի, հաւատարիմ ծառայութեամբ առ Աստուած և առ ընդհանուր մարդկութիւնն, Անգլիացին է այդ ազգը, որ ջերմեռանդ աստուածպաշտութեամբ իւր դպրոցներն ու վարժարաններն, ճեմարաններն ու համալսարաններն ունի, և կրօնական կրթութեան հետ գիտութեան ամեն ճիւղերու մէջ կը յառաջադիմէ։

Ես այս կողմ ափ մը ժողովուրդ, ցրուած աշխարհի ամեն կողմ, աղքատ ամեն բանով, և աղքատացած վերահաս չարիքներով, օրըստօրէ կը թուլանայ իր հաւատքէն, իր եկեղեցիէն, և Աստուածպաշտութենէն, չեմ գիտեր անոնց տեղը ինչ դնելու յուսով...»։

ՀԵՆՐԻԿ ԻԲՍԷՆ

Մայիսի 10-ին Քրիստինիայից հեռագիրը գուժեց Հենրիկ Իբսէնի մահը։ Ժամանակակից կեանքի ամենախոշոր անուններից մէկն է սա, որ կազմում է ոչ միայն իր հայրենիք Նորվէգիայի փառքը, այլ և նորագոյն գրական աշխարհի զարդը։ Մեծ տաղանդ էր Իբսէն և նրա մահով նատուրալիզմը կոլցնում է իր երեք սիւներից երկրորդը։ Առաջինը՝ Զոլան վախճանուել է դեռ 1902 թուին. իսկ երկրորդը՝ Եասնայա Պոլեանի բնակիչ ծերունի Լ. Տոլստոյ դեռ շարունակում է իր յամառ կռիւը ծերութեան դէմ։

Քրիստինիայից ոչ այնքան հեռու փոքրիկ Սկիէնը այն բախտաւոր քաղաքն է, ուր ծնուել է Հենրիկ Իբսէնը, 1828-ի մարտի 20-ին։ «Իբսէնի բնաւորութեան մէջ Նորվէգական արիւնը անմիջական ներգործութիւն չի ունեցել», նկատում է իրաւացի կերպով Եգէրը, որովհետև Իբսէնի ծագումը Նորվէգական չէր։ Մայրը գերմանուհի էր. իսկ հայրը Դանիայից Նորվէգիա գաղթած մի նաւավարի որդի։

Դեղեցիկ Սկիէնը հիանալի էր փոքրիկ Իբսէնի մանկութեան համար, ուր նա անցնում էր ուրախ ու ապահով կեանք-

իբրև ունևոր ընտանիքի զաւակ։ Այդտեղ նրա ֆանտազիան թևաւորւում էր գեղարուեստական ու բանաստեղծական տեսչերով։ Սակայն այդ անհոգ ու անդորր կեանքը երկար չի տևում։ Վաճառական Կնուդ Իբսէնը սնանկանում է և ենթարկուելով մեծ զրկանքների, ստիպուած է լինում ընտանիքը տեղափոխել մի մօտակայ գիւղ։ Վեց երկար տարիներ գիւղում ապրելով, Իբսէնը ենթարկւում է լուռ կեանքի, դառնում միստիկ ու մարդատեաց։ Նա սիրում է մենակեաց կեանք, առանձնութիւն, ուր փոքրիկ յոռետեսը անցնում է ընթերցանութեամբ, մանաւանդ Նկարելով։

Կնուդ Իբսէնին յաջողւում է վերջապէս փոքր ինչ գործերը կարգի բերել և ընտանիքը նորից քաղաք տեղափոխել, ուր և տասնուչորս ամեայ Իբսէնը յարմարութիւն է ունենում ըէալական դպրոց յաճախել։ Հենց առաջին տարում ուսումնարանի վարչութեան առանձին ուշադրութեանն է արժանանում նա, գրելով երկրային բարիքների ժխտման մի միստիկ շարադրութիւն։ Դժբախտաբար դպրոցում մնում է նա միայն երկու տարի. ապա սեփական գոյութիւնը ապահովելու ստիպմամբ գնում է Գրիմշտատ և ծառայութեան մտնում մի դեղատուն։

Ինչքան էլ անողոք էր ապրուստի խնդիրը, այնուամենայնիւ Իբսէնը ժամանակ էր գտնում մտաւոր զբաղման, միևնոյն ժամանակ գրելով մի շարք բանաստեղծութիւններ, որոնք առանձին յաջողութիւն չունեն։ 1848-ին բռնկուող յեղափոխութիւնը մեծ ոգևորութիւն է առաջ բերում Իբսէնի կեանքում և հենց այդ ազդեցութեան տակ էլ Իբսէնը գրում է իր անդրանիկ դրաման «Կատիլինա», երբ նա պատրաստւում էր և ուսանողական քննութեան։ «Կատիլինան» մերժուեց ներկայացնելու, սակայն նա տպագրուեց և արժանացաւ նպաստաւոր քննադատութեան։

Հինգ տարի ծառայութեան մնալով, 1850-ին գալիս է մայրաքաղաք համալսարանում քննութիւն տալու, որը սակայն յաջողութեամբ չէ պսակւում։ Քրիստինիայում Իբսէնը ծանօթանում է իր մեծ հայրենակից Բ. Բեօրնսօնի հետ, որը ապագայում խոշոր հռչակ ձեռք բերելով քաղաքական կուսակցութեանց պատճառով դառնում է նրա մեծ հակառակորդը։ Քրիստինիայում Իբսէնը մի քանի երիտասարդների ու Բեօրնսօնի հետ հրատարակում է մի թերթ, որ սակայն մի քանի ամիս է միայն գոյութիւն ունենում։ Ապա Իբսէնը կենտրոնանում է իր գրական գործունէութեան մէջ և շուտով հրատարակում է «Դիւցազնական շիրիմ» դրաման (բանաստեղծական), որը և լաւ ընդունելութիւն է գտնում Քրիստինիայի թատրոնում, այնպէս որ նա

հրաւիրուում է Բերգէն իբրև ռեժիսոր և թատերագրող։ Բերգէնում Իբսէնը մնում է վեց տարի, ուր գրում է «Տիկին Ինգէր», «Օլաֆ լիլիէկրան» ու Սոլհաուգի տոնը» դրամաները։

1857-ին Իբսէնը, իբրև արդէն բաւական յայտնի դրամատուրգ, հրաւիրուում է Բրիտինիա, իբրև «Նորվէգական թատրոնի» կառավարիչ. այս արդէն նշանաւոր պաշտօն է, ուր Իբսէնը հնարաւորութիւն ունի բեմական կեանքը հենց բեմի վրայ ուսումնասիրել։ Այստեղ նա մնում է հինգ տարի գրելով երեք նոր դրամաներ «Հիւսիսային զօրարշաւ», «Սրրոյ կատակերգութիւն» և «Գանֆառանգներ»։ 1862 թուին, Նորվէգական թատրոնը անանկանում է և Իբսէնը մնում է առանց պաշտօնի, կատարեալ զուրկ և նիւթական միջոցից, այնպէս որ ստիպուում է մաքսատան պաշտօն որոնել։ Բայց և այստեղ երկար չի մնում։ Քաղաքական կուսակցութիւնները խռնուում են իրար և Իբսէնը զզուած ու հոգեպէս բաւական տանջուած, 1864-ի գարնան ստիպուած է լինում հեռանալ Նորվէգայից։ Նա ապրում է սկզբում Հռովմում, ապա Դրէզդէն, Միւնխէն և այլ կենդրոններում։ «Կամաւոր աքսորման» այդ ժամանակաշրջանում նա մի երկու անգամ այցելում է Սկանդինաւեան թերակղզին, բայց վերջնականապէս վերադառնում ու հաստատուում է Քրիստինիայում միայն 1867-ին։

Արտասահմանեան ճոխ կեանքը, նոր շփումները աւելի է քեղմնուորում Իբսէնի միտքը և նա շարադրում է սկզբում երեք նշանաւոր դրամաներ՝ «Պիէր Գիւնտ» «Բրանդ» և «Կայսրն ու գալիլիացին»՝ երկու մասերով, որը և ծաւալով նրա ամենամեծ երկն է։ Ապա հետզհետէ լոյս են տեսնում—«Նորա», Ուրուականներ», «Հասարակութեան նեցուկները», «Դոկտոր Շտոկման», «Վայրի բադը», «Հեդդա կաբլէր», «Ծովի տիկինը», և այլն և այլն։

1885-ի ամառը Իբսէնը այցելում է իր սիրած հայրենիքը, ուր կեանքը այլ ևս բարեփոխուել, կրթուել ու կանոնաւորուել է։ Կեանքը այլ ևս այնպէս մանր չէ, կուսակցութիւնները չեն շահագործում հասարակութեան, և մարդիկ այլ ևս այլասերուած չեն, ինչպէս տարիներ առաջ, երբ երկրի ազգաբնակութիւնը բաղկացած էր ոչ թէ մարդկանցից, այլ «երկու միլիոն չներից ու կատուներից»։ Քաղաքական կուսակցութիւնները արդէն կազմակերպուել, գոյն են ստացել, նոյն իսկ մաքուր գաղափարի դրօշակ է ծածանուում։ Այս ամենը փոքր ինչ մխիթարական է, բայց և մի շարք յիշողութիւններ են վերակենդանանում Իբսէնի մէջ։ Նա կրկին կանգ է առնում կուսակցական պայքարի վրայ

և ահա 1886-ին լոյս է տեսնում մի նոր դրամա՝ «Ռոսմերսհոլմ», նրա ամենանշանաւոր երկը։ Այս այն հատիկ դրաման է, որի մասին քննադատական աշխարհում այնքան տարբեր կարծիքներ երևան եկան. շատ-շատերը չէին հասկանում այս դրաման, իսկ միւսները իրենց քննադատութեան վերջը իբրև եզրակացութիւն դնում էին մի մեծ հարցական։

Անցեալ ամառուայ սեպտեմբերին, 1905-ին, Հալլէի համալսարանի փիլիսոփայութեան պրոֆէսոր Ալուաս Ռիլը, մի շարք դասախօսութիւններ ունէր «ժամանակակից դրամայի» մասին, ուր խօսելով Մետերլինգի ու Դ'Անունցիոյի մասին, խորագէտ փիլիսոփան ընդարձակ քննութեան առաւ մանաւանդ Իբսէնի դրամաները։ Նա առանձնապէս կանգ առաւ Rosmersholm-ի վրայ, վերլուծեց նրան մանրամասն ու գիտնականօրէն եզրակացութեան գալով, անուանեց այդ երկը Իբսէնի գլուխ գործոց։ Պէտք էր տեսնել այն մեծ ոգևորութիւնն ու ազմուկը, որ տիրեց Աուդիտորիայում վեց հարիւրից աւել հանդիսականների մէջ։ Անչափ ցաւալի է, որ առ այժմ այդ դասախօսութիւնները առանձին գրքով չի հրատարակուած։

Իբսէնի մասին եղած գրականութիւնը խիստ մեծ ու ընդարձակ է, առանձնապէս Գերմանիայում, ուր նրան աւելի շուտ հասկացան ու յարգեցին, քան միւս երկրներում։ Իբսէնի գործունէութեան իբրև լաւ ուսումնասիրողներ կարելի է անուանել Է. Ռայխին. Լ. Բէրգին և այլն, բայց մանաւանդ Դ. Բրանդէսին, որը, ըստ մեզ, մեկնել է Իբսէնի ամենաճիշտ նշանակութիւնը։

1899-ին Իբսէնը հրատարակել է իր վերջին երկը «Երբ մենք մեռածներս սթափուենք», որի հայերէն թարգմանութիւնը գերմաներէնից կհրատարակենք «Լումայում» առաջիկայ համարից։ Սա մի դրամատիքական էպիլոգ է, այսինքն վերջաբան, որ և դժբախտաբար դարձաւ Իբսէնի գործունէութեան վերջաբանը։ Ծերունի Իբսէնի այս վերջին երկը գերազանց ստեղծագործութիւն չէ, բայց և այնպէս, շնորհիւ չօշափած լուրջ խնդիրների, առանձին ուշադրութեան առնուեց, մանաւանդ որ հերոսի ներքին աշխարհը արտացոլում է հեղինակի անձնական կեանքը։

Իբսէնի դրամաներից առանձին ազմուկ հանեց և «Նորան»։ Կանանց հարցի, նրանց կրթութեան, դաստիարակութեան խնդիրն է այդտեղ չօշափուած, սակայն դրամայի լուծումը բաւականութիւն չէր տալիս նրբազգեաց հասարակութեան մանաւանդ այն շրջանին, որոնք հումանիստական կրթութեան կողմնակից են։ Այդ տեսակ վերջաւորութիւն անմիտ է համարում։ Լսում էր խիստ տրտունջ, ուժգին բողոք, ազմուկ, այնպէս որ «Նորան»

սկսեց դադարել բեմի զոհդ լինելուց։ Վերջերս պիջանելով Վիեննայի թատրոնի կառավարչի գիմումին, Իբսէնը փոխեց «Նօրայի» այդ անհաճելի վերջաւորութիւնը։ Գիտակցման եկած Նօրան այլ ևս չի հեռանում տնից, այլ յանուն իր երեխաների սիրուն պիջանում է ամուսնուն ու մնում զաւակների մօտ։ Սակայն այս փոփոխութիւնը կատարելով հանդերձ, հեղինակը աւելացնում է, որ ինքը մնում է իր նախկին կարծիքին։

1898-ի մարտի 20-ը Նորվէգիայի համար ազգային տօն էր։ Ժողովուրդը ցնծութեամբ տօնում էր Ծերունի դրամատուրգի 70-ամեակը։ Այդ յոբելեանին մասնակցում էր և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։

Այժմ Իբսէնը այլևս կենդանի չէ։ Նա կնքեց իր մահկանացուն 78 տարիքում։

Իբսէնի դրամաները չնորհիւ իր չօշափած խնդիրների թարմութեան և ուժգնութեան, դարձան ընդարձակ յայտնութիւն ու ընդունելութիւն։ Նրա երկերը թարգմանուած են համարեա բոլոր կրթուած լեզուներով։ Մի քանիսը հայերէն ևս։ Իբրև նատուրալիստ նա իրական կեանքի մանրակրկիտ նկարիչ չէր միայն. նա և խոր հոգեբան էր, և քննադատող և ուսումնասիրող և հրապարակախօս։ Այս ամենը նրբութեամբ ու հանճարեղ կերպով միացնում էր նա իր դրամաների մէջ, ահա նրա հռչակի աղբիւրը։ Եւ նա դեռ շատ երկար կապրի...

Ց. ԲՈՋԻԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մոսկուա. Բժ. Ս. Շահնազարեանց.— Ստացանք Ձեր «Դպրոցական հարցեր» և «Կրթութեան— դաստիարակութեան արտաքին միջոցները ժողովրդական դպրոցում» յօդուածները։ Կկարդանք և մեր որոշումը կ'յայտնենք։

Սմրղանդ. Mars. Ձեր հետաքրքրական յօդուածը ստացանք, լոյս կտեսնի միւս համարում։

Կ. Պոլիս, Մ.—Ստացանք Ձեր նամակը և կարգադրեցինք։

Շուշի. Յ. Խանլարեան. Բանաստեղծութիւնները ստացանք։

«Արշալուսի» և «Աշխատանքի» խմբագրատանը, Սալման—Ստորակէտին.— . . . :

Քարվանը կը քոչէ։

Հ. Նախիջևան. Ա. Մ.—Սալմանի մասին Ձեր տուած յայտնագործութիւնը կարդացինք։ Այժմ մեզ համար ամեն ինչ պարզ է։ Նա կատարեալ իրաւունք ունի որոշ անձանց Դուսա ուղարկել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅՈՅՍ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում 3 ր., կէս տարուանը 1 ր. 50 կ., ամիսը 30 կ.։ Ռուսիայում՝ 4 ր., կէս տարուանը 2 ր., ամիսը 40 կ.։ Արտասահմանում 10 ֆրանկ։ Առանձին համարը Թիֆլիսում 7 կ., Թիֆլիսից դուրս 9 կ.։ Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюстрированнаго журнала «Уйсъ», Сурпъ-Нишанская ул., № 11. Թիֆլիսում բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։ Տարեկան բաժանորդները ստանում են «Անիի կործանումը» պատմական վէպի I մասը ձրի։

Ծրագիր. 1) Պետական կարգադրութիւններ. 2) Առաջնորդող յօդուածներ. 3) Քրոնիկոն. 4. Թղթակցութիւններ ամեն երկրներից. 5) Ֆէլիէտոն. 6) Բանասիրական. 7) Քաղաքական բաժին. 8) Մամուլի տեսութիւն. 9) Թատրոն և երաժշտութիւն, 10) Մահացուցակ. 11) Մատենախօսութիւն. 12) Գիտութիւն և արուեստ. 13) Տեղեկատու և 14) Յայտարարութիւններ։

Խմբագիր-հրատարակիչ՝ Բագրատ Ալվազեանց։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԴԻՒՑ Ա. Ռ. ԱՂԱՆԵԱՆՑ

Մօս ապագայում Թիֆլիսում կսկսենք հրատարակել

ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՆՐԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԸ

եւ ՀԱՅՐԵՆԻՔ շաբաթաթերթը

հետեւեալ ծրագրով

1. Պետական կարգադրութիւններ։ Հեռագիրներ։
2. Առաջնորդող յօդուածներ հանրային հարցերին վերաբերեալ։
3. Ներքին տեսութիւն։
4. Արտաքին տեսութիւն։
5. Ֆէլիէտոն։
6. Դպրոց և ժանկավարժութիւն։
7. Մաժուլի տեսութիւն։
8. Մատենագիտութիւն և գրախօսութիւն։
9. Գեղեցիկ գրականութիւն և ճանապարհորդութիւններ։
10. Գիտութիւն և արուեստ.
11. Թատրոն և երաժշտութիւն։
12. Օրագրութիւն։
13. Թղթակցութիւններ։
14. Արդիւնաբերութեան տեսութիւն։
15. Տեղեկագիր։
16. Խմբագրութեան պատասխաններ։
17. Յայտարարութիւններ։
18. Պատկերներ և ծաղրանկարներ։
19. Զանազան յաւելուածներ առանձին գրքոյկներով։

ԲԱԺՆԷԳԻՆ

օրաթերթի		շաբաթաթերթի
Տարեկան 6 ռուբլի	. .	3 ռուբլի
6 ամսուան 3—50 կ.	. .	1—50 կոպ.
3 « —1—80—	. .	—75 »
1 « —75—.	. .	—25 »
առանձին համարը 3 կոպէկ.	. .	7 »
Արտասահման՝ տարին 20 ֆրանք.	. .	տարին 10 ֆրանք

Խմբագիր՝ Գիւտ ա. ք. Աղանեանց
Հրատարակիչ՝ Օր. Նուարդ Աղանեանց

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Полицейская, 7.

Թէ օրաթերթի և թէ շաբաթաթերթի հրատարակութեան վերաբերմամբ կտանք առանձին ծանուցում։

1906 ՏԱՄՆԵՄԻՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1906

Բացուած է բաժանորդագրութիւն

ԼՈՒՄԱՅ

Գրական, բարոյական, պատմական եւ հանրային

ԱՄՍԱԳՐԻ

ԼՈՒՄԱՆ ՅԻՆՆՕՒԱՐԻՑ ՀՐՅԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԵՏԵՒԵՍԱԼ ԼՈՒՍԱԿԱՏԱՒՈՐ ԾՐԱԳՐՈՎ

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ոտանաւորներ՝ այլ և կենսագրութիւններ:
2. Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագրեր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագիրներ:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենաբանութիւն և կրիտիկա գրական երկերի:
6. Ներքին տեսութիւն:
7. Քաղաքական տեսութիւն.
8. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից:
9. Խմբագրութեան պատասխաններ:
10. Ցայտարարութիւններ:

«ԼՈՒՄԱՅ»-ին կաշխատակցեն մեր հետեւեալ աշխատակիցները.—Օր. Նուարդ Աղանեան, ս. ս Զապել Հրիլեկարեան, Տիրուհի Գոռանեան, պ. պ. Աբիսողոմ Յովհաննիսեան, Ատրպետ, Արշակ Շրիլեկարեան, Արշակ Հոպանեան, Բենիկ Վարդապետ, Դար. Եղիբարեան, Գիորգ Ամարոնեան, Գրիգոր Վանցեան, Երուանդ Զահազիզ, Իսահակ Յարութիւնեան, Իւրիյ Վեսելովսկի, Լեւոն Մանգասէ, Կարապետ Գոռանեան, Մրսաս Բերբերեան, Մրսակ Մուսիկեան, բժ. Մ. Առաքեան, Միքայել Թամամշեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մկրտիչ Լ. Ղազարեան, Մուրացան, Մուշէ Կ., ԱԱԱՆ, Մ. Շովրեան, Մ. Շուռ, Յովհաննէս Յովհաննիսեան, Յովհաննէս Մաղխասեան, Յովհաննէս Բոգիսեան, Ն. Յարոյ, Նիկ. Քարամեան, Զիրվանզադէ, Պէրա Պոշեան, Սարգիս Քամանչեանց, Ստեփան Թաբրիզեան, Վրդանէս Փափազեան, Տ. Կ., Քաջբերունի, Քենուսէր, ***, Յար. Թումանեան եւ այլն եւ այլն:

Տարեկան բաժանորդագրեալն է Ռուսաստանում 8 ռուբլի, եւ տարուանը՝ 5 ռուբլի, իւրաքանչիւր համարը՝ մի ռուբլի, Արտասահմանում 27 Ֆրանկ:

Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումա»ի խմբագրատանը Պոլիցեյսկի 7, և Կենտրոնական գրավաճառանոցում. իսկ գաւառներում մեր գործակալների մօտ:

Ցայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція ежемѣсячнаго журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „LOUMA“.

Խմբագիր-Հրատարակիչ ԴԻՈՒԹ Ա. ՊԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ